




ԶՄԻՍԾԻՆ

1980

Ա



Լ Է
ՏԱՐԻ


ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

ՅԻՆԻՄԱՆ

1980



ՀՐԱՄԱՆԱԻ

S. S. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՂԱՓԱՌ ԵՒ ՍՐՈՍՉՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈՋ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ
ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(1980 թ. հունվարի 6)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրեցյալ հավատացյալ ժողովուրդ Մեր որ ի Հաջաստան եւ որ ի սփյուռքս աշխարհի,

Ողորմութեամբ բարին Աստծուն, բոլորս հուսացալ սրտերով վերստին ողջունում ենք արշալույսը նոր մի տարվա, 1980 փրկչական թվականի:

Մենք ողջունում ենք նոր տարին, մենք ավետիսովը Քրիստոսի Սուրբ Ծննդյան, հոգեկան մխթարութեամբ որ դուք բարեպաշտ զավակներդ մեր առաքելական Մայր Եկեղեցու, այս տարի եւս դիմավորելու եք սույն բարի լուրը, ամենքդ հավատքով թե Հայրը մեր երկնավոր Իր միածին Որդին է առաքել երկիր՝ բերելու աշխարհին պատգամը փրկարար՝ «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Այո, Աստված խնայեալ սիրեց աշխարհը եւ մարդկանց, որ Իր Որդին առաքեց երկիր, որպէսզի նա բոլորին ցուց տա ճանապարհը հոգիների փրկութեան, ցուց տա ճանապարհը երկնքի շաքայութեան:

Իսկ մենք առաքյալը պատգամում է՝ «ոչ է աքթայութիւն Աստուծոյ կերպուր եւ ըմպելի, այլ սրդաբութիւն եւ խնդութիւն եւ խաղաղութիւն ի Հոգին Սուրբ» (Հռոմ. ԺԴ. 17):

Ահա այսպէս, այս գիտակցութեամբ է որ բոլորս պետք է դիմավորենք ավետիսը Աստվածորդու հրաշալի ծննդյան, եւ նույն այս գիտակցութեամբ է, որ պետք է գիտեճանք վարել մեր կշանքը երկրի վրա, մեր սրտերը միշտ լեցուն՝ արդարութեան, խաղաղութեան, խնդութեան եւ սիրո զգացումներով դեպի բոլոր մարդիկ անխտիր, լինեն նրանք մեզ մոտիկ կամ մեզանից հեռու, լինեն նրանք մեզ հարազատ կամ անծանոթ, լինեն նրանք մեզ նման կամ տարբեր քան մենք:

«Քանզի ամենեքին որդիք Աստուծոյ էք հաւատովք ի Յիսուս Քրիստոս» (Գաղ. Գ. 26): Այո, այս սուրբ պահին, երբ մանուկ Հիսուսի ծննդյան հրաշալի տեսիլքը լուսավորում է ձեր միտքն ու սրտերը՝ «հագեք ձեր վրա՝ գութ, ողորմություն, քաղցրություն, խոնարհություն, հեզություն, համբերատարություն, հանդուրժելով միմյանց, ներելով միմյանց եթե մեկը մյուսի դէմ գան-

գատ ունի, ինչպես Աստված Քրիստոսով ներեց մեզ, նույն ձևով արեք և դուք: Եվ այս բոլորի վրա թող տարածվի սերը որ կապն է կատարելության: Եվ ձեր սրտերում թող հաստատվի Քրիստոսի խաղաղությունը, որին կոչված եք բոլոր իբրև մեկ մարմին» (Կողոս. Գ. 12—15):

Սիրելիք Մեր, ուղղեցեք ձեր հալացքները դեպի հորիզոնները մեր երկրագնդի, ու պիտի տեսնեք գրեթե ամենուրեք խոռվաճուղի վիճակներ, տագնապալի «բյուռահեղ ընդհարումներ: Նաև սպառազինությանը խելամուղոր մրցավազք, որ սպառնում է համայն մարդկությանը աշխարհակործան մի նոր պատերազմով:

Ահա թե ինչու մեր օրերին, հեռզինուտ ավելի ու ավելի այժմեական և հրամայական է դառնում կենսագործումը երկնային պատգամի՝ «չերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Խաղաղ ու համերաշխ համակեցությունը ժողովուրդների, պետք է նկատել «ամեն բանից վերը» և գերագույն պայմանը մարդկության ոչ միայն երջանկության, այլ պարզապես նրա գոյատևման:

Այս իրադրության մեջ, արդար կլինի որ մտահոգվեն առավելապես փոքր ժողովուրդները, որոնք մի հարվածով իսկ կարող են ամբողջապես բնաջնջվել, հետք իսկ չթողնելով իրենց ետևում:

Մենք, հայերս, իբրև եկեղեցու ժողովուրդ, մեր համրանքով ու աշխարհագրական դիրքով, կարող է պատահել որ Աստված մի աբասցև, նման ճակատագիր ունենանք: Մենք հայերս այո, որ անավոր փորձառություններ ունեցանք 1915-ի ցեղասպանության շղթերգության: Այս գիտակցությամբ է որ Մենք իբրև Հայրապետ Հայոց պիտի աղոթենք ու պիտի քարոզենք ու պիտի գործենք՝ վասն խաղաղության ամենայն աշխարհի, վասն սիրո միություն և միական համագործակցության մեր ժողովրդի բոլոր զավակների, որ ի հայրենիս և որ հարտասահման:

Հայ ժողովուրդը և նրա Մայր Եկեղեցին, անվարան իրենց բախտը կապել են խաղաղության ուժերի հաղթանակի հետ, զինաթափման ու միջազգային համերաշխ գործակցության գաղափարների կենսագործմամբ:

Թող լինի խաղաղություն աշխարհին համայն: Թող լինի խաղաղություն մեր մայր երկրի տահմանների վրա:

Նաև խաղաղություն և անասան միասնություն մեր ժողովրդի ազգային-եկեղեցական կյանքում, վերածնված մայր հայրենիքի անվտանգության հրամայականի գիտակցությամբ:

Այո՝ թող խաղաղություն լինի աշխարհում, որպեսզի «մեր քաջ որդվոց սուրբ արյունով» մահվան անդունդից փրկված ու վերածնված մեր մայր երկիրը, շարունակի այս արևի տակ ապրել, աճել ու է՛լ ավելի ծաղկել եղբայր ազգությունների մեծ ընտանիքում, աճել ու ծաղկել, իր արդար վառուակով, իր ազգային հանճարով, իր ապագայի նկատմամբ վառ ու պայծառ տեսիլքներով:

Հիմնավորք մեր մայր հողը կենսատու, նախնյաց մեր լույս հավատքը փրկաբար, թող լինեն բոլոր հայերի համար անխորտակ վե՛մ ու ապավեն:

Քրիստոսատես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, սուրբ գրական Արարության Հայոց աշխարհից, բերում ենք ձեզ բոլորիդ հոգևորոգ ավետիսը Քրիստոսի Սուրբ Մենդղան, Մեր սրտից բխած ամենաբարի մաղթանքներով և օրհնություններով հայրապետական:

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»: «Փառք ի բարձունս Աստուծոյ»: Ամեն:

Քույր Եկեղեցիներ



ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿԶԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ԲՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ
ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոռմեական կաթողիկ եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ (Հոռմ),
Կոստանդնուպոլսի հունաց Տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԵՄԵՏՐԻՈՍԻՆ (Ստամբուլ),
Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԻՄԵՆԻՆ (Մոսկվա),
Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի հունաց ուղղափառ եկեղեցու
Պատրիարք, Նորին Սրբություն ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ-ԻՆ
(Ալեքսանդրիա),
Երուսաղեմի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Ա-ԻՆ (Երուսաղեմ),
Ղաթի ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԵՆՈՒԴԱ Գ-ԻՆ (Ալեքսանդրիա),
Անտիոքի և համայն Արևելքի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք,
Նորին Սրբություն ԷԼԻԱՍ Դ-ԻՆ (Դամասկոս),
Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ԹԵՔԼԵ ՀԱՅՄԱՆՈԹԻՆ (Ադիս Աբեբա),
Հնդկաստանի և Արևելքի մալաբար եկեղեցու կաթողիկոս, Նորին

Սրբություն բԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՆՈՍ Ա.-ԻՆ (Փոթայամ),
 Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն
 ԻԼԻԱ Բ.-ԻՆ (Թրիլիսի),
 Ռումին օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
 ԺՈՒՍՏԻՆԻՆ (Բուխարեստ),
 Բուլղար օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
 ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա),
 Անտիոքի և համայն Արևելքի հույն կաթողիկ եկեղեցու Պատրիարք, Նորին
 Սրբություն ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԻՆ (Կամասկոս),
 Անտիոքի ասորի կաթողիկ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
 ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵԿ Բ.-ԻՆ (Բելլոս),
 Քենթրերիի արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և
 միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
 ՖԲԵԳԵՐԻԿ ԳՈՆԱԼԳ ԿՈԳԱՆԻՆ (Լոնդոն),
 Աթենքի և համայն Հելլադայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
 ՍԵՐԱՖԻՄԻՆ (Աթենք),
 Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն
 ՀԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),
 Վարչավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
 ՎԱՍԻԼԻՆ (Վարչավա),
 Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին
 Գերաշնորհություն ԳՈՐՈՖԵԻՆ (Պրագա),
 Հայ կաթողիկե եկեղեցու Պատրիարք, Նորին Ամենապատվություն
 ՀՄԱՅԱԿ-ՊԵՏՐՈՍ ԿԵՏԻԿՅԱՆԻՆ (Բելլոս),
 Կիպրոսի արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
 ԽՐԻՍՈՍՏՈՍՈՍԻՆ (Նիկոզիա),
 Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար
 դոկտ. ՖԻԼԻՊ ՓՈԹԸՐԻՆ (Ժնև),
 Վատիկանի պետական քարտուղար, Նորին Ամենապատվություն
 կարդինալ ԺԱՆ ՎԻԼԼԻՅՆԻՆ (Վատիկան),
 Վիեննայի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
 կարդինալ ՖԲԱՆՅԱՅՈՆԻՆ (Վիեննա),
 Փարիզի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
 կարդինալ ՖԲԱՆՍՈՒԱ ՄԱՐՏԻՆ (Փարիզ),
 Լիոնի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ
 ԱԼԵՔՍԱՆԳՐ ՌԸՆԱՐԻՆ (Լիոն),
 Քրիստոնեական միության քարտուղարության նախագահ, Նորին
 Ամենապատվություն կարդինալ ԺԱՆ ՎԻԼԲԱՆԿՍԻՆ (Վատիկան),
 Մարսելի արքեպիսկոպոս, Գերաշնորհ
 ՌՈԺԵ ԷԶԵԳԱՐԱՅԻՆ (Մարսել),
 Լատվիական ՍՍՀ ավետարանական-յութերական եկեղեցու արքեպիսկոպոս,
 Նորին Գերազանցություն Յ. Պ. ՄԱՏՈՒԼԻՍԻՆ (Ռիգա),
 Էստոնական ՍՍՀ ավետարանական-յութերական եկեղեցու արքեպիսկոպոս,
 Նորին Գերազանցություն ԱԼՖԵԴ ՏՈՒՄԻՆԳԻՆ (Տալլին),
 Միջին Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միության նախագահ,
 Վերապատվելի ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ (Բելլոս),
 Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ
 ՄԱՌԻՐԻԼԻՆ ՍԱԿԿԻՆ (Երուսաղեմ),

Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի գլխավոր քարտուղար
դոկտ. ԿԱՐՈՒԻ ՏՈԹԻՆ (Պրագա),
Իրաքի պապական նվիրակ, Գերաշնորհ

ԺԱՆ ՌՅՈՒՊԻՆ (Բաղդադ),

Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր

ՊՈՂՈՍ վարդապետ ԱՆԱՆՅԱՆԻՆ (Վենետիկ),

Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր

ԳՐԻԳՈՐԻՍ վարդապետ ՄԱՆՅԱՆԻՆ (Վիեննա),

Վերապատվելի ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԵԼՎԱԾՅԱՆԻՆ (Մարսել),

Վերապատվելի ՎԱՀԱՆ Հ. ԹՈՒԹԻԿՅԱՆԻՆ (Նյու Յորք),

Աստված մեր բարյաց պարգևատու, մեզ վերստին խթանացնում է ող-
ջունելու Նոր տարվա արշալույսը, Իր միածին Որդու Սուրբ Ծննդյան ավե-
տիսով:

Ավետիս մեծ և սքանչելի, բոլոր ազգերի և բոլոր ժամանակների հա-
մար, որովհետև ծնվեց մեր Փրկիչը Քրիստոս, ցույց տալու համար համայն
մարդկությանը ճանապարհը՝ հավիտենական կյանքի երկնքի արքայության
մեջ ու ճանապարհը՝ մարդկանց խաղաղ համակեցության և փոխադարձ
հաճության երկրի վրա:

Մեր օրերի աշխարհի խռովահույզ կացությանց առաջ կանգնած, մենք՝
քրիստոնյաներս, զրահված մեր հավատքի լույսով և Սուրբ Ծննդյան երկ-
նային պատգամով, պարտավոր ենք անձամբույթ աղոթել ու գործել, որ
երկրի վրա տեսալիս թագավորեն փոխադարձ բարի կամեցողությունը և
խաղաղ գործակցությունը մարդկանց և ազգությունների միջև:

«Զի նա է խաղաղություն մեր՝ որ արար գերկուսեան մի և զմիջնորմն
ցանկոյն քակեաց՝ զթշնամութիւն ի մարմնի իջրում» և «եկն աւետարանեաց
խաղաղութիւն ձեզ, հեռաւորաց և խաղաղութիւն մերձաւորաց» (Եփես. Բ
14—17):

Մեր սիրտը լեցուն մեր Փրկչի Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան ուրա-
խությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Ձեզ ենք առաքում Մեր եղբայ-
րական սիրո հարգալիր ողջույնը՝ մնալով մշտապես աղոթող, որ Դուք եր-
կար տարիներ շարունակեք Ձեր սրբազան առաքելությունը ի փառս ձեր
պատմական մեծ եկեղեցու և ի հոգևոր կյանքի շինություն ձեր հավատացյալ
ժողովրդին:

Թող հրաշալի Սուրբ Ծննդյան շնորհները առատապես իջնեն աշխարհի
վրա, և Քրիստոսի սերը լուսավորի բոլոր մարդկանց ու բոլոր ազգերի
կյանքը ու ջերմացնի նրանց սրտերը:

Թող հավետ օրհնյալ լինի Ծնունդը մեր Փրկչի Հիսուս Քրիստոսի.
ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Ամանորի և Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան շնորհավորական գրություններին ի պատասխան ստացվել են բույր եկեղեցիների հոգևոր պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների՝ ղեկավարների՝ այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պաշտոնորեն արտահայտվում է քրիստոնեական եղբայրության ու համագործակցության սրտագին ոգին բույր եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների միջև:


Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:





ԱՄԵՆԱՅԻ, ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՅԳԻՆ, Ա.Ի. ԳԱՀԱԿԱՆՈՒԹՅԱՆ 20-ՍՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ ԱՐԵՎԱՏՅԱՆ ԵՎՈՐՊԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
 ՊԱՏԿԱՆԱԿ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԲԵՊԻՏԿՈՐՈՍ ՄԱՆՈՒԹՅԱՆԻ ՆԱԽԱՑԵՐՆՈՒԹՅԱՆ ՖՈՏՈԳՐԱԿԻ ԿՈՂՄԻՑ ԵՄԻՆ
 ՍՐԲՈՒԹՅԱՆԸ ՄԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑԻ ԳՈՐԳ-ԿՈՐԻՆ ԶԵՆԱԿՈՐԾԸ, ՈՐԸ ՊԱՏԿԱՆԱԿՈՒՄ Է Ս. ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ ՏԵՄԻՆՔԸ

(Գործված՝ Հրապարակում, 1977 թ., բնական չափերը՝ 5 մ × 2 մ)



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԵՐԻ ԱՌԹՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ
ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ
ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

Աստված մեր բարյաց պարգևատու, մեզ վերստին կարծանացնե ողջունելու Նոր տարվան արշալույսը, իր միածին Որդվուն Սուրբ Ծննդյան ավետիսով:

Ավետիս մեծ և սքանչելի, բոլոր ազգերու և բոլոր ժամանակներու համար, զի ծնավ Փրկիչը մեր Քրիստոս, ցույց տալու համար համայն մարդկության՝ ճանապարհը հավիտենական կյանքին՝ երկնքի արքայության մեջ ու ճանապարհը մարդոց խաղաղ համակեցության և փոխադարձ հաճության երկրի վրա:

Մեր օրերու աշխարհի խռովահույզ կացությանց առաջ կանգնած, մենք քրիստոնյաներս, զրահված մեր հավատքի լույսով և Սուրբ Ծննդյան երկնային պատգամով, պատրիճը անձանձրութե աղոթել ու գործել, որ երկրի վրա տևապես թագավորեն փոխադարձ բարի կամեցողությունը և խաղաղ գործակցությունը մարդոց և ազգություններու միջև:

Մեր հորդորն է նաև ուղղյալ մեր Մայր Եկեղեցիին ու համայն մեր հավատացյալներուն, որ ապրին և գործեն սիրով միաբան, մեկը մյուսին հնազանդ՝ երկյուղովը Քրիստոսի:

«Զի նա է խաղաղություն մեր՝ որ արար զերկրսեան մի և զմիջնորմն ցանկոյն քակեաց՝ զթշնամութիւն ի մարմնի իրում» և «եկն աւետարանեաց խաղաղութիւն ձեզ, հետաւորաց և խաղաղութիւն մերձաւորաց» (Եփես. Բ 14—17):

Մեր սիրտը լեցուն Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի Սուրբ Ծննդեան ուրախությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն ձեզի բոլորիդ կրեւերնք Աստուծո օրհնությունը և Մեր հայրական սերն ու ամենաբարի մաղթանքները բոլորիդ հոգեւէն առաքելության լիակատար հաջողության համար:

Ձեզի մեծ տվեախ՝ «Քրիստոս ծնաւ և յաշտեցաւ»:

«Ընորնք հրաշալի ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Լոյցին ընդ ձեզ և ընդ ամենեւեանդ», ամեն:

Նդրադրական սիրով ի Քրիստոս՝

Վ. Ա. Զ. Գ. Ե. Ն. Ա.


ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՐԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Ա. ԷՃՄԱՆՄԵՐՆ

“

Ամանորի և Սուրբ Ծննդեան տոների առթիւ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաշեղմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիւ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների զանալայներից, արտաստամանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ
ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՍՏԻԾԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ
ՆՈՐ ՏԱՐՎԱ ԱՌԹԻՎ

ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ԲԱԲԿԵՆ ՍԱՐԿԻՍՈՎԻՆ,
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻՆ

Երևան

Հանում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ուրախ արտով շնորհավորում ենք
Ձեր Նոր տարին՝ ջերմ մաղթանքներով, որ այն լինի համայն աշխարհի
համար խաղաղության և մեր հայրենիքի համար մոր մվաճումների տարի:
Յանկանում ենք նաև Ձեզ քաջառողջություն և մշտամորոգ ուժ ու
եռանդ՝ շարունակելու Ձեր հայրենաճվեր ազնիվ գործունեությունը:
Խորին հարգանք՝

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին

ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ,
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Երևան

Ուրախությամբ ողջունում ենք Ձեզ Նոր տարվա առթիվ և Սուրբ Էջ-
միածնից հղում ենք Ձեզ և Ձեր հարգարժան գործակիցներին ջերմ քարե-
մաղթություններ քաջառողջության և փայլուն հաջողությունների, մեր հայ-
րենի երկրի մշտական վերելքին ու ծաղկումին նվիրված Ձեր գործունեու-
թյան ճանապարհին:

Խորին հարգանք՝

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին

**ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ՌՈՒՐԵՆ ՊԱՐՍԱՄՅԱՆԻՆ,
ՆԱԽԱԳԱՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՌԸՆԹԷՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ**

Երևան

Նոր տարվա սեմին հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացնում ենք Ձեզ Մեր շնորհավորանքներն ու ամենաբարի մաղթանքները Ձեր արևշատության և մայր հայրենիքին նվիրված Ձեր գործունեության հաջողությունների համար:

Թող Նոր տարին ևս լինի աշխարհի բոլոր ազգերի համար փոխադարձ բարիկամեցողության և խաղաղ աշխատանքի տարի:

Խորին հարգանք՝

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ա. Էջմիածին

Ընդունեցեք իմ շնորհակալությունը Նոր տարվա առթիվ Ձեր շնորհավորանքի և բարի ցանկությունների համար: Իմ կողմից ևս ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ Նոր տարվա առթիվ:

Թող 1980 թվականը մեր հայրենիքի համար լինի հետագա ծաղկման, բարգավաճման ու երջանկության տարի, թող լինի խաղաղության տարի:

Ցանկանում եմ Ձեզ մեծ հաջողություններ խաղաղության, ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդման համար Ձեր ազնիվ գործունեության մեջ:

ԲԱԲԿԵՆ ՍԱՐԿԻՍՈՎ

ՀՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Երևան

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ, ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ա. Էջմիածին

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ Նոր տարվա առթիվ:

Հանեցեք ընդունել քաջատոկչության, բարօրության իմ լավագույն մաղթանքները:

Թող նոր տարին լինի մեր հայրենիքի բարգավաճման, ամբողջ աշխարհի խաղաղության, ժողովուրդների բարեկամության ամրապնդման տարի: Հարգանքներով՝

ՅԱԳԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Երևան

**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ**

Ս. Էջմիածին

Ամանորի առթիվ ընդունեցեք իմ ջերմ շնորհավորանքը և բարեմաղթությունները:

Թող նոր տարին նոր հաջողություններ բերի մեր հայրենիքին, ամրապնդի խաղաղությունն ու համերաշխությունը աշխարհի ժողովուրդների միջև, քաջատոհմություն Ձեզ:


Ձերդ Սրբություն, թող անսպառ լինի Ձեր եռանդը Ձեր հայրենամարդ գործունեությունում:

ՌՈՒԲԵՆ ՊԱՐՍԱՄՅԱՆ

**ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Երևան





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿՆԵՐ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՄԵՍՐՈՊ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՎԱՐԳԱՊԵՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՈՑ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՎԱԶԳԻՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՈՔՆ ԱԶԳԻՍ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ
ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ
ԷԶՄԻԱՇՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆԻ ՍԻՐՈՅ ՈՂԶՈՒՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՎԿԻՈՅ
Տ. Տ. ԽՈՐԵՆԱՅ ԱՌԱԶՆՈՅ, ՊԱՏՐԻԱՐԺԻՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ
ԵՐՈՒՍԱՂԵՍԻ Տ. ԵՂԵԷԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐԺԻՆ ՀԱՅՈՑ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՅ Տ. ՇՆՈՐՀՔԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ,
ՀԱՄՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԳԱՊԵՏԱՅ,
ՔԱԶԱՆԱՅԻՅ ԵՒ ՍԱՐԿԱԽԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ
ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՏՆԷԻՅ ԵՒ
ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ԺՈՂՈՎՐԹԵԱՆ ՀԱՅՈՑ

Բարին Աստուած մեր հայրերի Իր սրբաբար հովանին միշտ տաքածեալ
է պահում մեր Մայր Եկեղեցու վրայ ի Հայաստան և ի սփիտս աշխարհի,
ի հոգևոր շինութիւն հաճայն հալ հաւատացեալ ժողովրդի կեանքի:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին ի սկզբանե եղել ու մնացել է մինչև մեր օրերը միակ համազգային հարազատ Եկեղեցին ամենայն հայոց, խարսխուած Սուրբ Թադևոս և Սուրբ Բարթողիմէոս առաքելների քարոզութեան ու աստուածակառոյց Սուրբ Էջմիածնի վեմի վրայ, եկեղեցի, որ դարերի հոլովոյթով հետզհետեւ աւելի ու աւելի նոյնացել է մեր հիմնաւորց ազգի կեանքի ու հոգևոր մշակոյթի, նրա ապրումների, երազանքների ու մարտնչումների հետ:

Այսօր էլ նոյն մեր Մայր Եկեղեցին է, որ ամուր կանգնած իր պատմական առաքելութեան բարձունքի վրայ, շարունակում է լուսաւորել ճանապարհը մեր ժողովրդի ազգային կեանքի, հոգևոր մխիթարութիւն և ներշնչանք բաշխելով մաս նոր սերունդներին:

Զի «եթէ սկիզբն սուրբ է և զանգուածն, և եթէ արմատն՝ ապա և ոստքն» (Հռոմ. ԺԱ 16):

Մենք, իբրև առաջին սպասաւորը մեր սուրբ Եկեղեցու, Մեր սեպուհ սլարտքն ենք համարում միշտ և ամենքին վերյիշեցնել այս ճշմարտութիւնները և հրաւեր կարդալ մեր ազգի բոլոր զաւակներին՝ անաչալլ հաւատարիմ մնալ մեր մայրեանց Մայր Եկեղեցուն ու ապրել համախումբ նրա ապահով հովանու ներքոյ:

Այս հրաւերը փափագում ենք ուղղել այսօր մանաւանդ Կենտրոնական Եւրոպայի երկրներում բնակութիւն հաստատած Մեր հաւատացեալ զաւակներին և նրանց եկեղեցական համայնքներին, որոնք Մեր 10 մարտ 1971 թուակիր հմր. 701 հայրապետական կոնդակով յանձնուել էին հոգևոր խնամքին Արևմտեան Եւրոպայի հայրապետական պատուիրակութեան:

Այժմ, սակայն, ի նկատի ունենալով, որ այդ աշխարհագրական երկրամասերում մեր Եկեղեցու զաւակների թիւը հետզհետեւ աճել է վերջին տարիների ընթացքում, իբրև հետևանք Մերձաւոր Արևելքից դէպի այդ երկրները գաղթող հայերի, Մենք անհրաժեշտ ենք համարում և որոշում՝ Հայաստանեայց Եկեղեցու առաքելութեան մի նոր շրջան կեանքի կոչել 1980 յունուար ամսից սկսեալ՝ «Կենտրոնական Եւրոպայի հայրապետական պատուիրակութիւն» անուամբ, Աւստրիոյ մայրաքաղաքը՝ Վիեննան ունենալով որպէս կենտրոն, որը պետք է իր մէջ ընդգրկի Աւստրիոյ, Արևմտեան Գերմանիոյ, Արևելեան Գերմանիոյ և Շուեյտիոյ տարբեր քաղաքների համայն հայ հաւատացեալ ժողովուրդը և եկեղեցական համայնքները, դրանք կազմակերպելու ու հովուելու առաքելութեամբ, համաձայն Հայաստանեայց Եկեղեցու կանոնների ու հաստատուած կարգի, վերին իշխանութեան ներքոյ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետութեան:

Այսպիսով, Արևմտեան Եւրոպայի հայրապետական պատուիրակութեան իրաւասութեան ներքոյ մնում են Ֆրանսիայի հիւսիսային, կենտրոնական և հարաւային շրջանների հայ եկեղեցական համայնքներն ու Իտալիոյ, Ջուիցերիոյ, Հոլանտիոյ և Պելճիքայի հայ եկեղեցական համայնքները, բոլորը իբրև կենտրոն ունենալով Փարիզ մայրաքաղաքը, որ հաստատուած է հայրապետական Մեր պատուիրակը և առաջնորդը Փարիզի, իր աստիճանին և պաշտօնին յատուկ բոլոր կանոնական լիազօրութիւններով:

Սոյն Մեր կոնդակաւ, Կենտրոնական Եւրոպայի հայրապետական պատուիրակ ենք նշանակում Աւստրիոյ հոգևոր տեսուչ՝ հոգեւոր թ. Մեսրոպ ծայրագոյն վարդապետ Գրիգորեանին, որ իր եկեղեցագիտական պատրաստութեամբ, իր երկարամեայ հովուական ու վարչա-կազմակերպչական փորձառութեամբ և նուիրեալ ծառայութեամբ, վստահ ենք, թէ արժանաւոր-

քաղաքի պիտի ստանձնի կազմակերպումը և ղեկավարությունը իրեն վառ սնունդ շրջանի հայ եկեղեցական համայնքների, ի հոգևոր մխիթարություն հաստատեցեալ ժողովրդի:

Վերև յիշուած չորս երկրների հայ հաստատեցեալ Մեր զաւակներին, համայնքային վարչութիւններին և հայրենակցական, մշակութային հայկական միութիւններին սրտագին կոչ ենք ուղղում, որ սիրով ողջունեն հայրապետական պատուիրակ տ. Մեսրոպ հայր սուրբին, թե-թիկունք կանգնեն նրան և օգնեն բոլոր հնարատր միջոցներով, որպէսզի նրա ստաբիլութիւնը լիակատար յաջողութեամբ պսակուի:

Վստահ ենք նաև, թէ յիշեալ չորս երկրների պետական ու քաղաքային իշխանութիւնները և մեր բոլոր եկեղեցիները, քարկամեցողութեամբ ու եղբայրական զգացումներով տոգորուած, պիտի ողջունեն տ. Մեսրոպ ծ. վարդապետի նոր պաշտօնը, օժանդակելով նրա ստաբիլութեան կենսագործմանը: Սուրբ Էջմիածնից յղում ենք Մեր կանխապաշտ շնորհակալութիւնը և Աստուծոյ օրհնութիւնը պետական-քաղաքային բարձր իշխանութիւններին և բոլոր եկեղեցիների մեր հոգևոր եղբայրներին:

Թող Տէրը և Փրկիչը մեր Յիսուս Քրիստոս միշտ պահապան և օգնական մնայ Կենտրոնական Եւրոպայի համայն հայ հաստատեցեալ ժողովրդին, հայոց կրօնական համայնքներին ու հայկական բոլոր կազմակերպութիւններին անխտիր, որոնք կոչուած են եղբայրական համերաշխ համագործակցութեամբ բարձր պահելու հայոց Մայր եկեղեցու քրիստոնէական բառույթական ու մշակութային ստաբիլութիւնը:

«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի բո անշարժ պահեաւ և զերկրապազուսնուանդ բում սրբոյ պահեաւ ի խաղաղութեան»։ ամէն:

Մարգարէ Ռ.

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տրւաւ կոնգրեսի ի 2 յունուարի
1980 փեղակաւն ամի,
և ի տումարիս հայոց ՌԵԽԹ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀԻՐ, 994

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ԴԱԿԻԹ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՀԱԿԵԱՆԻՆ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՊԱՏՎԻՐԱԿ ՆԾԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ԴԱԿԻԹ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՀԱԿԵԱՆԻՆ,
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿԻՆ ՀԱՅՈՑ

ՀԱՐԱԽԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ

ՈՂԶՈՐՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ՊՈՒՆՈՍ ԱՅՐԷՍ

Տեղը և Փրկիչը մեր Քրիստոս Իր լոյս հովանին մշտապես տարածեալ կը պահէ Իր իսկ հիմնած մեր Մայր Աթոռի և մեր առաքելական Մայր Եկեղեցւոյ վրայ, միշտ մնալով մեզի բոլորիս և պահապան և օգնական:

Այդպէս է որ թէ ի Հայաստան և թէ ի սփիւռս աշխարհի, Հայաստանայց Եկեղեցին ուղիղ ճամբով կը շարունակէ իր պատմական հոգեշէն ազգապահպան առաքելութիւնը հետզհետէ առաւել պտղաւոր աւելնելով:

Մեր սուրբ Եկեղեցին իր այս հոգևոր առաջնութեան կը պարտի մաս իր հոգևոր սպասաւորներուն, ի մասնաւորի բարձրաստիճան Մեր եղբայրներուն, որոնք պատասխանատու աշխատանքի դիրքերու վրայ իրենց պարտքը Սուրբ Հոգւոյ ներշնչմամբ ի կատար կ'ածեն, իմաստութեամբ, անձնութեամբ և մշտանորոգ բարի եռանդով:

Դուք եւս, սիրեցեալ Սրբազան Հայր, այդ շնորհներով լիապէս օժտուած, կը ծառայէք մեր Մայր Եկեղեցիին երկար տարիներէ ի վեր, այժմ հասած Ձեր իմացական ու հոգևոր ուժերու լիութեան բարձունքին:

Արդ, արժան է որ Ձեզի դիմենք Տիրոջ խօսքերով՝

«Ազնիւ ծառայ և բարի, զի ի փոքրոյ հաւատարիմ եղեր, լիջիւր իշխանութիւն ունել ի վերայ տասն քաղաքի» (Լուկ. ԺԹ 17):

Մենք ժամանակը եկած կը նկատենք Ձեզի հրաւիր կարգալ առաւել պատասխանատու պաշտօն ստանձնելու եկեղեցական ծառայութեան աստուածահաճոյ ճանապարհին, զոր Դուք անձնութեամբ ընտրած էք իբրև Ձեր կեանքի ուղեցոյց ու նպատակ: Որով, գնահատելով Ձեր անձին մէջ հաւատարմութիւնը, լուսամիտ ու եռանդաշատ սպասաւորը մեր սուրբ Եկեղեցւոյ և անբասիր ու հաւատարիմ միաբանը Մայր Աթոռիս, այլ և ընդառաջելով Արգենտինայի հայոց եկեղեցական-ազգային կեդրոնական վարչութեան ու հաւատացեալ ժողովրդեան բաղձանքներուն, Ամենայն Հայոց Կաթողիկոսի Մեր իշխանութեամբ Ձեզ կը նշանակենք հայրապետական պատուիրակ Հարաւային Ամերիկայի, Ձեր եկեղեցական իրաւասութեան յանձնելով հոգևոր հովուութիւնը և առաջնորդութիւնը Արգենտինայի, Պրագիի, Ուրուկուայի և Վենեզուելայի հայոց, Ձեր սեպուհ պարտականութիւնը նկատելով սերտօրէն գործակցիլ տեղական եկեղեցական-ազգային մարմիններուն հետ, նախ վառ պահելու համար քրիստոնէական լոյսը հայ հաւատացեալ ժողովուրդի մէջ և ապա առաւել ամուր կանոնական ու կազմակերպչական հիմքերու վրայ դնելու՝ եկեղեցական, կրթական և ազգային մշակութային կեանքը Հարաւային Ամերիկայի հայոց, համազգային համերաշխ աշխատանքային պայմաններու մէջ:



Չե՛ր առաջնաները սրտոտը մկատեցէ՛ք, մաս եղբայրական սիրոյ յարերութիւններ մշակել Հարապիմ Ամերիկացի երկիրներու քոյր Եկեղեցիներու, յատկապէս Հոռմեական կաթողիկ մեծ Եկեղեցոյ բարձրաստիճան հոգեւորականներու հետ, արդիական Էկոմենիկ ոգիով, առաջնորդուելով քրիստոնէութեան տիեզերական եղբայրութիւնը ամրապնդելու աստուածահաճոյ գաղափարով:

Վստահ ենք մաս թէ Չե՛ր հոգեշէն առաքելութեան ճանապարհին, միշտ մետամոտ և նախանձախնդիր պիտի ըլլաք որ Չե՛ր առաջնորդութեան յանձնրուած Մե՛ր հաւատացեալ զաւակները ապրին ու գործեն իրեն կարգապահ, հաւատարիմ և շինարար քաղաքացիները իրենց քնակած երկիրներու, միշտ երախտապարտ ալն քոյր բարիքներուն և ազատութիւններուն համար զոր կը վայելեն, պետական իշխանութեանց կողմէ իրենց շնորհուած:

Թող քարին Աստուած միշտ մնայ Չե՛րդ Սրբազնութեան հզօրիչ ու մարտակից, և Սուրբ Հոգիով յուսատրել Չե՛ր կեանքի ու աշխատանքի ճամբան, պարգեւելով Չե՛զի մարմնոյ և հոգւոյ տոկոսնութիւն, անսպառ Էռանդ, անմուգելի սէր և միշտ յաղթող ոգի յաւատեւութեան:

«Եւ արդ՝ զմանդէս սիրոյ ձերոյ և զմերոյ պարծանացն վասն ձեր, ի դոցա ցուցչիք յանդիման ամենայն եկեղեցեաց» (Բ. Կորնթ. Ը 24):

«Եւ Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առաւելոյ ձեզ յուսով զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ» (Հռոմ. ԺԵ 13). ամէն:

Վաչագան

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տոսա կոնդակս ի 4 յունուարի
1950 փրկական ամի,
և ի տումարիս հայոց ՌՆԻԹ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ՀՄԲ. 1001

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԶԱՆԾՅԱՆԻՆ ԱՐԲՈՒԹՅԱՆ
ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԶԱՆԾՅԱՆԻՆ,
ԲԱՐԵՋԱՆ ԱՌԱՋՆՈՐԳԻՆ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ԱՌԱՐԱՒՈՅ,
ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՄՆԻ
ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Սիդնեյ


Բարին Աստուած Իր յուսապաւակ հովանիին տակ շէն ու պայծառ կը պահէ մեր եկեղեցիները, որոնք մշտապէս Սուրբ Հոգւոյ կենարար շնորհները կը բաշխեն իրենց Սուրբ Մեղանքներէն մեր հաւատացեալ ժողովուրդին ի Հայաստան և ի սփիտս աշխարհի:

Մենք հոգեպէս մխիթարուած ենք, որ մեր եկեղեցիները, հայ հաւատացեալ ժողովուրդին ծոցին մէջ իրենց ա՛յս առաքելութիւնը ի կատար կ'ածեն, մանաւանդ իմաստուն ու արթուն վերատեսչութեան ու առաջնորդութեան ներքն մեր բարձրաստիճան հոգևոր եղբայրներուն:

Սիրելի Սրբազան, Դուք ևս կը պատկանիք մեր այդ եղբայրներու հոյլին, Ձեր երկարամեայ ուխտապահ ու հոգեշէն գործունէութեամբ, Ձեր մըշտանորոգ բարի եռանդով և անվարան հաւատարմութեամբ Մայր Աթոռիս հանդէպ, գնահատուած և սիրուած տիրախնամ թեմիդ եկեղեցական-ազգային մարմիններու և հաւատացեալ ժողովուրդին կողմէ:

Արդ, Ձեր քահանայական սուրբ ձեռնադրութեան երեսնամեակի լրութիւն, ջերմապէս գնահատելով անցեալ տարիներու Ձերդ Սրբազնութեան եկեղեցականութիւնը, ծառայութիւնները, այլև ընդառաջելով թեմական խորհուրդիդ կրկնակի խնդրանքներուն, սոյն Մեր հայրապետական կոնդակով Ձեզի կը շնորհենք ԱՐՔՈՒԹԵԱՆ պատիւ, աղօթքով սրտեռանդ որ Տէրը Ձեզի շնորհէ ևս բազում տարիներ քաջառողջութեամբ, շարունակելու համար Ձեր նուիրական առաքելութիւնը մեր հաւատաւոր ժողովուրդի ծոցին մէջ, Ձեզի յատուկ խանդավառ սրտով և ոգեշնչումով:

«Հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարոք, զօրացարոք: Ամենայն ինչ ձեր սիրով լինիցի» (Ա. Կորնթ. ԺԶ 13): Ամէն:




ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ


Տուաւ կոնդակս ի 21 յունուարի
1980 փրկչական ամի,
և ի տումարիս հաղոց ՌՆԻԹ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 1002

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ

1. Հոգեշնորհ տ. Իսահակ ծայրագոյն վաղդապետ Ղազարյանին
Աղեքսանդրիա-Եգիպտոս: Գնահատանքի և օրհնության կոնդակ՝
ծննդյան 80-ամյակի առթիւ: 11 դեկտեմբեր 1979 թ., ՀՄՐ. 987:
2. Արժանապատիւ տ. Մովսէս քահանա Ղազարյանին
Ա. Գեղարդա վանք: Քահանայական լանջախաչ կրելու իրավունք: 10
դեկտեմբեր 1979 թ., ՀՄՐ. 989:
3. Արժանապատիւ տ. Գորգեն քահանա Մուրադյանին
Ա. Գեղարդա վանք: Քահանայական լանջախաչ կրելու իրավունք: 14
դեկտեմբեր 1979 թ., ՀՄՐ. 990:
4. Արժանապատիւ տ. Աթանաս քահանա Մովսիսյանին
Ա. Գեղարդա վանք: Քահանայական լանջախաչ կրելու իրավունք: 12
դեկտեմբեր 1979 թ., ՀՄՐ. 991:

5. Արժանապատիվ տ. Գաբրելին բաժանա Կաթագետությանին
Սոֆիա—Բուդապեշտ: Մադկյա փիլոն կրելու իրավունք: 26 դեկտեմբեր
1979 թ., ՀՄԲ. 999:
6. Արժանապատիվ տ. Մեսրոպ բաժանա Բենիկյանին
Սոֆիա—Բուդապեշտ: Ավագության աստիճանի շնորհում: 27 դեկտեմ-
բեր 1979 թ., ՀՄԲ. 1,000:
7. Տիար Ստեփան Չոխանյանին
Աղերսանդրիա—Եգիպտոս: Կոնդակ օրհնության՝ կարևոր նվիրատվու-
թյան ատրիվ: 12 դեկտեմբեր 1979 թ., ՀՄԲ. 988:
8. Տիկին Մարթա Տիարալեքիանին
Բուենոս Այրես—Արգենտինա: Կոնդակ օրհնության՝ իրեն բարեբարի
«Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոս» մանրապարտեզի: 25 դեկտեմբեր
1979 թ., ՀՄԲ. 998:





ՍՈՒՐԱ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՈՆԸ ԵՎ ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՋԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՆԻՄ

Ըստ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու ավանդության, Ս. Ստեփանոսի տոնը համարվում է նաև սարկավագների տոնական օրը: Ամեն տարի Մայր Աթոռում այդ տոնը նշանավորվում է մի խումբ նոր-ընծա սարկավագների ձեռնադրությամբ:

Այս տարի նույնպես, հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանի միջնորդությամբ և Վեհափառ Հայրապետի բարեհաճ հրահանգով, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ արքեպիսկոպոսը սարկավագական աստիճան շնորհեց հոգեվոր ճեմարանի Գ լսարանի ուսանողներ Հայկ Չիլինգարյանին, Բորիս Մալյանին, Ստեփան Դավթյանին, Վարդգես Ավագյանին, Տիգրան Սահրադյանին և քահանայական բաժնի Ա լսարանի ուսանող Անդրանիկ Օհանյանին:

Դեկտեմբերի 24-ին, երկուշաբթի օրը, երեկոյան հանդիսավոր ժամերգությունից հետո, Մայր տաճարի Ս. Ստեփանոսի խորանի առջև տեղի ունեցավ նորընծաների կիսասարկավագական աստիճանի տվչության արարողությունը:

Այնուհետև տ. Հուսիկ արքեպ. Սանթրո-յանը ուրար կրելու իրավունք շնորհեց հո-

գևոր ճեմարանի Ա լսարանի ուսանողներ Աշոտ Պետրոսյանին, Ստեփան Կարապետյանին, Մեսրոպ Խաչիկյանին, Վարդան Բաղդասարյանին և քահանայական բաժնի Ա լսարանի ուսանողներ Ղևոնդ Հարությունյանին ու Խաչատուր Մադարյանին:

Հաջորդ օրը, դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոս նախավկայի տոնի առթիվ, շաբաթականների ծանր և հանդիսավոր երգեցողությամբ կատարվեց առավոտյան ժամերգություն և ժամը 10.30-ին Ս. Ստեփանոսի խորանի վրա սկսվեց տոնական ս. պատարագի արարողությունը: Պատարագեց Մայր Աթոռի երիտասարդ միաբան տ. Ստեփանոս արք. Չազալյանը:

Ծաշու Ավետարանի ընթերցումից առաջ տ. Հուսիկ արքեպիսկոպոսը կատարեց վեց նորընծաների սարկավագական ձեռնադրությունը՝ խարտավիլակությամբ տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանի:

Ձեռնադրությունից հետո, սրբազան պատարագի ընթացքում, «Հայր մեր»-ից առաջ, քարոզեց պատարագիչ հայր սուրբը՝ «Զի որ ոչ քառնայ գիսաչ իւր և գա զկնի իմ, ոչ կարէ իմ աշակերտ լինել» (Ղուկ. ԺԴ 27) բնաբանով: Նկարագրելուց հետո

Ս. Ստեփանոսի նախատակությունը, քարոզիչ հայր սուրբը եզրակացնում է.

«Մեր ժողովուրդը՝ հայ ժողովուրդը, որ-դեզրեկով քրիստոնեական կրոնն ու կեն-ցալը, Ս. Ստեփանոսի նման իր արյան գնով ամուր կառնած մնաց իր հավատքին ու իր ինքնությանը՝ Ավարայրից մինչև Դեր-Ջուր, մինչև Սարդարապատ, մինչև այսօր:

Եվ Հիսուսի նման հարություն առած հայ

ենք, զոհաբերության ու նվիրման՝ հանուն Հիսուսի Քրիստոսի Ավետարանի:

Եվ դուք, սիրելի ժողովուրդ, աղոթեցեք մեզ համար, ինչպես որ մենք ենք մեր կարգին աղոթում ձեզ համար, որ միշտ ամուր մնանք մեր լուսատես պապերի հա-վատքի վրա և պատրաստ լինենք ամեն զոհողության, որպեսզի պահենք-պահպա-նենք «զհատատ հարցն մերոց» այսօր, վա-ղը և բնդմիշտ»:



Ձեռնադրությունից մի պահ

ժողովուրդը կա այսօր իր քրիստոսանվեր կենցաղով, իր հավատալիքի սրտով, իր պապերի արյունով ներկված սրբազան հո-դի ուժով:

Եվ այսօր մեր ժողովրդի ծոցից եկել են մեր նորընծա սարկավազները՝ հետևելու Ս. Ստեփանոսի օրինակին, ինչպես նա եւ իր կարգին հետևեց Տիրոջ օրինակին:

«Զի որ ոչ բառնայ զխաչ իւր և գալ զկնի իմ, ոչ կարել իմ աշակերտ լինել»:

Սիրելի նորընծա սարկավազներ,

Ձեր շատիկների կարմիրը Ս. Ստեփանո-սի արյան հետքերն են: Մենք բոլորս՝ ողջ հոգևորականությունը, նույն ճամփու վրա

Պատարագից հետո Մայր Աթոռի ավագ և նորընծա սարկավազները Վեհաբանում բնդումվեցին Վեհափառ Հայրապետի կող-մից:

Նորին Սրբությունը շնորհավորեց բոլոր սարկավազներին Ս. Ստեփանոսի տոնի առթիվ՝ մաղթելով նրանց անճկուն կամք և կորով աստվածահաճո գործունեության նախապարհին, հայտնեց Իր ուրախությունն ու զոհունակությունը, որ Մայր Աթոռի միա-բանության շարքերը համալրվեցին երի-տասարդ սարկավազների նոր հունով:

Նույն օրը, երեկոյան, Վեհաբանում տե-լի ունեցավ միաբանական հերթական հա-

վաքույթ, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը կրկին անգամ շնորհավորեց սարկավազներին և սովեց իր հայրական հորդորները:

Այնուհետև, ի դիմաց սարկավազների, Վեհափառ Հայրապետին ուղղված խոստովի և շնորհակալության խոսք ասաց Հրաչ արկ. Օղյուզյանը՝ շեշտելով.

«Հավատացեք, Վեհափառ Տեր, որ մեր հոգիներում, որպես բարի սերմնացան, Ձեր ցանած հոգևոր սերմերը չեն ընկել ճանապարհին, ապառաժի վրա և կամ տատանակների մեջ: Դրանք կեր չեն դարձել երկնքի թռչուններին, չեն խանձվել արևի կիզիչ ճառագայթներից և ոչ էլ խեղդվել փշերի մեջ, այլ դրանք, ընկնելով մեր հոգիների պարարտ հողում, տակավին մեր պատանի հասակից ծլել և ընձյուղներ են արձակել՝ դառնալու համար ուտ, ծառ և արպա հաստարուն կաղնի:

Վեհափառ Տեր, այսօր մենք բոլորս միասին եկել ենք առ ոտս Ձեր, Հիսուսի պշակերտներին՝ ներկայացող, նրան տեսնելու փափագ ունեցող այն օտարականների բուռն տենչով, որոնք ասում էին. «Կամի՞նք զՅիսուս տեսանե՞ք» (Հովհ. ԺԲ 21):

Վեհափառ Տեր, աղոթեցեք մեզ համար, որպեսզի մենք էլ մեր հոգու աչքերով կարողանանք տեսնել պայծառ լույսը, որպեսզի Պետրոս առաքյալի նման փորձության ծանր պահին չուրանանք նրան և միշտ ասենք. այո, Տեր, դու ես Որդին Աստուծո:

Աղոթեցեք, որ բարձրյալն Աստված իմ և սիրեցյալ սարկավազ եղբայրներիս հոգիներում գոնե մի չիթ հավատք կայեցնի նախասարկավազի՝ Ս. Ստեփանոսի այն ծով հավատքից, որ նա ուներ առ Տեր, որպեսզի մենք էլ մեր կյանքի խաղաղ թե դժոխակ օրերին միշտ նրա նման երկինքը բացված տեսնենք մեր առաջ ու բարձրադաշտի գոյեք:

«Ռա տեսանեմ զերկինս բացեալ, և զՈրդի մարդոյ զի կայ ընդ աջմէ Աստուծոյ» (Գործք է 55):

Այնուհետև նորոգեց սարկավազներից իրենց սրտի խոսքն ասացին Տիգրան արկ. Մահրադյանն ու Հայկ արկ. Չիլինգարյանը՝ խոստանալով նվիրումով կատարել իրենց կոչումից բխող բոլոր պարտականությունները:

*
* *

Տիգրան սարկավազ Մահրադյան. Ճնվել է 1958 թվականի հունիսի 27-ին Մասիսի շրջանի Ագատաշեն գյուղում: Նախնական կրթությունը ստացել է տեղի տարրական դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել

է Գեղամիսի միջնակարգ դպրոցում: 1973 թվականին ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան: 1977—79 թվականներին կատարել է իր զինվորական-հայրենասիրական ծառայությունը սովետական բանակում և ապա վերադարձել հոգևոր ճեմարան: Այժմ սովորում է Գ լսարանում:

Հայկ սարկավազ Չիլինգարյան. Ճնվել է 1956 թվականի փետրվարի 18-ին Կամոյի շրջանի Կարմիր գյուղում: 1972 թվականին ավարտել է Երևանի № 2 միջնակարգ դպրոցը: 1974 թվականին ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան: 1974—76 թվականներին կատարել է իր զինվորական-հայրենասիրական ծառայությունը սովետական բանակում: 1976 թվականին վերադարձել է հոգևոր ճեմարան: Այժմ սովորում է Գ լսարանում:

Ստեփան սարկավազ Դավթյան. Ճնվել է 1958 թվականի հունվարի 1-ին Կամոյի շրջանի Ծաղկաշեն գյուղում: 1975 թվականին ավարտել է Երևանի Կամոյի անվան № 111 միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան: Այժմ սովորում է Գ լսարանում:

Բորիս սարկավազ Մայսյան. Ճնվել է 1954 թվականի փետրվարի 1-ին Երևանում: 1970 թվականին ավարտել է տեղի Րաֆֆու անվան № 36 միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել է Ալ. Թամանյանի անվան շինարարական տեխնիկում: 1974—76 թվականներին կատարել է իր զինվորական-հայրենասիրական ծառայությունը սովետական բանակում: 1976 թվականին ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան: Այժմ սովորում է Գ լսարանում:

Վարդգես սարկավազ Ավագյան. Ճնվել է 1956 թվականի մայիսի 9-ին Երևանում: 1973 թվականին ավարտել է տեղի Հ. Պարոնյանի անվան միջնակարգ դպրոցը: 1974—76 թվականներին կատարել է իր զինվորական-հայրենասիրական ծառայությունը սովետական բանակում: 1976 թվականին ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան: Այժմ սովորում է Գ լսարանում:

Անդրանիկ սարկավազ Օհանյան. Ճնվել է 1938 թվականին Մուսալեռում (Թուրքիա): 1954 թվականին ավարտել է Բեյրութի Թեքեյան վարժարանը: Երկար տարիներ եղել է Թեքեյան մշակութային միության անդամ: 1978 թվականին հետևել է Անթիլիասի դպրեվանքի քահանայից լսարանի դասընթացներին: 1979 թվականին

Ա. Էջմիածնի հոգևոր ճեմարանում հետևում է քառանյակաձև լսարանի դասընթացներին:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը

Ա. Մ. Ա. Ն. ՈՐԸ. ՄԱՅՐ ԱՅՈՒԹՈՒՄ

Գեկտեմբերի 31-ն է, տարվա վերջին օրը: Պատրաստվում է պատմություն դասնալ 1979 թվականը, որը Մայր Աթոռի համար եղավ պատմության արժանի մի տարի՝ իր շինարար, արգասաբեր և արդյունավոր գործերով:

Խաղաղ ու խորհրդավոր գիշեր է: Տասներկու օրական լուսինը ծալուում է աշխարհին և կարծես անհամբերությամբ ու ժամանակից շուտ ցանկանում է ազդարարել նոր տարեմուտը:

Երեկոթին զարդարված Մայր Աթոռի միաբանական սեղանատանը տոնական ուրախ խանդավառություն է տիրում:

Այնտեղ՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շուրջ են հավաքվել Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, մայրավանքի պաշտոնեությունը և այլ հյուրեր, որոնք եկել էին միմյանց հետ կիսելու անցնող տարվա ուրախության վերջին պահերը:

Բոլորի դեմքերին նկատելի էր գոհունակությունը, որ նրանք պատրաստ են ազնիվ խղճմտանքով քարի ճանապարհ անելու անցնող՝ 1979 տարուն:

Տեղումական աղոթքից հետո հոգևոր ճեմարանի սաները երգեցին «Ճեմարանի քայլերգ»-ը:

Այնուհետև հոգևոր ճեմարանի տեսչության անունից Վեհափառ Հայրապետին և ներկաներին ողջված շնորհավորական իր խոսքն ասաց ճեմարանի տեսուչ տ. Գրիգորիս վրդ. Բունիսթյանը: Հոգեշնորհ հայր սուրբը, Ամանորի շուրջ որոշ խորհրդածություններ անելուց հետո, ճեմարանի տեսչության անունից շնորհավորեց Վեհափառ Հայրապետին և բոլոր ներկաներին, մաղթեց, որ գալիք տարին Մայր Աթոռի և Հայաստանյայց Եկեղեցու համար լինի խաղաղ և արգասաբեր տարի:

Իր խոսքի ավարտին հայր սուրբը հույս հայտնեց և խոստացավ, որ ճեմարանի տեսչությունը հետ այսու կանի ամեն կարելին՝ հոգևոր ճեմարանի ուսումնա-դաստիարակչական բոլոր աշխատանքներում արձանագրելու համար դրական արդյունքներ:

Շնորհավորում է նորընծա սարկավագներին՝ մաղթելով նրանց նորանոր հաջողություններ հոգևոր ծառայության դժվարին և պարտավորեցնող ճանապարհին:

Երեկոյի ընթացքում շնորհավորական խոսք ասացին նաև Մայր Աթոռի միաբան տ. Գարեգին արդ. Ներսիսյանը, հոգևոր ճեմարանի դասախոս պրն. Սամվել Անթոնյանը և Ա. լսարանի ուսանող Ստեփան Կարապետյանը:

Երեկոյի գեղարվեստական բաժնում ներկաների ուրախությունը բազմապատկեց հոգևոր ճեմարանի երգչախումբը՝ դեկավարությամբ ճեմարանի երաժշտության դասախոս տ. Կոմիտաս արդ. Հովհաննիսյանի՝ հաջորդաբար կատարելով «Սեղանն է առատ», «Զեյթունցիներ», «Ֆորկա», «Մորտակվեցան», «Գովենք ընկեր» և «Շախլ-շուխլ» խմբերգերը:

Երեկոյի ընթացքում ճեմարանի սաներ Հայկ սրկ. Չիլինգարյանը (Գ լսարան), Մեսրոպ Խաչիկյանը (Ա լսարան) և Վիգեն Քեչեջյանը (Ա դասարան) համապատասխանաբար արտասանեցին Համո Սահյանի «Հայաստանը երգերի մեջ», Գեղամ Սարյանի «Տարեդարձի երգ» և Հովհաննես Շիրազի «Հայրենիքիս» բանաստեղծությունները: Իսկ Աշոտ Պետրոսյանը (Ա լսարան) արտասանեց Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» պոեմից բան Թ հատվածը:

Տարեկիցի ուրախ երեկոյին ելույթ ունեցավ նաև հոգևոր ճեմարանի «Զվարթնոց» նվագախումբը՝ հաջորդաբար կատարելով «Առատու լուսո», «Ծիծեռնակ», «Ամպել աճյուն չի գալի», «Գլուխ ջան», «Աման Թեյ» ազգային ժողովրդական երգերը:

Ամանորի տվանդական վիճակահանությունից հետո, տոնական երեկոյի ավարտին, օրհնության խոսք ասաց Վեհափառ Հայրապետը՝ շնորհավորելով բոլոր ներկաների Նոր տարին և մաղթելով՝

«Թող նոր տարին լինի խաղաղության, շինարարության և հառաջդիմության տարի համայն աշխարհի և համայն Հայաստանյայց Եկեղեցւոյ ու նաև Մայր Աթոռ Ա. Էջմիածնի համար. ամեն»:

Վեհաշնորհ լսվեցին Մայր տաճարի զանգակների դողաճները՝ թյով 365, որոնք խորհրդանշում էին անցնող տարվա 365 օրերը:

Նոր տարվա առաջին օրը, հունվարի 1-ին, Մայր տաճարում տարեմուտի և պատարագ մատուցեց տ. Գրիգորիս վրդ. Բուհիարյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ և. պատարագի պատարագիչ հայր սուրբը քարոզեց «Նոր Խորանիդ Արեգական Արդարությանն մոր օրհնություն տացցուք և անդադար բարեբանեցուք» բնաբանով:

Այնուհետև Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց Հայրապետական մաղթանքի հանդիսավոր արարողությունը:

Ժամը 14-ին Մայր Աթոռի միաբանությունը և ճեմարանի ուսանողությունը առաջնորդվեցին Վեհաբան՝ շնորհավորելու Նորին Սրբության Ամանորը և ստանալու Նրա հայրական օրհնությունները:

Հայոց Հայրապետը կրկին անգամ շնորհավորեց բոլորի Նոր տարին և մաղթեց, որ այս տարին ևս Մայր Աթոռի և համայն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու համար լինի տիրաշնորհ խաղաղ և բարի արդյունքներով բոլորանվեր տարի, որպեսզի հաջողությամբ իրականանան մեր Եկեղեցու և ազգի բոլոր ազնիվ երազանքները, որպեսզի մեր ժողովուրդը շարունակի միշտ վառ ու կենդանի պահել Լուսավորչի սուրբ կանթեղը:

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՐՈՒՄ

Արդեն քառորդ դար է, ինչ ամեն տարի Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Քրիստոսի Հրաշափառ Ս. Ծննդյան հանդիսությունները նշվում են Նորին Սրբություն Վազգեն Ս. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նախագահությամբ և Նրա անմիջական մասնակցությամբ:

Ինչպես միշտ, այս տարի ևս Ս. Ծննդյան հանդիսությունները Մայր Աթոռում նշվում են արտակարգ մեծ շուքով:

Հունվարի 5-ին, շաբաթ.—Ծրագալույց Ծննդեան և Աստուածայությունեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Մայր տաճարում երեկոյան հանդիսավոր ժամերգությունից հետո սկսվում է Ծրագալույցի և. պատարագը: Պատարագում է Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը:

Հավարտ և. պատարագի Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի է ունենում Ս. Ծննդյան նախատոնակի կարգը:

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ» ու «Նորհոր մեծ և սքանչելի» շարականները հավատացյալ ժողովրդին ավետում են Քրիստոսի Ս. Ծնունդը:

Հունվարի 6-ին, կիրակի.—Տօն Ծննդեան և Աստուածայությունեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Առավոտյան տոնական ժամերգությունից հետո Մայր տաճարում, ժամը 10.30-ին, սկսվում է հանդիսավոր և. պատարագը:

Օրվա մեծաշուք տոնի քերկրալի առիթով Ավագ խորանի վրա և. պատարագ է մատուցում Վեհափառ Հայրապետը:

Չանգերի ավետաբեր դողանքների ներքո հնչում է Ծննդյան մեծ ավետիսը՝ «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ» շարականադոթքը:

«Հայր մեր»-ից առաջ Ս. Ծննդյան և Աստվածահայտնության տոնի առթիվ Հայրապետական Իր պատգամն է տալիս Վեհափառ Հայրապետը (պատգամը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 3—4):

Նույն օրը, երեկոյան, Նորին Սրբության վերոհիշյալ պատգամը ձայնափովում է Երևանի ռադիոկայանից:

Հավարտ և. պատարագի Վեհափառ Հայրապետը Ավագ խորանի վրա կատարում է Ջրօրհնյաց հանդիսավոր կարգը՝ ոգեկոչելով հիշատակը Ս. Հովհաննես Մրկըրտչի ձեռքով Հորդանան գետում Քրիստոսի մկրտության:

Ժամը 15-ին Վեհաբանի սեղանատանը Վեհափառ Հայրապետի կողմից տրվում է պաշտոնական ճաշկերույթ, որին մասնակցում են Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի և Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի անդամները, մայրավանքի պաշտոնությունը, հյուրաբար մայր հայրենիքում գտնվող Արգենտինայի թեմական խորհրդի անդամները և այլ հյուրեր:

Ծաշկերույթին ներկա էին նաև ՀՍՍՀ Միևիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռուբեն Պարսամյանը և տեղակալ Անդրանիկ Հասարայանը:

ճաշկերույթի ընթացքում ողջույնի և շնորհավորական խոսք են ասում Վեհա-

փառ Հայրապետը, տիար Ռ. Պարսամյանը, տ. Արսեն եպս. Բերքերյանը և ուրիշներ:

ՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆՈՒ ԾՆՆԳՅԱՆ 60-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵՎՈՒ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Վերջերս Սովետական Հայաստանում, մեր բազմազգ Միության մայրաքաղաք Մոսկվայում և եղբայրական մյուս հանրապետություններում հանդիսավորությամբ նշվեց հայրենասեր բանաստեղծ, ՍՍՀՄ Պետական մրցանակի կրկնակի դափնեկիր Գևորգ Էմինի ծննդյան 60-ամյակը:

Մայր Աթոռը նույնպես նշեց այդ հոբելյանը: Երկկողմ, որին մասնակցեց բանաստեղծ հոբելյարը, նախահագեց Վեհափառ Հայրապետը: Բացման խոսքով հանդես եկավ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը:

Բացման խոսքից հետո Գ. Էմինի գրական-հասարակական գործունեության մասին հանգամանալից զեկուցումով հանդես եկավ հոգևոր ճեմարանի Ա լսարանի ուսանող Վարդան Բաղդասարյանը՝ իր խոսքը եզրափակելով հետևյալ բարեմաղթությամբ:

«Հարգելի բանաստեղծ, թույլ տվեք հոգևոր ճեմարանի ուսանողության, որոնց մեծ մասը Ձեր արվեստի երկրպագուներն են, ինչպես նաև Մայր Աթոռի ողջ միաբանության անունից շնորհավորել Ձեզ՝ Ձեր ծննդյան 60-ամյակի առթիվ: Դուք Ձեր գրական գործունեությունը սկսեցիք «Նախաշավիղ»-ով, ընկաք մեծ ճանապարհ և բարանձավներից, որտեղ լույս ու կրակ էիք ստեղծել, հասաք ատոմը ճեղքող բառերորդ դար: Մաղթում ենք, որ Դուք նույն ստեղծագործական կյանքի ճանապարհով հասնեք քսանմեկերորդին, որը, հուսով ենք, կդառնա դարը բարու, գեղեցիկի և ազնիվի: Ցանկանում ենք, որ ապագայում Դուք ոչ միայն եղածը ընդլայնեք ու քարեկարգեք, ինչպես հույս եք

հայտնել Ձեր հարցազրույցներից մեկում, այլև մի նոր, տուն ևս կառուցեք ի փառս Ձեր այնքան սիրած ու գովերգած հայրենի երկրի ու ժողովրդի»:

Չեկուցումից հետո հոգևոր ճեմարանի շրջանավարտներ Վահրամ սրկ. Տերտերյանը, Վաչագան սրկ. Ավետիքյանը, Գ. լսարանի ուսանող Հայկ Չիլինգարյանը, Ա. լսարանի ուսանողներ Մեսրոպ Խաչիկյանը, Աշոտ Պետրոսյանը և Գևորգ Արամյանը հաջորդաբար արտասանում են հոբելյարի «Երգ կոունկի մասին», «Սասունցիների սլարը», «Ինչ լավ է, որ այդ հին պատմություն է», «Թոսիր, Հայաստան», «Քսաներորդ դար» և «Երգ երգոց» բանաստեղծությունները:

Այնուհետև Գևորգ Էմինին ուղղված Իր գնահատանքի և օրհնության խոսքն ասաց Վեհափառ Հայրապետը:

Վերջում խոսքը տրվեց հոբելյար բանաստեղծին, որը, շնորհակալություն հայտնելուց հետո իր նկատմամբ տածած ուշադիր վերաբերմունքի համար, ասաց, որ Հայ Եկեղեցին այսօր էլ, իր գլուխն ունենալով այնպիսի գործունյա և կարող անձնավորություն, ինչպիսին է Վեհափառ Հայրապետը, շարունակում է Իր ամենամիլիարական գործը, այն է՝ հայաօժիտել և հայապահպանում: Իր խոսքի վերջում հոբելյար բանաստեղծը բարեհաճեց արտասանել իր լավագույն բանաստեղծություններից մի քանիսը՝ զեղարվեստական հաճույք և հայրենասիրական խանդավառություն բաշխելով բոլորին:

Հանդիսության ավարտից հետո տեղի ունեցավ հյուրասիրություն:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Հունվարի 3-ին, հինգշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետին են այցելում Ավետարանական Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի նախագահ Իվան Միխայելի Սերգենը (ԱՄՆ), ԱՄՆ-ի ուսական և ուկրաինական Ավետարանական-

Մկրտչական Եկեղեցիների Խորհրդի նախագահ Նիկոլայ Իվանի Սելվիստովը և Մոսկվայի Ավետարանական-Մկրտչական Եկեղեցու քարոզիչ Ալեքսանդր Վասիլի Սավելը:

Հունվարի 7-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Խաչատուր քհն. Ֆրանգյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ «վասն համօրէն անջնեցելոց»:

Հունվարի 12-ին, շաբաթ.—Այսօր հոգեվոր ճեմարանում վերսկսվեցին ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասընթացները:

Հունվարի 18-ին, կիրակի.—Յօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Անանիա վրդ. Արաքաջյանը:

«Հայր մեր»-ից առաջ «Զի եւ ոչ անուն այլ գոյ ի անբոյ երկնից տուեալ ի մարդիկ, որով արժան իցէ կեալ մեզ» (Գործք Դ 12) բնաբանով քարոզ է խոսում տ. Գարեգին արդ. Ներսիսյանը:

Հունվարի 16-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

Հավաքույթի ընթացքում Վեհափառ Հայրապետը ներկայացնում է «Հայ եկեղեցում աստվածաբանական գիտությունների բարձր մակարդակը և ուղիղ մտածողությունը

անցյալ դարի վերջերին» թեման՝ հատվածներ կարդալով Արշակ Տեր-Միքելյանի «Աստվածաբանական գիտությունները» գրքից:

Հունվարի 20-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եկայք շինեցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հունվարի 23-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

Հավաքույթի ընթացքում իրենց տպավորություններն են պատմում Ս. Ծննդյան տոնի առթիվ ներքին թեմեր առաքված տ. Հուսիկ արքեպ. Սանթրոյանը, տ. Անանիա վրդ. Արաքաջյանը, տ. Կոմիտաս արդ. Հովհաննիսյանը և տ. Գարեգին արդ. Ներսիսյանը:


Հունվարի 27-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Ստեփանոս արդ. Չափալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ վերակազմվեց «Էջմիածին» ամսագրի խմբագրական մարմինը, գլխավոր խմբագրի կողքին, որի կազմում ընդգրկվեցին տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը, արն. Սուրեն Քուլանջյանը և արն. Հովհաննես Թովոյանը:





Կ. ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐԺԱԿԱՆ ԱԹՈՌՈՒՄ

ՀՈՌՄԻ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ
ՀՈՒՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ Կ. ՊՈԼՍԻ
ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺԱԿԱՆ ԱԹՈՌՈՒՆ

1979 թվականի նոյեմբերի 29-ին Հոռի Բաճանապատկա Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապը այցելեց Կ. Պոլսի Հայոց Պատրիարքական Աթոռին:

Հայոց Պատրիարքարանի շրամատրի առջև Սրբազան Պապին դիմավորեց Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Տ. Շնորհք արքեպ. Գալուստյանը՝ շրջապատված հոգևոր ղեկավարներով և եկեղեցական-ազգային կազմակերպությունների ներկայացուցիչներով:


Ողջագոյությունից հետո Սրբազան Պապն ու Հայոց Պատրիարքը եկեղեցական թափուրով առաջնորդվեցին Հայոց պատմա-եւանգելիստական Պատրիարքարանի դահլիճ, որտեղ ներկա գտնվող համայնքային ներկայացուցիչները մեծ ոգևորությամբ և բուռն ծափահարություններով դիմավորեցին Սրբազան քահանայապետին, որը գոհունակությամբ բազմեց Իրեն հատկացված բազկաթոռին:

Նախ Հայոց ամենապատիվ Տ. Շնորհք Պատրիարքը բարի գալուստ մաղթեց Հովհաննես-Պողոս Բ Պապին և ապա արտա-

հայտեց հայ համայնքի ուրախությունն ու գոհունակությունը այդ առթիվ ու մաղթեց, որ իրականանա Նորին Սրբության՝ եկեղեցիների միության և աշխարհի խաղաղության ի նպաստ բոլոր բարի երազանքները:

Այնուհետև Սրբազան Բաճանապատկա հանդես եկավ պատասխան ճառով և Իր ուրախությունն ու գոհունակությունը հայտնեց Հայ եկեղեցու հարկի տակ գտնվելու համար և անդրադարձավ Ամենայն Հայոց Վազգեն Ս. Հայրապետի՝ Պողոս Զ Պապին Վատիկան տված աջակցությանը և շնորհեց, որ Ինքը լավ է ճանաչում ու գնահատում Հայաստանյայց եկեղեցին:

Ապա Սրբազան Պապն ու Հայոց Պատրիարքը մտերիմ և չեղմ գրույց ունենալուց հետո, ամպհովանու ներքո և զանգակների ղողանջների տակ, «Հրաշափառ»-ով առաջնորդվեցին արտամիստ Մայր եկեղեցի, որտեղ տեղի ունեցավ կարճ արարողություն և միատեղ աղոթք, որից հետո փոխանակվեցին ճառեր:



ԼՈՒՐԵՐ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

ԲԱՐԵԹՈՒՄԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ
ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ Կ. ՊՈԼՍԻ
ՀՈՒՆԱՑ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐԷԻՆ

1979 թվականի հուլիսի 26-ին Կ. Պոլսի Տիեզերական Պատրիարքին է այցելում Բարեփոխական Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի յոթ հոգուց բաղկացած պատվիրակությունը՝ գլխավորությամբ Խորհրդի նախագահ Սքքորդի:

Պաշտոնական ընդունելության ժամանակ պատվիրակությունը գրավոր առաջարկ է ներկայացնում Տիեզերական Պատրիարքին և վերջինիս միջոցով՝ բոլոր Օրթոդոքս Ե-

կեղեցիներին՝ սկսել աստվածաբանական մի դիպուգ Օրթոդոքս և Բարեփոխական Եկեղեցիների միջև:

Գրավոր պաշտոնական առաջարկի հանձնումից հետո, քրիստոնեական սիրո մթնոլորտում ճառեր են փոխանակվում Նորին Արքեպիսկոպոս Ս. Դեմետրիոս Ա Պատրիարքի և Բարեփոխական Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի նախագահ Սքքորդի միջև:

ՕՐԹՈՂՈՔՍ ԵՎ ՀԻՆ ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻԶԵՎ ԴԻԱԼՈՂԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՉՈՐՐՈՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

1979 թ. օգոստոսի 19—24-ը հոգնում, Արևմտյան Գերմանիայի հույն օրթոդոքս Եկեղեցու առաջնորդարանում, գումարվեց օրթոդոքս և հին կաթոլիկ եկեղեցիների միջև դիպուգի աստվածաբանական հանձնաժողովի չորրորդ հանդիպումը:

Սույն հանձնաժողովի Ա հանդիպումը տեղի էր ունեցել 1978 թվականին Աթենքում, Բ-ը և Գ-ը՝ 1975 և 1977 թվականներին Ժնևում, Կ. Պոլսի հույն պատրիարքության ներկայացուցչությունում:

Բազմաթիվ աստվածաբաններ մեծ կարևորությամբ են խոսում այս հանդիպումների վերաբերյալ՝ դրանք համարելով օրթոդոքս և հին կաթոլիկ եկեղեցիների այսօրվա կյանքի և գործունեության կարևորագույն իրողություններից: Եվ իրապես,

հանձնաժողովի աշխատանքները հիմք են տալիս այդ կարծիքին: Այսպես, Բ հանդիպման ժամանակ քննարկվել, հաստատվել և հրապարակվել են հետևյալ հինգ աստվածաբանական տեքստերը.

1.—Աստվածային Հայտնության և դրա ավանդության մասին:

2.—Ս. Գրքի կանոնի մասին:

3.—Երրորդության մասին:

4.—Աստվածային Լոգոսի (Խոսքի) մարդացման մասին:

5.—Քրիստոսի երկու բնությունների միության մասին:

Իսկ Գ հանդիպման ժամանակ շարադրվել, հաստատվել և հրապարակվել են երկու աստվածաբանական տեքստեր՝

1.—Աստվածածնի մասին:

2.—Եկեղեցու Եղբայն և յուրահասակությունների մասին:

Սույն՝ Գ հանդիպմանը մասնակցում էին. Օրթոդոքս Եկեղեցու կողմից՝

Վ. Պոլսի Տիեզերական, Ալեքսանդրիայի, Նրուսաղեմի, Մոսկվայի և Համայն Ռուսաստանի, Ռումինիայի և Բուլղարիայի Պատրիարքությունների, ինչպես նաև Արարչի և Հոգևորականի ինքնավար արքեպիսկոպոսությունների ներկայացուցիչները:

Հին կաթոլիկ եկեղեցու կողմից՝

Հոլանդիայի, Արևմտյան Գերմանիայի, Գվելդարիայի, Ավստրիայի, Լեհաստանի, ԱՄՆ-ի և Կանադայի ինքնավար եկեղեցիների ներկայացուցիչները:

Հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում էին Արևմտյան Գերմանիայի նույն օրթոդոքս Եկեղեցու միտրոպոլիտ Իրինեոսը և Գվելդարիայի հին կաթոլիկ եկեղեցու եպիսկոպոս Լեոն Գոթին:

Դ հանդիպմանը ընթացքում մասնակցում էր ընկալելով 1978 թ. օգոստոսին Արևմտյան տեղի ունեցած ենթահանձնաժողովի հանդիպման ժամանակ պատրաստված հետևյալ չորս տեքստերը.

1.—Եկեղեցու միությունը և տեղական եկեղեցիները:

2.—Եկեղեցու սամանները:

3.—Եկեղեցու հեղինակությունը:

4.—Եկեղեցու անխաղաղությունը:

Ժամանակի անբավարարության պատճառով քննարկվեցին, ստորագրվեցին և հրապարակվեցին միայն 1-ին և 2-րդ տեքստերը:

Հանձնաժողովի աշխատանքային վերջին հիստում, ընդառաջելով Լ. Գոթին և Եպիսկոպոսի հրավերին, որոշվեց ենթահանձնաժողովի հերթական հանդիպումը անցկացնել Բեռլինում, 1980 թ. սեպտեմբերի երկրորդ կեսին:

Այնուհետև Միսակի և Բելոռուսիայի միտրոպոլիտ Ֆիլարետը ժողովին է հաղորդում Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբություն Տ. Պիմենի հրավերը՝ հանձնաժողովի հերթական հիստում անցկացնելու Մոսկվայում, 1981 թ. օգոստոսի 28-ից հետո: Ռուսաց Պատրիարքի հրավերը ընդունվում է ուրախությամբ:

ԱՍՏՎԱԾԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

1979 թվականի սեպտեմբերի 28-ին Լենինգրադի հոգևոր ճեմարանում կապցավ Ֆիննական Հելսինկի և Տուրկու քաղաքների աստվածաբանական ֆակուլտետների ներկայացուցիչների հանդիպումը Լենինգրադի հոգևոր ճեմարանի աստվածաբանների հետ:

Ֆիննական կողմից գրույցին մասնակցում էին՝ Գելսինգորֆի միտրոպոլիտ, Հելսինկիի և Տուրկուի համալսարանների աստվածաբանական ֆակուլտետների դոցենտ Իոանն, Հելսինկիի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետի պրոֆեսոր, Պրավոսլավոսքում ուսումնասիրման ինստիտուտի դիրեկտոր դոկտ. Կառլո Պիրինեն և Տուրկու քաղաքի աստվածաբանական ճեմարանի պրոֆեսոր դոկտ. Յուկկա Թյուրեն:

Լենինգրադյան կողմից մասնակցում էին՝

Վիբորգի արքեպիսկոպոս, Լենինգրադի հոգևոր ճեմարանի տեսուչ Կիրիլ, նույն ճեմարանի փոխտեսուչ պրոֆ. Վասիլի ավագ քահանա Ստոլկովը, պրոֆ. Լիվերի ավագ քահանա Վորոնովը, պրոֆ. Վլադիմիր ավագ քահանա Սորոկինը, նույն ճեմարանի մանկավարժական խորհրդի քարտուղար Ավգուստին արեղան և ուրիշներ:

Հանդիպման ժամանակ քննարկվեցին Ֆինլանդիայի և Լենինգրադի հոգևոր դպրոցների միջև հարաբերությունների հետագա զարգացման մի շարք հարցեր: Հավաքի մասնակիցները համաձայնության եկան այն հարցի շուրջ, որ սույն կապերի ընդլայնումը էլ ավելի կհարստացնի երկու երկրների աստվածաբանական ուսումնական հաստատությունների գիտական կապեր, ինչպես նաև կսերտացնի երկու եկեղեցիների և ժողովուրդների քաղկաժությունը:

ՀՈՈՄԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ Կ. ՊՈԼԻՍ

1979 թվականի նոյեմբերի 29-ին Կ. Պոլիս այցելեց Հոռմի Հովհաննես-Պողոս Բ Պապը՝ ուղեկցությամբ Վիլբրամոս և Կազարոլի կարդինալների և հինգ արքեպիսկոպոսների:

Սրբազան քահանայապետին օղանավակայանում դիմավորեց Հունաց Տիեզերական Պատրիարք Տ. Դեմետրիոս Ա-ը, Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը, ինչպես նաև կրոնական ու պետական բարձրաստիճան այլ անձինք:

Նույն օրը Հովհաննես-Պողոս Բ Պապը այցելեց Ա. Սոֆիայի տաճար, Հունաց և Հայոց Պատրիարքական Աթոռներ:

Ժամը 19-ին Սրբազան քահանայապետը ա. պատարագ մատուցեց տեղի Կաթոլիկ Եկեղեցու Ա. Հոգու Մայր տաճարում՝ ներկայությամբ Տ. Դեմետրիոս և Տ. Շնորհք Պատրիարքների:

Ա. պատարագի արարողությունն հեռուստատեսությամբ հաղորդվեց բազմաթիվ երկրներ:

Ա. պատարագի ավարտին Սրբազան


Քահանայապետը աստան հրավիրեց Հունաց և Հայոց Պատրիարքներին՝ իրենց օրհնությունները տալու հավատացյալ ժողովրդին:


Նոյեմբերի 30-ին, Ա. Անդրեաս առաքյալի և Կ. Պոլսի Աթոռի տոնին, Հունաց Պատրիարքական Մայր տաճարում ա. պատարագ մատուցեց Տ. Դեմետրիոս Պատրիարքը:

Պատմության մեջ առաջին անգամ Հունաց Մայր տաճարում ա. պատարագի արարողությանը մասնակցեց Հոռմի Քահանայապետը:

Ա. պատարագի ավարտին օրհնության խոսք ասացին Սրբազան Քահանայապետը և Տիեզերական Պատրիարքը:

Ա. պատարագի ավարտից հետո Հունաց Պատրիարքարանում Հոռմի Հովհաննես-Պողոս Բ Պապը և Հունաց Տիեզերական Պատրիարք Դեմետրիոս Ա-ը ստորագրեցին համատեղ մի Հայտարարություն, որտեղ արտահայտություն է գտել երկու Հովապետների՝ Քրիստոսի Եկեղեցու միությունը իրականացած տեսնելու բաղձանքը:





«ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ» 8-րդ
ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

1979 թվականի հոկտեմբերի 18—25-ը Կրեմլե կղզում (Համապտան) տեղի ունեցավ «Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի» 8-րդ համաժողովը: Համաժողովին մասնակցում էին Եվրոպայի 25 տարբեր երկրներից ժամանած Կոնֆերանսի անդամ Եկեղեցիների պատգամավորներ, ոչ անդամ քույր Եկեղեցիների, եկեղեցական գաղազան կազմակերպությունների, այդ թվում՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ներկայացուցիչներ, բազմաթիվ դիտորդներ, խորհրդակալներ, լրագրողներ՝ ընդամենը 405 հոգի:

Հանուն Հայաստանյայց Առաքելական
Եկեղեցու, սույն համաժողովին, որպես
Կոնֆերանսի անդամ Եկեղեցու պատվի-
րակ, իր մասնակցությունը բերեց տ. Ոս-
կան ծայրագույն վարդապետ Գալբաթյա-
ն (Դանասկոյ):

«Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսը» ստեղծվել է 20 տարի առաջ: Նրա հիմնական նպատակն է Եվրոպայի Օրթոդոքս, Անգլիկան և Ավետարանական Եկեղեցիների ու Եկեղեցական համայնքների համախմբումը: Այսօր այդ Եկեղեցիներից 112-ը իրենց եռամեկուս մասնակցությունն են բերում նրա օրոժմունքայինը:

Համաժողովն անցկացվեց «Աշխարհի
համար կենդանի՝ Սուրբ Հոգու զորության»
բնդհանուր նշանաբանով:

Համաժողովմ իր առաջին նիստում նախագահ ընտրեց ղդկոտ. Անդրե Ափսեւին: Միաժամանակ տեղի ունեցան համաժողովի չորս առանձին խմբերի նախագահների, փոխնախագահների և քարտուղարների ընտրությունները: Երրորդ խմբի փոխնախագահ ընտրվեց Հայ եկեղեցու ներկայա-

ցուցիչ տ. Ոսկան ծայր, վարդապետ Գալ-
բարյանը:

Համաժողովի տարբեր կոմիտեների և հանձնաժողովների աշխատանքներին նախորդեցին երեք հիմնական զեկուցումներ: «Սուրբ Հոգին որպես ազատագրող ուժ» թեմայով առաջինը հանդես եկավ Հունաստանի Օրթոդոքս Եկեղեցու ներկայացուցիչ պրոֆ. Խրիստոս Յաննարասը (Աթենք): «Սուրբ Հոգին անհատի անձնական կյանքում» թեմայով զեկուցում կարդաց Օբաֆորդի համալսարանի դասախոս Կալիստոս Վարեն (Մեծ Բրիտանիա): Երրորդ զեկուցումը, որի թեման էր «Ծառայել աշխարհին Սուրբ Հոգու զորությամբ», ներկայացրեց Ռուս Պրավոսլավ Եկեղեցու ներկայացուցիչ միտրոպոլիտ Ալեքսին (Տալին):

Վերոհիշյալ գեկուցումների շուրջ տեղի ունեցած մտքերի լայն փոխանակությունից հետո ժողովի մասնակիցները չորս առանձին խմբերում տարբեր կողմերից քննարկեցին և խորացրին համաժողովի գլխավոր թեման՝ այն առնելով Եվրոպայի Եկեղեցիների այսօրվա կյանքին: Քննարկումները տեղի ունեցան հետևյալ թեմաներով.

ա. Եվրոպայի բաժանված եկեղեցիները
դեպի համագործակցություն և միություն.
բ. Աստվածաբանությունը Եվրոպայում
Աստուծո և աշխարհի առաջ.

գ. Քարոզություն և ծառայություն—Եվրոպայի Եկեղեցիների պարտավորությունը առափնեալով.

դ. Արարչագործության մատակարարները և խաղաղության ծառաները վտանգված աշխարհում:

Աշխատանքային խմբերից յուրաքանչյուրը, քննարկելուց հետո իրեն հաճճա-

յարված թեման, հանձնաժողովին ներկայացրեց համապատասխան գեկուցագրեր: Ներկայացված գեկուցագրերի հիման վրա համաժողովը պատրաստեց մի պատգամ ուղղված Եվրոպայի բոլոր Եկեղեցիներին և քրիստոնյաներին: Պատգամում մասնավորապես նշված է. «Համաժողովում կարդացված գեկուցումներն ու մտքերի փոխանակությունները հարստացրին մեր հավատը Պարբերական ամսի և գործի նկատմամբ. մի անգամ ևս մենք զգացինք, որ նա ամեն օր գործում է մեր Եկեղեցում և

այսպես ձևերով մեզ առաջնորդում միության ճանապարհի վրա»:

Համաժողովի վերջում շուրջ 200 պատվիրակներ մասնակցեցին Կոնֆերանսի նախագահության և գործադիր կոմիտեի նոր անդամների ընտրությանը: Նախագահության նախագահ ընտրվեց Միրայի միտրոպոլիտ Խրիզոստոմը, որը համաժողովում ներկայացնում էր Կ. Պոլսի Տիեզերական Պատրիարքությունը, որի իրավասության ներքև է գտնվում Կրետեի Եկեղեցին:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՐԿՐԱՆԵՐԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Սույն թվականի հունվարի 28—31-ը Հունգարիայի Ժողովրդական Հանրապետության մայրաքաղաք Բուդապեշտում տեղի ունեցավ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի (ԵՀԽ) ղեկավարների հանդիպումը Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրների ԵՀԽ-ի անդամ Եկեղեցիների ներկայացուցիչների հետ: Նման մի հանդիպում առաջին անգամ տեղի էր ունեցել 1977 թվականի մարտին, դարձյալ Բուդապեշտում:

Սույն հանդիպման նպատակն էր՝ էլ ավելի աշխուժացնել ու ջերմացնել Էկումենիկ կյանքը, ամրապնդել և սերտացնել հարաբերությունները բոլոր Եկեղեցիների միջև՝ Քրիստոսի սիրո մեջ առավել օգտակար լինելու համար միմյանց և միասնաբար ծառայելու աշխարհի բոլոր մարդկանց, որոնք որդիներն են միևնույն Աստուծո:

Ժողովը գումարվեց Հունգարիայի ռեֆորմիստական Եկեղեցու կողքի մեծ սրահում:

Հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու սույն խորհրդակցությանը մասնակցեց Թիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպիսկոպոս Ծաքարյանը:

Հունվարի 28-ին, երկուշաբթի օրը, աղոթքով և ողջույնի ու բարիգալստյան խոսքով ժողովը բաց արեց Հունգարիայի Եկեղեցիների Էկումենիկ խորհրդի նախագահ ղուկո. Տիրո Բարթա եպիսկոպոսը:

Ապա ընդարձակ գեկուցումով հանդես եկավ ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար ղուկո. Ֆիլիպ Փոթըրը: Գլխավոր քարտուղարի գեկուցման մեջ առաջ քաշված հարցերի շուրջ, հաջորդական հինգ նիստերի ընթաց-

քում, տեղի ունեցան ելույթներ և մտքերի լայն փոխանակություն: Եղբայրական համերաշխ մթնոլորտում առաջադրված բոլոր հարցերն ամփոփվեցին համապատասխան որոշումներում:

Խորհրդակցության մասնակիցները միահամուռ այն կարծիքը հայտնեցին, որ ԵՀԽ-ն բոլոր Եկեղեցիների վստահությունը վայելող համաշխարհային մեծ կազմակերպություն է, հետևաբար նրա հաջողությունները պետք է նկատել յուրաքանչյուր անդամ Եկեղեցու հաջողությունը: Իսկ բոլոր Եկեղեցիները օղակողը ինքը՝ մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսն է. նրա հավատով և սիրով ոգեշնչված՝ բոլոր եկեղեցիները պարտավոր են շարունակել իրենց աստվածահաճո ծառայությունը հանուն առաջադիմության և մարդասիրության:

Խորհրդակցությունում սոցիալիստական երկրների Եկեղեցիների ներկայացուցիչներին մասնավորապես մտահոգում և զբաղեցնում էին ներկա աշխարհը և համայն մարդկությունը հուզող այնպիսի հարցեր, ինչպիսիք են աշխարհի խաղաղության չափանման, ցեղային խտրականության վերացման, մարդու իրավունքների, կրոնի ազատության, տնտեսական և հոգևոր-քաղաքական ռեսուրսների օգտագործման ու բաշխման վերաբերյալ հարցերը:

Ժողովի մասնակիցները նշեցին, որ այսօր չի կարելի լինել քրիստոնյա և չպայքարել այնպիսի մեղքի դեմ, ինչպիսին է, օրինակ, օեղասպանությունը, որը պետք է արմատախիլ անել մարդկության միջից, որպեսզի կամք չունենան նրանից ծնվող մուս մեղքերը՝ լինի դա ցեղասպանություն կամ ապարտեիդ:

Ժողովը առանձնակի կարևորությամբ զբաղվեց խաղաղության պահպանման հարցով, որպես առաջնահերթ հրամայական՝ ընդգծելով, որ ով խաղաղության հետ չէ՝ նաև Քրիստոսի հետ չէ և չունի էկոմենիկ նշմարիտ ոգի:

Վերոհիշյալ Եկեղեցիների ներկայացուցիչների բոլոր մտահոգությունները հալասարապես բաժանում էին խորհրդակցությանը մասնակցող ԵՀԽ-ի ղեկավարները, որոնք իրենց պատրաստակամությունը ցուցաբերեցին առաջադրված բոլոր հարցերում օգնելու նրանց և գործելու նրանց հետ միասին:

Խորհրդակցությունն զբաղվեց նաև 1983 թվականին գումարվելիք ԵՀԽ-ի 6-րդ համաժողովին վերաբերող գործնական մի շարք հարցերով:

Հունվարի 31-ին, ուրբաթ օրը, երեկոյան, Հունգարիայի Եկեղեցիների Էկոմենիկ խորհուրդը, ի պատիվ խորհրդակցության մասնակիցների, կազմակերպեց պաշտոնական ընդունելություն, որին ներկա էր նաև Հունգարիայի Ժողովրդական Հանրապետության պետական քարտուղար և կրոնական գործերի խորհրդի նախագահ Իմրե Միտեշը:





ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԲՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ
«ՄԵՐ ԱՇԽԱՐՀԸ, ՆՐԱ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀՈՒՅՍԵՐԸ»
ԹԵՄԱՅՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

1979 թ. հոկտեմբերի 29-ից դեկտեմբերի 4-ը եղբայրական Վրաստանի մայրաքաղաքում իր աշխատանքները գումարեց խաղաղության Բրիստոնեական Կոնֆերանսի «Մեր աշխարհը, նրա խնդիրներն ու հույսերը» թեմայով միջազգային համաժամարմբը:

Համաժամարմբի մասնակիցների առջև ողջույնի և քաջման խոսքով հանդես եկավ Համայն Վրաստանի Պատրիարք-կաթողիկոս Իլիա Բ-ը:


Սույն աշխատանքներին, որին մասնակցում էին 16 երկրներից ժամանած 41 մասնակիցներ, հանուն Վեհափառ Հայրապետի իր մասնակցությունը բերեց նաև վրահայոց թեմի առաջնորդ գերաշնորհ տ. Գեվորգ եպիսկոպոս Սերայդարյանը, որը ժողովի մասնակիցներին փոխանցեց Ամենայն Հայոց Հայրապետ Ս. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի ողջույններն ու օրհնությունները:

Համաժամարմբը, որի ղեկավարության կազմում են խաղաղության Բրիստոնեա-

կան Կոնֆերանսի գլխավոր քարտուղար դոկտոր Լյուբոմիր Մերեժովսկին (ՉՍՍՀ), պրոֆ. Գերհարդ Բասսարակը (ԳԴՀ) և ուրիշներ, շուրջ հինգ օր տևած այս հավաքույթի ընթացքում մեծ ուշադրություն դարձրին միջազգային մի շարք հարցերի՝ խաղաղության պահպանման, ժողովուրդների միջև համերաշխության և այդ առթիվ քրիստոնյաների ունեցած դերի ու պատասխանատվության մասին:

Դեկտեմբերի 2-ին ժողովի մասնակիցները վրացական հնագույն մայրաքաղաք Մցխեթի «Սվետիցխովելի» Մայր տաճարում կատարեցին էկումենիկ ոգով համատեղ մի աղոթք աշխարհի խաղաղության համար, որին իր մասնակցությունը բերեց նաև տ. Գևորգ սրբազանը:

Նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 4-ը հյուրերը ծանոթացան եղբայրական Վրաստանի տեսարժան շատ վայրերի և անմոռանալի տպավորություններով մեկնեցին այդ հյուրընկալ հողին:



ԳՐԻԳՈՐԻԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ

ԱՄՍՆՈՐՅԱՆ ՔԱՐՈՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(1 հունվարի 1980 թ.)

«Նոր խորանիդ Արեգական Արդարությանն նոր օրհնությունն տալու և անդադար բարեբանեցուք»:

«Արդարությանն Արեգակիդ Նոր խորանին նոր օրհնությունն տալու և անդադար բարեբանեցուք»:

Ընդհանրապես Հայրապետ Հայոց,

Սիրելի հավատացյալ ժողովուրդ,

Այս պահին, երբ արդեն թևակոխել ենք 1980 թվականի նոր տարին, և մենք բոլորս համակված ենք դեպի նորը ձգտելու, վերանորոգվելու տենչով, իբրև քրիստոնյաներ, մեր մտքի հալացքները ուղղվում են դեպի քրիստոնեական մտածելակերպի ակունքները՝ փնտրելու և գտնելու համար այնտեղ գաղափարներ, որոնք իրական արժեք ներկայացնեն և կարողանային մեզ ներշնչել ու վերանորոգել մեր ուժերը: Իբրև հայ քրիստոնյաներ այդ անելու հասարակ մենք շատ հեռուները դիմելու անհրաժեշտությունը չունենք: Մեր քրիստոնեական մտածելակերպը, արտահայտված մեր բազմադարյան ազգային գրականության մեջ, այնքան հարուստ է, որ լիովին կարող ենք բավարարվել դրանով: Հենց մեր այսօրվա բնարանը կարող է այդ վկայել:

Քրիստոսի իրողությունը կատարելապես խտացված է այնտեղ: Մի հանգամանք, որը ցույց է տալիս, թե մեր մեկնիչներն արդեն 5—8-րդ դարերում ինչպիսի խորությամբ էին ըմբռնում Ս. Գրքը:

Ծարականի սրտարտվա այդ տողի մեջ

Քրիստոս անվանված է **Արդարությանն Արեգակ**, իսկ նրա Ավետարանը՝ մարդկությանը բերած նոր ուսմունքը՝ **Նոր խորան**, որին արժանի է, որ մենք, կրկին Ծննդյամբ նորոգված մարդիկս, նոր օրհնությունն տալու՝ մեր սրտերի բովանդակ անկեղծությամբ:

Իրավամբ, պայմանականորեն Նոր տարի դիտված ժամանակահատվածը այն պահն է մեր կյանքում, երբ ամեն մարդ անդրադառնում է ժամանակի խորհրդին և ճիշդ անում վերագտնելու նրա արժեքը: Նախ ետադարձ ակնարկով քննում և վերլուծում է իր ապրած վերջին տարին՝ աշխատելով հանրագումարի բերել իր մտածումները, իր գործերը և տեսնել ստացված արդյունքը: Այդ անելուց հետո նա կազմում է նոր ծրագրեր՝ դրանք եկող տարում իրագործելու առաջադրանքով: Ամբողջ այս գործողության հատկանշական կողմը մարդու՝ դեպի նորը, դեպի դրականը, դեպի արդյունավետը ձգտելու մղումն է:

Փառեզի պես հնչող շարականի վերոհիշյալ տողերի մեջ արտացոլվում է այդ ձգտումը:

Իրականացնելու համար թե՛ մեր, թե՛ ուրիշների այդ բարի ձգտումները, մենք, իբրև քրիստոնյաներ, կարող ենք միմյանց հանձնարարել Ավետարանը՝ խորապես համոզված, որ Այն իր մեջ պարունակում է մի ուժ, որը կարող է էապես փոխել մարդուն: Այդ տեղի ունենալու դեպքում

համոզված ենք, որ մարդկությանը հուզող շատ հարցեր դրական լուծում կգտանեն:

Այդ ցանկալի պահը, սակայն, հետո է այժմ, իսկ մենք շարունակում ենք ապրել այսօրվա աշխարհի իրականության պայմաններում: Մեր պարտականությունը մնում է սակայն Ավետարանի պատվիրանների կենսագործման հետապնդումը: Մանավանդ, նոր տարվա սեմին այդ զգացումն ավելի շեշտված պետք է լինի մեր մեջ:

Իբրև հայ քրիստոնյաներ երբ փորձում ենք մտածել ընդհանրապես ժամանակի մասին, ապրված ժամանակի ու նրա պարտականության մասին, պարտավոր ենք անդրադառնալ նաև մեր ազգային-եկեղեցական կյանքին: Այն, իբրև փորձառություն, հաճախ դառն է եղել անցյալում, որի ոգեկոչումն այսօր էլ տխրությամբ և ցավով է համակում մեր հոգիները: Յուրաքանչյուր հայի հարատև աղոթքն է և պայքարը, որպեսզի չկրկնվեն այնևս այդպիսի դառն պահեր մեր ժողովրդի կյանքում:

Իսկ ամեն անգամ, երբ, հայացք նետելով մեր ետև, տեսնում ենք այնտեղ առաջընթացի, հաջողությունների իրագործումներ, մենք զոհ սրտերով խանդավառվում և լցվում ենք գործելու նոր եռանդով:

Ահա այդպիսի զգացումով համակված, բոլոր հայերս այս պահին դիմավորում ենք նոր ժամանակահատվածը, ուր թևակոխում ենք արդեն, այդ զգացումով, որովհետև ինչպես հայրենիքը, այնպես էլ սփյուռքաբնակ մեր ժողովուրդը ունեցան խաղաղության և շինարար աշխատանքի մեկ տարի ևս: «Մաղաղություն» բառը այստեղ կարելի է ընկալել որոշ վերապահումով, որովհետև Լիբանանի մեր ազգակիցները անցնող տարում ևս ստացան ծանր հարվածներ:

Աղոթենք, որ ցանկալի խաղաղությունը տևական դառնա Լիբանանում և ամբողջ աշխարհում:

Քիչ հետո կկատարվի Հայրապետական մաղթանք: Դա մասնավոր արարողություն է, որով խնդրում ենք Աստծուն, որպեսզի նա զորավոր լինի հայ ժողովրդին, Հայ Եկեղեցուն և Լուսավորչի Գահին և Իր պահպան Աջը անպակաս անի մեր բոլորի վրայից: Ամեն նոր տարի մենք սկսում ենք համամյան աղոթքով: Դա նշանակում է նաև՝ հայցել, որ Քրիստոսի Ավետարանի լույսը մեզ բոլորիս ուղեցույց հանդիսանա ամբողջ տարվա ընթացքին:

Արդարև, Ավետարանի մշտանորոգ շունչը մենք զգում ենք ոչ միայն տարեմուտի խորհրդավոր այս պահին, այլև տևապես՝ գալիք օրերի ընթացքին: Մնայուն կերպով

է, որ մենք Ավետարանով, նորոգված, պատրաստ պիտի լինենք դիմավորելու գալիք օրերը՝ ակնկալելով, որ նրանք մեր բարի ծրագրերի կատարումը հանդիսանան:

Այս գիտակցությամբ զորացած, մենք ճանապարհում ենք ավարտված՝ 1979 թ. և դիմավորում գալիք՝ 1980 թվականը, այն հույսով, որ նա ևս պիտի լինի մեզ համար հառաջդիմության և շինարար աշխատանքի տարի: Իսկ յուրաքանչյուր տարին, որ անցնում է շինարար աշխատանքով խաղաղության պայմաններում, հայ ժողովրդի համար ամրապնդման, ինքնահաստատման տարի է:

Այս առթիվ բոլորիս սրբազան պարտականությունն է նաև՝ շնորհավորել Հայոց Հայրապետի Նոր տարին և ցանկանալ Նորին Սրբությանը երկար կյանք և առողջություն:

Վեհափառ Տեր, Լուսավորչից մինչև Ձերդ Սրբությունը Հայ Եկեղեցին ընդհատում չապրած մի իրողություն է: Բոլորս էլ բավարար չափով գիտենք այդ փառավոր պատմությունը: Մեր սուրբ Եկեղեցին՝ մոտ 1700 տարիների ընթացքում արձանագրել է թե՛ փառքի, թե՛ տխրության էջեր, ապրել է թե՛ վերելքի, թե՛ անկման շրջաններ: Այսօր, սակայն, պայծառ է նրա հորիզոնը: Ձերդ Վեհափառության գահակալության տարիներին փոխվեց մեր Եկեղեցու կյանքի պատկերը: Ձերդ Սրբության ղեկավարությամբ նա հանգրվան առ հանգրվան շինարար անշեղ վերելք արձանագրեց:

Համայն հայ ժողովուրդը իմ բերանով այս պահին երկար կյանք է մաղթում Ձերդ Սրբությանը:

Թող Տերը Ձեզ զորավոր մնա, և Դուք կարողանաք կյանքի կոչել Ձեր բոլոր նոր ծրագրերը:

Վեհափառ Տեր, թույլ տվեք, հանուն Մայր Աթոռի միաբանության և այստեղ ներկա ժողովրդի, շնորհավորել Ձերդ Սրբության Նոր տարին և մաղթել երկար տարիների երջանիկ գահակալություն:


Թող Տերը օրհնի 1980 թվականը, որպեսզի այն դառնա համայն մարդկության և մեր ժողովրդի համար խաղաղության, շինարար իրագործումների և երջանկության տարի:

Թող անասան մնա լուսավորչանորոգ Հայ Եկեղեցին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Թող Է՛լ ավելի ծաղկի, շենանա և բարգավաճի մեր մայր հայրենիքը:

Շնորհավոր Նոր տարի:

Բարի տարի:



ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՏՈՒՆԵԼԻ ՍՐԵՆԻ ՀԱՄԱՌՈՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Հունվարի 15-ին

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ծրագրել է 1980 թվականի ընթացքում ընթերցողների ուշադրությանը ներկայացնել Հայ Եկեղեցու տոնելի սրբերի կենսագրությունները:

Հայ Եկեղեցին ունի տոնելի սրբերի երկու հիմնական դասակարգ.

ա) Աստվածաշնչական սրբեր.

բ) Ետատաքելական՝ քրիստոնեական սրբեր:

«Էջմիածին» ամսագրի 1977 թ. է—ԺԱ, 1978 թ. Ա—Գ և 1979 թ. Բ, Դ—Է, ԺԱ—ԺԲ համարներում հրատարակվեց Կ. Պոլսի հայոց Պատրիարք տ. Շնորհք արքեպ. Գալուստյանի «Աստվածաշնչական սուրբեր» արժեքավոր աշխատության երկրորդ մասը (Նոր Կտակարանի սուրբեր): Հետևաբար այս տարվա ընթացքում «Էջմիածին» ամսագրի էջերում կներկայացվեն Հին Կտակարանի և ետատաքելական՝ քրիստոնեական սրբերը:

Այս համարում ներկայացնում ենք հունվար ամսվա տոնելի սրբերի կենսագրությունները:

Հունվարի 14-ին

ՏՈՒ ՇՆՆԴՅԱՆ Ս. ՀՈՎՀԱՆՆՈՒ
ԿԱՌԱՊԵՏԻ

Այս մասին տես «Էջմիածին» ամսագիր, 1977 թ., № է, էջ 20—22:

* Սրբերի կենսագրությունները տրված են ըստ նետկյալ գրքերի. **Թորգոմ Պատրիարք Գուշակյան**, Սուրբ և տոնք, Երուսաղեմ, 1939 թ., **Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան**, Համաքրիստոնեական սուրբեր, Խաթանալու, 1978 թ., **Եզնիկ արևդա Պատրյան**, Հայ եկեղեցու տեղական տոնելի սրբերը, «Էջմիածին» ամսագիր, 1975 թ., № Թ, էջ 33, № Ժ, էջ 49:

ՊԵՏՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏ ԵՎ ԱԲԻՍՈՂՈՍ
ՍԱՐԿԱՎԱԳ

Պետրոս Հայրապետը 300 թվականին նշանակվում է պատրիարք Ալեքսանդրիայի Աթոռի, Եվսեբիոս եկեղեցական պատմիչի կողմից հիշատակվում է որպես «մի տիպար եպիսկոպոս, նշանավոր որքան իր առաքինի կյանքով, նույնքան և Ս. Գրոց իր հմտությամբ»:

Շատ դժվարին ժամանակաշրջանում պաշտոնավարում է 11 տարի: Դիոկղեսիանոսի հալածանքներից ազատվելով, սահմանում է կանոններ, որոնց հիման վրա զոչացողները կարող էին կրկին վերադառնալ եկեղեցու գիրկը:

306 թվականին երբ կրկին վերակցվում են քրիստոնյաների դեմ հալածանքները, Պետրոս հայրապետը հեռանում է Աթոռից և ապաստան գտնում Պաղեստինում և Միջագետքում: Բայց լսելով, որ իր զործակիցներից շատերը նահատակվել են, և անտերունչ է մնացել իր հոտը, վերադառնում է Ալեքսանդրիա, որտեղ և բանտարկվում: Երբ Մաքսիմիանոս Տաժի հազարապետը ցանկանում է դուրս քերել նրան բանտից, գլխատման վայր տանելու համար, ժողովուրդը, խոնավելով բանտի շուրջ, թույլ չի տալիս: Ավելի ուշ, սակայն, 311 թվականին ընդունում է մարտիրոսության պաակր:

Պետրոս հայրապետի բոլոր հալածանքների և չարաարանքների ժամանակ նրա անբաժան ուղեկիցն ու չարաարանակիցն էր Աբիսողոմ սարկավազը, որն իր կյանքը կնքում է խոստովանական մահով:

ՎԼԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Փոքր Հայքի Սեբաստիայի եպիսկոպոս: Սրբակյաց և հրաշագործ հոգևոր հովիվ, որ Դիոկղետիանոսի հալածանքների ժամանակ քաջալերում էր նահատակներին, որոնցից շատերին այցելում էր հենց բանտում, ինչպես Եվստրատիոսյաններին:

Լուկիանոսի օրոք երբ սաստկանում է հալածանքը, Եկեղեցու հոտը իսպառ չքանջնջվելու համար խորհուրդ է տալիս ժողովրդին՝ հեռանալ մեծ քաղաքներից և թաքնվել լեռներում, իսկ ինքը գնում է Արգեսու լեռան մենաստաններից մեկում ճգնելու: Քանի որ ինքը հմուտ էր բժշկության մեջ, օգնում է ժողովրդին բժշկությամբ և հուսադրիչ հորդորներով:

Սակայն հալածիչ կուսակալի մարդիկ հայտնաբերում են Վլաս եպիսկոպոսի մենաստանը, ձերբակալում նրան ու տանում քաղաք: Երբ ներկայանում է ատյանին, իր համարձակ պատասխաններով կշտամբում է Ագրիկոլայոս դատավորին և զանակոծվելով՝ արյունվառ նետվում բանտ: Յոթ բարեպաշտ կանայք օծում են իրենց Վլաս եպիսկոպոսի թափած արյունով, որի համար և սրախողխող լինում:

Երկրորդ անգամ հարցաքննվելիս Վլաս եպիսկոպոսը ավելի խիստ պատասխաններ է տալիս: Նրան նետում են Սեբաստիայի լիճը, որտեղից անվնաս ազատվում է: Այնուհետև, 316 թվականին, նրան գլխատում են: Նրա գերեզմանաքարը մինչև վերջերս գտնվում էր Սեբաստիայում: Այդ տեղը ուխտատեղի էր դարձել քրիստոնյաների համար:

Հունվարի 17-ին

ԱՆՏՈՆ ԾԳՆԱՎՈՐ

Հայր հարանց և նահապետ վանական կյանքի, առաջին ճգնավոր և միայնակյաց: Ծնվել է 251 թվականին Վերին Եգիպտոսի Կոմա քաղաքում, Հերակլեայի մոտ, ազնվական հարուստ ընտանիքում: Ծնողների մահից հետո, ողջ ունեցվածքը վաճառելով և բաժանելով աղքատներին, քաշվում է մերձակա մի անապատ և վարում խստակրոն ճգնավորի կյանք՝ հաղթահարելով բազում փորձություններ: Նրան են հետևում շատ ու շատ աշակերտներ, և 305 թվականին հիմնում է առաջին վանական միաբանությունը Թեբայիդում:

Նրա հռչակը տարածվում է ամենուր՝ և՛ Արևելք, և՛ Արևմուտք: Այս բանը գորավոր ուժ է հանդիսանում ընդդեմ արիոսականության և Նիկիայի ժողովում՝ հակադեղիկ որոշակի նշանակություն:

Ս. Անտոնը մահանում է 356 թվականին, 105 տարեկան հասակում: Նրա կենսագրությունը, որ թարգմանվել է մեծ ոսկեդարյան հայերենով, գրել է Ս. Աթանաս հայրապետը:

Հունվարի 19-ին

ԹԵՈՂՈՍ ԹԱԳԱՎՈՐ (ՄԵԾ)

379 թվականին ընտրվում է կայսր: Թեոդոս Մեծը պաշտպան է կանգնում ուղղափառության և արքայազն բոլոր եպիսկոպոսներին վերադարձնում իրենց Աթոռները: Թեոդոս Մեծի օրոք և հովանավորությամբ 381 թվականին գումարվում է Կ. Պոլսի Տիեզերական ժողովը, որը մեկընդմիջտ վերջ է դնում արիոսականությանը և Մակեդոնի հոգեմարտ աղանդին:

Սակայն Թեոդոս Մեծի անունն առավել հավերժացել է Միլանի Ամբրոսիոս եպիսկոպոսի առջև արտասովոր խոնարհամտության համար: Երբ Թեոդոսի հրամանով մահապատժի են ենթարկվում 7.000 քաղաքացիներ՝ ըմբոստության համար, Ամբրոսիոս եպիսկոպոսն արգելում է կայսեր եկեղեցի մուտք գործել: Թեոդոսը ոչ միայն չի ըմբոստանում Աստուծո ծառայի առջև, այլև խոնարհությամբ և ամնունչ համաձայնում է կրել իր համար սահմանված պատիժը: Ութ ամիս հետո է միայն նրան ներում շնորհվում:

Թեոդոս Մեծը մահացել է 395 թվականին: Դամբանական է խոսել Ամբրոսիոս եպիսկոպոսը:

ԵՓԵՍՈՍԻ ՅՈԹ ՄԱՆՈՒԿՆԵՐ

Կոչվում են մեծ Յոթ Ննջողներ: Այս յոթ երիտասարդները, որոնք բոլորն էլ մեծամեծների զավակներ էին, հրապարկում են քրիստոնեական կենցաղով և, գաղտնաբար մրկտվելով, վերանվանվում Մաքսիմիանոս, Մարտիանոս, Ամոնիոս, Դիոնիսիոս, Կոստանդիանոս, Անտոնիոս և Հովհաննես: Երբ հայտնի է դառնում, որ նրանք քրիստոնեություն են ընդունել, կայսրը հրամայում է գտնել նրանց և իր մոտ բերել: Սրանք փախչում և ապաստան են գտնում մոտակա լեռան քարայրում: Հայտնաբերվելով քարայրը, կայսեր կողմից հրամայվում է շարել մուտքը, որպեսզի նրանք սովամահ լինեն: 140 տարի նրանք քարայրում մնում են քնած: Մեծն Թեոդոկայսեր օրոք, 389 թվականին, սույն քարայրի մոտակայքում գտնվող կավածի տեղը հրամայում է բանալ մուտքը՝ քարայրն իր ոչխարների համար որպես փա-

րախ գործածելու նպատակով: Քարայրի մուտքը բացվելու հաջորդ օրն իսկ արթնանում են յոթ երիտասարդները: Նրանց այնպես էր թվում, թե իրենք մեկ օր առաջ էին քնել: Այս իրողության իսկության լուրը տարածվում է ամենուր: Փանի որ բազմաթիվ տարիներ էին անցել, և իրենք էլ չէին կարողանում համակերպվել շրջապատին, կրկին վերադառնում են քարայր և նույն՝ 389 թվականին մահանում:

Հունվարի 21-ին

ԿԻՐԱԿՈՍ ՄԱՆՈՒԿ ԵՎ ԻՐ ՄԱՅՐԸ՝ ՀՈՒԴԻՏԱ

Հուլիսյան գոմիացի աստվածասեր աչրի կին էր և ապրում էր իր երեք տարեկան զավակի՝ Կիրակոսի հետ: Երբ այստեղ սկսվում են հազաձանքները՝ քրիստոնյաների դեմ, Հուլիսյան իր մանկան հետ գնում է Տարսուհ: Այստեղ նույնպես կիրառվում էր հալածանքը, որի պատճառով Հուլիսյան ձերբակալվում և ներկայացվում է ատյանին ու անկուր չարչարանքների ենթարկվում: Կիրակոս մանուկը, տեսնելով մոր չարչարանքները, հակառակ դատավորի՝ իր նկատմամբ փաղաքշանքների և սիրալիր խոսքերի, ճշում էր և կրկնում մոր խոսքերը՝ ուղղված դատավորին. «Ես քրիստոնյա եմ և պաշտում եմ Տեք Հիսուսին»: Կիրակոսն ամեն կերպ ցանկանում է ազատվել դատավորի ձեռքից և մոտենալ մորը: Սակայն չի կարողանում: Համբերությունից դուրս գալով՝ երեխան սկսում է ոտքերով ու ձեռքերով հարվածել դատավորին: Դատավորը զգալով, որ իր փաղաքշանքները և սիրալիր խոսքերն իզուր են, զարացած, տղային ցած է նետում աստիճաններից: Գլուխը քարին զարնվելով և ջախջախվելով, Կիրակոսը մահանում է: Սակայն Հուլիսյան ուրախ էր, որ իր աչքերի առջև որդին ընդունեց նահատակության պատկեր: Այնուհետև անասելի տանջանքների են ենթարկում մորը և 305 թվականին գլխատում:

Հուլիսյանի երկու նածիշտները գիշերով օդաչանում են մոր և որդու դիակները և բարցնում Տարսուհից դուրս գտնվող մի քարայրում:

ԳՈՐԴԻՈՍ ՀԱՐՅՈՒՐԱԳԵՏ

Գորդիոս հարյուրապետը Կեսարիայում իր զինվորական գործում սիրված ամենավորություն էր, քրիստոնյա ընտանիքի զանակ: Դիոկղետիանոսի օրոք քրիստոնյաների նկատմամբ սկսված հալածանքները

ստիպում են նրան հեռանալ այս թոհ ու բռնից և, քաշվելով մի անապատ, իրեն նվիրել աստվածամերձ կյանքի: Հոգեսես անչափ ճնշվում է, որ չի կարողանում օգնել քրիստոնյա իր դավանակիցներին՝ նրանց հալածանքների ժամանակ: Այնուհետև չկարողանալով հանդուրժել Լուկիանոս կալսեր կողմից վերսկսված հալածանքները՝ քրիստոնյաների նկատմամբ, Գորդիոսը, աստվածային հրով վառված, իջնում է Կեսարիա և հեթանոսական տոնախմբության ժամանակ հրապարակում իր քրիստոնյա լինելը: Այդտեղ էին հավաքվել նաև քաղաքի մեծամեծները: Իշխանի հրամանով ձերբակալվում և բանտ է նետվում Գորդիոսը՝ այդ համարձակ քրիստոնյան: Այնուհետև ենթարկվում է բազմաթիվ անկուր չարչարանքների: Սակայն այդ բոլոր տանջանքները նա կրում է ռդու արիության և տոկունությամբ: Ապա վճռվում է մահապատիժ՝ կրակի մեջ այրելով: 320 թվականին, մինչ հրամանի կիրառելը, Գորդիոսն ինքն իրեն նետում է կրակի մեջ և, Աստծուն օրհնելով ու աղոթելով, հոգին ավանդում: Քրիստոնյաները հալածքում են նահատակի ոսկորները և թաղում:

Տարիներ անց Բայսեղ հայրապետը նրա շիրմի վրա կառուցել է տալիս եկեղեցի:

ԳՈՐԴԻՏՈՍ

Փոքր Հայքի Մելիտինե քաղաքից: Ազգությամբ եղել է հավանաբար հայ, ազգովական ընտանիքից: Ապրել է Գ դարի կեսերին: Եղել է բարձրաստիճան պաշտոնակալ: Ամուսնացել է քաղաքի հռոմայեցի կառավարիչ Փելիքսի դստեր՝ Դավիդինի հետ: Նեաբիտն գորակալի ամենիսական ազդեցությամբ և ներքին համոզմունքով ընդունում է քրիստոնեություն: Թեև դեռևս մկրտված չէր, բայց ապրում էր բարեպաշտ քրիստոնյայի կյանք: Քրիստոնեական հալածանքների ժամանակ Գորդիոսն ընդունում է Դեկու կալսեր Մելիտինե հղած հալածանքի հրովարտակի դեմ, հրապարակաչին ժողովի ժամանակ պատում այն և դեն նետում: Ապա հրապարակ բերված կոտորների արձանները տապալում է զետիմ՝ ասելով. «Եթե ես՝ մահկանացու մարդս, կարող եմ կործանել այս ամենուն՝ աստված կոչվածներին, նրանք ինչպե՞ս կարող են լինել մեր փրկիչները և բարեբարները: Մեկ է աշխարհի բարեբարը, ճշմարիտ Աստվածը, որ ստեղծել է երկինքը և երկիրը, մեկ է Փռվիչը, նույնիսկ Հիսուս Քրիստոս, որ ամենքիս մեղքերի համար զոհել է իր կյանքը և հարություն

առել: Դատավորի հորդորներին, այն է՝ հրաժարվել իր մտքերից և կրկին վերադառնալ նախկին դավանանքին, այսինքն՝ կուսապաշտության, Պողիկտոսը մնում է անդրդվելի: Անդրդվելի է մնում նաև կնոջ թախանձանքներին, այն է՝ խնայել շոկեր իր երեխաներին: Վճռվում է մահապատիժ: Գլխատման պահին հեղված արյունը Պողիկտոսի համար համարվում է քրիստոնեական մկրտություն:

Մելիտինեում, ի հարգանս մեծ նահատակի, կառուցվում է մի եկեղեցի, որը հետագայում վերածվում է մեծ ուխտատեղիի:

ԳՐԻԳՈՐԻՍ ՎԿԱ ՌԱԺԻԿ

Ծագումով պարսիկ էր, Ռաժիկ կոչված ցեղից, Մանաճիհր անունով: Ծատ վաղուց Հայաստան է գալիս և, որակյան գտնելով հայոց կրոնը, այսինքն՝ քրիստոնեությունը, ընդունում է այն և վերանվանվում Գրիգորիս: Այնուհետև միառժամանակ ապրում և գործում է Դվինի շրջակա վանքերից մեկում, որտեղ էլ իրեն դրսևորում է արտակարգ մարդասիրությամբ: Ի հարգանս նրա վանքը հետագայում կոչվել է Ռաժիկ Մանաճիհր:

Երբ Դեմեշապուհը, որպես մարգապան, գալիս է Հայաստան, մասնավորապես զբաղվում է մոգակրոնությունից հրաժարված Գրիգորիսով: Կանչում է նրան իր մոտ և հորդորում ու ստիպում վերադառնալ Պարսկաստան, որպեսզի այդպիսով ստիպված լինի հրաժարվել քրիստոնեությունից: Գրիգորիսը կտրականապես մերժում է Դեմեշապուհին:

Այնուհետև Գրիգորիսը ենթարկվում է բազմաթիվ չարչարանքների և 549 թվականին Դվինի մեջ գլխատվում:

Հունվարի 22-ին

ՎԱՀԱՆ ԳՈՂԹՆԱՑԻ

Գողթն գավառի նախարար Խոսրով իշխանի որդին էր: Չորս տարեկան էր Վահանը, երբ տարագրվում է Դամասկոս: Այնտեղ իր հասակակից շատ երեխաների հետ կրթվում է իսլամական հավատքով՝ վերանվանվելով Վահապ: Ուսման մեջ արտակարգ ընդունակությունների և չափազանց համեստության համար Օմար ամիրապետը նրան նշանակում է իր արքունիքում դիվանադպիր:

719 թվականին երբ Հովհան Օձնեցի կաթողիկոսը Օմար ամիրապետից թույլտվություն է ստանում գերեզարծության, վեր-

ջինս չի հոժարում բաժանվել Վահանից՝ նրան անսահման սիրելու պատճառով: Վերջապես, սակայն, Վահանը Օմար ամիրապետից թույլտվություն է ստանում այցելել իր ծննդավայր և վերադառնալ: Հագիվ էր Վահանը հասել հայրենիք, երբ 720 թվականին մահանում է Օմար ամիրապետը: Օգտվելով իրավիճակից, Վահանը մնում է հայրենիքում և կրկին վերադառնում քրիստոնեական դավանանքին: Ամուսնանում է Սյունյաց հարգեմ նախարարի դստեր հետ և այսպես ապրում շուրջ տասը տարի:

Օմարի հաջորդ Հեշմ ամիրապետը, իմանալով Վահանի քրիստոնեության գիրկը վերադառնալու մասին, փնտրում է նրան և ցանկանում կրկին իսլամ դարձնել: Սրանից խուսափելու համար Վահանը ծպտված թափառում է գավառից գավառ և որպես հոգևորական ապաստանում զանազան վանքերում: Ի վերջո բռնվում է Մրվան ուստիկանի կողմից և 737 թվականին նահապտակվում:

Սերգիսապուհի եպիսկոպոսը Վահանի գերեզմանի վրա կանգնեցնում է մի վկայարան:

ԵՎԳԻՆԵ

Եվգինեն հոռմայեցի ազնվական Փիլիպպոսի դուստրն էր: Ապրել է հավանաբար Բ դարի վերջերին, Կոմոտոս կայսեր օրոք: Երբ նրանց ընտանիքը տեղափոխվում է Եգիպտոս, նրանք առիթ են ունենում շրփվելու քրիստոնյաների հետ: Եվգինեն կարդում է Ս. Գիրքը և սրբերի վարքը: Խորապես ազդվելով Թեկդի վկայաբանությունից, ուխտում է հեռու մնալ ամուսնական կյանքից և իր երկու ներքինի ծառաների հետ ընդունում քրիստոնեություն, մկրտվում, ծպտվելով որպես այր՝ վերանվանվում Եվգինեսու ու նվիրվում ճգնաժողովական կյանքի:

Մեղանա անունով մի կին սիրային առաջարկություն է անում Եվգինեսուին: Վերջինս մերժում է նրա առաջարկությունը: Մեղանան, վրեժխնդիր լինելու համար, անհիմն զրպարտանքներով Ալեքսանդրիայի դատավորի՝ Աույն ինքն Փիլիպպոսի մոտ է կանչել տալիս Եվգինեսուին: Եվ երբ պարզվում է Եվգինեսուի ով լինելը, հայրը անչափ ազդվում է այդ բանից և ընդունում քրիստոնեություն, որի համար և դատապարտվում է մահվան:

Այնուհետև Եվգինեսուը իր մոր, երկու եղբայրների և երկու նաժիշտների հետ վերադառնում է Հոռմ, որտեղ և ինքն ու նա-

միշտները բանտի մեջ նախատակվում են, իսկ մայրն ու եղբայրները՝ ապրում բարեպաշտ կյանքով:

Հունվարի 24-ին

ՏՐԻՓՈՆ

Փոյուգիացի, քրիստոնյա բնտանիքի զավակ: Ապրել է Գ դարում և ժամանակակից է Ս. Գրիգոր Սբանչեկագործին: Վաղ հասակից զրկվելով հորից, բարեպաշտ մոր խնամքի տակ առանում է քրիստոնեական ոգով դաստիարակություն: Մանուկ հասակից անհավատալի մարդասիրություն է ցուցաբերում դեպի հիվանդները և դժբախտները՝ բժշկելով նրանց գերբնական օրորությամբ և հավատքի ուժով: Դեկոս կայսեր օրոք ենթարկվում է անասելի հալածանքների և տանջանքների. աչքվում է խարույկի մեջ, ձիարձակարանի մեջ՝ կոխտովում ձիերի սմբակների տակ, բայց այս բոլորին տոկում է ոգու արիությամբ: Վերջիվերջո գլխատվելով բնդումնում է մարտիրոսական պսակ:

ՊԱՐՍԱՄ

Եղել է Եդեսիայի եպիսկոպոս և ապրել Տրայանոս կայսեր օրոք, Բ դարի սկզբներին: Դարձի է բերում բազմաթիվ հեթանոսների, որոնց թվում նաև՝ Շարպիլ կոտրի մեկ քուրմի, որը դրա համար նախատակվում է: Շատերի հետ Պարսամը նույնպես ձերբակալվում և նետվում է բանտ: Բազմաթիվ տանջանքներից և չարչարանքներից հետո կայսեր հրամանով քրիստոնե-

յաները ազատվում են բանտից: Ազատվածների թվում էր նաև Պարսամը, որը հետագա իր կյանքը ապրում է բարի վարքով և սուսքինությամբ ու կնքում իր մահկանացուն:

ՈՆՈՓՐԻՈՍ

Թերալիդի վանքերից մեկում նախ Երզնավոր էր, ապա, այդ բանը քիչ համարելով, Եդիսա մարզարևի և Հովհաննես Մկրտչի նման քաշվում է մի անապատ վայր և շուրջ 60 տարի ապրում ճգնավորի կյանք՝ աղոթքով և խոկումով:


Պափնոտիոս անունով մի ճգնավոր Ս. Հոգու թելադրանքով գտնում է Ոնոփրիոսին իր ճգնարանում՝ մերկ վիճակում, մազակալած մարմնով: Ի թիվս քրիստոսաբարո ալ հորդորների, Ոնոփրիոսը պատվիրում է՝ իր մահից հետո իր մարմինը թաղել նույն տեղում: Նույն օրն իսկ, շուրջ 400 թվականին, Ոնոփրիոսը մահանում է: Ըստ իր պատվերի՝ թաղվում է նույն տեղում:


Այնուհետև Ոնոփրիոսի կյանքի և մարդասիրական պատգամների մասին Պափնոտիոս ճգնավորը պատմում է իր միաբանակիցներին:

Հունվարի 26-ին

ՍՐԲՈՅՆ ԱԹԱՆԱՍԻ ԵՎ ԿՅՈՒՐԳԻ ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ

Այս սրբերի մասին կնիշատակվի Եկեղեցու Երկտասան Վարդապետացն տոնի ստորի:





Հ. ԱՄԱԼՅԱՆ

ՄԱԿԱԲԱՅԵՑՎՈՑ ԳՐԲԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Մակաբայեցվոց գրքերը՝ «Գիրք առաջին մակաբայեցւոց», «Գիրք երկրորդ մակաբայեցւոց», «Գիրք երրորդ մակաբայեցւոց» խորագրերով¹, մեզ հասել են Աստվածաշնչի հայերեն թարգմանության ամբողջական օրինակների հնագույն² ժԳ.—ԺԴ դարերի և հետագա բազմաթիվ ձեռագրերով: Հայկական և ոչ մի գրավոր հուշարձանում չի հանդիպում որևէ նշխար, որևէ հետք մակաբայեցիների չորրորդ գրքից, ամբողջ հայ մատենագրության մեջ չկա մի եզակի տեղեկություն այդ գրքի հայերեն թարգմանված լինելու մասին: Ուստի, անստորկելի է, որ մակաբայեցվոց չորրորդ գիրքը հայերեն թարգմանված չի եղել:

Հայերեն Աստվածաշնչում մերթ ևսխական է կամ երկրորդական է, մերթ կանոնական (յայտնի) կամ անկանոն (պարականոն, գաղտնի, ծածուկ) կոչված Մակաբայեցվոց գրքերը այսօր առկա են շուրջ ութ տասնյակ հայերեն ձեռագրերում, իսկ Աստվածաշունչ մատյանների (լրիվ կամ մասունք) թիվն ամբողջ աշխարհում, ըստ Ա. Ջեյթունյանի, կազմում է 228³:

Մակաբայեցվոց գրքերը հայ մատենագրության մեջ գրեթե չեն հանդիպում առանձին ընդօրինակու-

թյուններով, որպես մեկուսի, ինքնուրույն մատենական միավորներ, ինչպես ավտարանները, սաղմասաց և այլ գրքերը: Ղրա պատճառն այն է, որ այդ գրքերը եկեղեցական ընթերցումների համար առանձին նշանակություն չեն ունեցել, կորյունի բառով՝ եկեղեցական գիրք չեն եղել: Մակաբայեցվոց Ա և Բ գրքերն, առհասարակ, ծիսական նպատակներով չեն օգտագործվել, իսկ Գ գրքից, մակաբայեցվոց տոնի օրը, ընթերցվել են միայն 6—7-րդ գլուխները կամ դրանց առանձին հատվածներ, որոնք հանդիպում են ճաշոցներում:

Այնուամենայնիվ, մակաբայեցվոց երեք գրքերը, որոնք մեզ հասել են Աստվածաշնչի ամբողջական բնագիրը ներկայացնող բազմաթիվ ձեռագրերով, իրենց ընդհանուր մշակությամբ նշանակությամբ և հատկապես լեզվաոճական կերպարանքով որոշակի տեղ ունեն հայ միջնադարյան մատենագրության մեջ, և դրանց համակողմանի գիտական ուսումնասիրության կարևորությունը միայն հայ մշակույթի խնդիրներով չի պայմանավորված:

Երբ են թարգմանվել Մակաբայեցվոց գրքերը, և ով է այդ գրքերի թարգմանիչը: Այս հարցերը եղել են և այժմ էլ մնում են ոչ միայն հիշյալ գրքերի, այլև առհասարակ Աստվածաշնչի հայերեն թարգմանության սխառության կենտրոնական հարցեր, որոնց առայժմ հայագիտությունը վերջնական պատասխան չի տվել:

Մակաբայեցվոց գրքերի թարգմանության ժամանակի մասին առայժմ մեզ հայտնի է հետևյալը.

ա) Մակաբայեցվոց գրքերը թարգմանված են 5-րդ դ. առհասարակ.

բ) Մակաբայեցվոց գրքերը թարգմանված են հա-

¹ Ձեռագրերում խորագրերը միօրինակ չեն, ունեն տարբեր ձևակերպումներ՝ «Գիրք մակաբայեցւոց», «Գլուխ առաջին մակաբայեցւոց», «Մակաբայեցւոց առաջին», «Երկրորդ մակաբայեցիք», «Երկու մակաբայեցիք», «Առաջին մակաբե», «Մակաբայեցիք երկրորդ», «Մակաբե երկրորդ», «Գիրք մակաբայեցւոց առաջին» և այլն:

² Տե՛ս Հ. Ս. Անասյան, Հայկական մատենագիտություն, հատ. Բ, Երևան, 1976, էջ 315—316:

³ Տե՛ս Ա. Ջեյթունյան, Աստվածաշնչի հայերեն թարգմանության ձեռագրական միավորների դասակարգման մասին. «Բանբեր մատենադարանի», Երևան, 1977, էջ 296—297:

⁴ Տե՛ս Ս. Կոզյան, Մակաբայեցւոց Բ գրքին հայերեն թարգմանությունը, Վիեննա, 1928, էջ 6: Նաև՝ Ս. Մանուկյան, Մակաբայեցւոց գրքերը. «Սիոն», 1966, № 2—3, էջ 59:

յերեն թարգմանությունների երկրորդ՝ եռեփնադրյալ շրջանում, 432—450 թթ. (Ս. Կողման)։

գ) Մակարաբեցվոց գրքերը թարգմանված են 460—468 թթ. (Ն. Աղունց)։

Աստվածաշնչի հայերեն թարգմանության ընկալյալ բնագիրը, կամեմի մեջ մտնող բոլոր գրքերով, հայերեն է թարգմանվել 5-րդ դ., Մակարաբեցվոց գրքերն էլ, անկասկած, թարգմանվել են 5-րդ դարում։ Այդ մասին տարակարծություններ գոյություն չունեն։ Թարգմանության ժամանակը որոշ չափով կոնկրետացնում է երկրորդ կարծիքն այն մասին, թե Մակարաբեցվոց գրքերը թարգմանվել են եռեփնադրյալ շրջանում՝ 431 թ. հետո։

Այդ տեսմամբ, թե Աստվածաշնչի որ գրքերն են թարգմանվել առաջին շրջանում։ Մերոց Մաշտոցի, Սամակ Պարթևի և նրանց ժամանակակից մյուս թարգմանիչների կողմից։ Այս առիթով ասենք, ինչպե՞ս էր հայագիտության մեջ կարծիքները տարբեր են, անորոշ ու երկարակամ, «հայկական թարգմանության ծագումը մաս է և խախտա»¹, ինչ արդյունք է 5-րդ դ. հայ մատենագրության մեջ եղած փաստերի անբավարարության և անմիաբանության։

Մաշտոցի «Կարբազիր»՝ Կորյունը, տեղեկություն չի տալիս, թե որ բնօրինակից՝ առարկանից, թե հունարենից է թարգմանվել հայերենը։ Մովսես Խորենացին հավաստում է առարկան բնօրինակը. «...զմեն Սամակ թարգմանութեան պարսպակալ լատարոց, յոչ ինկելոյ լուին»², Կազար Փարպեցին նշում է հունական բնօրինակը. «... և թարգմանազ զԱստուածաշունչ կտակարանս ի յոյն լեզուոյ ի հայ բարբառս»³։ Առարկանից թարգմանված լինելու մասին Հ. Մկրտչյանը գրում է. «Կազար Փարպեցին ևս կանգ է առնում Աստվածաշնչի հայերեն թարգմանության վրա, բայց գիտակցորեն լատարոս է մատնում Աստվածաշնչի առաջին անգամ առարկանից թարգմանվելու փաստը։ Դա բացատրվում է այն առեղծվածով, որ նա տածում էր դեպի առարկան ու նրանց մշակույթը»⁴։

Հայագիտության մեջ, որպես Աստվածաշնչի հայերեն թարգմանության աղբյուրներ, մանաշված են և՛ առարկան, և՛ հունարեն բնօրինակները գոգաբնութաբար, կամ միաժամանակ երկու աղբյուրների հիման վրա՝ «մասամբ առարկան և մասամբ հունարեն սկզբնագրերից»⁵։ հայերեն Աստվածաշնչի թարգմանված լինելու կարծիքը։ Բնագրային մատ-

չատությունները, որոնք կատարված են հայազգի և օտար մատարտողների կողմից, հաստատում են Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ առարկան և հունական բնօրինակների մասնակցությունը։

Ենթադրվում է, նույնիսկ, ըստ բնօրինակների, թարգմանության աստիճանականություն, «Աստվածաշնչի հայերեն թարգմանության մատագրության համար, սակայն, առանցին հետաքրքրություն ունի հազարյոմը (Bericht) թարգմանության երեք փուլերի (Stadien) մասին. 1. Թարգմանության ըստ առարկան բնագրի, 2. Թարգմանություն ըստ հունական բնագրի, 3. Թարգմանություն ըստ մի նոր հունարեն բնագրի»⁶։

Հայերենի նախապես առարկանից թարգմանված լինելու տեսակետը համեմատաբար հաստատուն փաստական հիմք ունի, ուստի և բնորոշված է, որ Աստվածաշունչն առաջին անգամ հայերեն է թարգմանվել առարկանից, ընդամենը՝ առարկան «Գեղիկոս» կոչվող խմբագրությունից։ Սակայն հայա-նի չէ հունական նախասկզբնական օրինակի խմբագրությունը, դրա մասին հստակ պատկերացում չկա։ Ավելի անորոշ է «մասամբ առարկան և մասամբ հունարեն» բնօրինակներ ենթադրող տեսակետը, որը չի կարող զոհանցուիչ պատասխան տալ հետևյալ հարցերին, ա) հայ թարգմանիչները զուգահեռաբար թարգմանել են առարկան և հունական բնօրինակները, ստյով միաժամանակ երկու թարգմանական տարբերակ, թե ոչ, բ) առարկան և հունական բնագրերը ձեռքի տակ ունենալով և դրանցից հավասարապես օգտվելով, թարգմանիչները ատեծել են մեկ թարգմանություն, թե ոչ, գ) եթե «մասամբ առարկան և մասամբ հունարեն» առեղծվածով հասկանանք, որ բնագրի մի մասը թարգմանվել է առարկանից, իսկ մյուս մասը՝ հունարենից, ապա Աստվածաշնչի ո՞ր գրքերն են թարգմանվել մեկ կամ մյուս լեզվից։

Հինգերորդ դարի հայ մատենագրության, ինչպես նաև հայագիտական մատագրությունների փաստերը դեռևս բավական չեն թարգմանությունների առաջին շրջանի հարցերի միջև լուսաբանման համար։ Կորյունի «Եւ Եղեալ սկիզբն թարգմանելոյ զգիրս հաջ յԱստուածն Սողոմոնի»⁷, ապա՝ «Գրում լոնկարծ ուրեմ՝ օրենստալոց Մովսէս՝ մարգարէաւեան դասուն, և լատաշտղեմն Պաղոս բովանդակ տարեկական զնոյովն, հանդերձ աշխարհակեցոյ տեսարանսն Բրիտանի միաճգանայն կէտալ հասեալ ի ձեռն երկուց հասարակոյցն՝ հայաբարբառը հայերէնախօսը գտան»⁸ ցուցումներն իրենց եղով կարևորությամբ հանդերձ «այս շրջանում (մինչև 432 թ.—Հ. Ա.) թարգմանված գրքերի մա-

¹ Հ. Էրնոնի, Հննդոստական ուսումնասիրությիւն Ս. Գրոց հայկական թարգմանութեան վրայ, «Մալմալ», 1900, էջ 297։

² Մովսէսի Խորենացոց Պատմութիւն հայոց, Տիֆլիս, 1913, էջ 320։

³ Կազարայ Փարպեցոց Պատմութիւն հայոց և բոլոր առ Վանան Մամիկոնեան, Տիֆլիս, 1904, էջ 16։

⁴ Հ. Գ. Մկրտչյան, Հայ-առարկան հարաբերությունների պատմությունից, Երևան, 1970, էջ 112։ Նաև՝ «Եւսիմախի» 1966, № 11—12, էջ 42։

⁵ Հ. Ս. Ահապան, Շղվ. աշխ., էջ 309—310։

⁶ Bo Johnson, Die armenische Bibelübersetzung als hexaplatrischer Zeuge im 1. Samuelbuch Lund, 1968, S. 15.

⁷ Կորյուն, «Կարբ Մաշտոցի, Երևան, 1941, էջ 50։

⁸ Նույն տեղում, էջ 58։

սին ամբողջական պատկերացում չեն տալիս¹³, Մովսես Խորենացու «բովանդակելով զքսան և զերկու յայտնիս և զնոր կտակս»¹⁴ վկայությունն Աստվածաշնչի գրքերի լրիվ թվարկում չի կարելի համարել: Այդ առթիվ Հ. Անասյանը գրում է. «Այն տեղեկության հիման վրա մենք պիտի ընդունենք, որ Խորենացին այստեղ 22 «յայտնի» գրքեր ասելիս և նկատի ունի Հին կտակարանի կանոնը՝ ըստ երրայականի: Երրայական կանոնի համաձայն, ինչպես քացարկված է Հերոնիմոս Ստրիդոնացու կողմից լատինական Վուլգատայի առաջաբանում (Prolegus galeatus), Հին կտակարանն ամփոփվում էր 22 գրքերի մեջ, ըստ որում Դատաւորաց գիրքը և Հոսեք-ը կազմում էին 1 միավոր, Թագաւորաթեանց Ա և Բ գրքերը՝ 1, Թագաւորութեանց Գ և Դ գրքերը՝ 1, Երեմիայի Մարգարեութիւն-ն ու Ողբ-ը՝ 1, Երկոստասան մարգարեից գրքերը՝ 1, Մնացորդաց Ա և Բ գրքերը՝ 1, Եզրի Բ և Գ (Նեեմի) գրքերը՝ 1, իսկ հետևյալ գրքերը կազմում էին 1-ական միավորներ. Մուրմուր, Ելք, Լևտականք, Թիւք, Երկրորդ օրէնք, Յեսու անեայ, Նապի, Եզեկիէլ, Տոք, Սաղմոսք, Առակք, Ժողովորդ, Եզր երգք, Դանիէլ և Նաբք, որոնք զուգահեռ անում էր 22: Սրանք զատ-զատ հաշվելով, այն 89 գրքերն են, որոնք հայկական այժմյան կանոնում անվանվում են նախականոն գրքեր»¹⁵: Այդ կանոնի մեջ չկան Մակարայեցվոց գրքերը, որոնք երկրորդականոն են համարվել:

Թարգմանությունների առաջին շրջանում, ամենայն հավանականությամբ, Հայաստանում ընդունված է եղել Աստվածաշնչի ասորական կանոնը¹⁶: Խորենացու տեղեկության, այլև հայերեն Աստվածաշնչի ասորերենից թարգմանված լինելու գիտական փաստերի վրա է հիմնում Հ. Անասյանն իր հետևյալ կարծիքը, թե «Անկախ այն խնդրից, թե հայերեն թարգմանությունները, որ լեզվից էին կատարվել,—ասորերենից, թե հունարենից,—կանոնի հարցում անկասկած ենթարկված էին ասորականին, որի ներկայացուցիչը Պեշիտտան էր»¹⁷: Եթե անվերապահորեն ընդունենք, որ հայերեն Աստվածաշնչը, թարգմանությունների առաջին շրջանում, ենթարկված էր ասորական կանոնին, ապա այն, պարզ է, չպիտի ունենար Մակարայեցվոց և մյուս երկրորդականոն գրքերը: Սակայն կանոնից դուրս լինելը դեռևս չի ճշանակում, թե երկրորդականոն գրքերը առաջին շրջանում թարգմանված չեն եղել: Իրողությունն այն է, որ մախ' 5-րդ դ. հայ հեղինակները ստույգ տեղեկություններ չեն տալիս Աստվածաշնչի գրքերի թարգմանության կոնկրետ ժամանակի, ինչպես նաև գրքերի քանակի մասին, ապա՝ բանասիրական հետազոտությունները, որոնք ճիմականում վերաբերում են այդ գրքերի թարգ-

մանության օտար բնօրինակների բացահայտման հարցերին¹⁸, թարգմանությունների ժամանակի հարցում իրենց փաստարկներով բավականաչափ համոզիչ չեն կամ ուղղակի ընդհանուր բնույթի ենթադրություններ են՝ հաճախ հակասական ու իրարամերձ: Ուստի երկրորդականոն գրքերի, մասնավորապես Մակարայեցվոց գրքերի թարգմանության ժամանակի հարցը հայ բանասիրության մեջ տուկալիմ լուծված չի կարելի համարել:

Հայագիտության մեջ տարակարծություններ չկան Մակարայեցվոց գրքերի ետեփեստայան շրջանում թարգմանված լինելու առթիվ, սակայն հետազոտողները միաբան չեն, նշում են թարգմանության տարբեր ժամանակներ:

Բանասեր Ս. Կոզյանը, իր վերևում հիշատակված աշխատության մեջ, Մակարայեցվոց գրքերի թարգմանության ժամանակ է համարում Ս. Գրոց թարգմանության երկրորդ շրջանը: Նա գտնում է, որ «Ս. Գրքի թարգմանութեան նպատակն էր հայացնել եկեղեցական լեզու, ծես, արարողութիւն: Ուրեմն հարկ էր «փութանակի» թարգմանութեամբ անուս ժողովրդեան մայրենի լեզուա մատչելի ընել այն գրքերը, որոնք եկեղեցույ մէջ ամենէն անելի կը կարդացուէին»¹⁹: Քաղվածքի հեղինակն այդպիսի գրքեր համարում է նախականոն գրքերը, որոնք թարգմանված են առաջին շրջանում և երկրորդականոն ու մյուս գրքերի թարգմանությունը վերագրում է երկրորդ շրջանին: Ապա, կոնկրետացնելով, Մակարայեցվոց գրքերի թարգմանության ժամանակը նա դնում է 432—450 թվականների միջև՝ 18 տարվա ընթացքում: Եթե ընդունենք, որ այդ գրքի թարգմանությունն իրոք սկսվել է 432 թվականից, ապա, թարգմանության ավարտման ճիշտ ժամկետը (terminus ad quem) չիմանալով էլ՝ վստահությամբ կարելի է ասել, որ այդ գիրքը 451 թ. Ավարայրի ճակատամարտի ժամանակ արդեն թարգմանված էր, հիմնվելով Եղիշեի հետևյալ վկայության վրա. «Զոր և ի ձեռն առեալ զքաջ նկարագիրն մակարայեցւոց ընթեռնոյր ի լսելիս ամենցուն»²⁰:

Հասկանալի է, որ Վարդանի ձեռքին եղած գիրքը հայերեն էր գրված, և նա իր գորականներին հայերեն էր կարդում կամ իր հեղինակային խոսքում, մասնավորապես իր հայտնի հորդորում, անուղղակի կերպով մեջ էր բերում Մակարայեցվոց գրքերի խոսքերը²¹:

Մյուս հեղինակը, որ կոնկրետ խոսք է ասում Մակարայեցվոց գրքերի թարգմանության ժամանակի մասին, Ն. Ադոնցն է: Նա, հետևելով Կոնիքի-

¹⁸ Տե՛ս և՛ Լ. Տեր-Պետրոսյան, Սաղմոսների հայերեն թարգմանությունը և նրա նախորդակը. «Էջմիածին», 1975, Ա, էջ 44:

¹⁹ Ս. Կոզյան, նշվ. աշխ., էջ 6:

²⁰ Եղիշեի Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 105:

²¹ Հմմտ. Եղիշեի «Մի երկուցեալ զանգիտացուրք... վատութիւն մի խառնեացուրք» հատվածը (էջ 101—102) և Ա. Մակ. Թ 10:

¹³ Հ. Ս. Անասյան, նշվ. աշխ., էջ 311—312:

¹⁴ Մովսես Խորենացի, նշվ. աշխ., էջ 327:

¹⁵ Հ. Ս. Անասյան, նշվ. աշխ., էջ 311—312:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 313—314:

¹⁷ Նույն տեղում, էջ 313—314:

րին, փորձում է շարժական տոմարի օգնությամբ պարզել և հաստատել թարգմանություն ժամանակը: Ըստ նրա հաշվումների «Մակարայեցվոց գիրքը թարգմանում է 460—468 թվին»²²: Այդնցի կակար Մակարայեցվոց Բ գիրքն է, որի մեջ միշտակվում է **ամեկան** ամիսը. «մինչև յերեսուն ամեկանի ամեկան» (Այլը տրաշնոց Նաւնշոյ. Բ. Մակ. ԺԱ, 30), «լամսահաճ ամեկանի, որ օր հնգետասան էր» (Նաւնշոյ տրաշնոց Նաւնշոյ. Բ. Մակ. ԺԱ, 33): Նրա նշած՝ 468, թվականը կարելի է կիներ բնութանկ, եթե իրոք մակեդոնական օրացույցով **բսանթիկ** (Նաւնշոյ ամսի 15-ը և 30-ը ճշգրիտ համասարտությանն են հայոց **ամեկանի** 15-ին և 30-ին (ապրիլի 13-ին և 28-ին): Մակայն պետք է նկատի ունենալ.

ա) Հայկական օրացույցը շարժական է եղել և ոճվար է պնդամեկնակով ճշգրիտ համասարտությանն ունենալու գտնել նրա և թագմարիով այլ, այդ թվում հաճ մակեդոնական, օրացույցների միջև Տարեկարի տեղափոխման պատճառով, ինչպես նշում է Բ. Թումանյանը՝ «Այս օրացույցով մշտապես խախտվում են ոչ միայն ամիսների ու տարվա և դանակների որոշակի համասարտաստությունները, այլև իր ժամանակին մեծ կարևորություն ունեցող եկեղեցական տոների ու ծիսակատարությունների ժամանակները»²³:

բ) Մակեդոնական օրացույցի **բսանթիկ** ամիսը ճիշտ չի համասարտաստում հունական օրացույցի ապրիլ ամսին, այլ մոտավորապես է համընկնում նրան: Այդ ամիսների և ամեկանի համասարտաստանությունը դրանց կարգի մեջ է և ոչ թե արեգակնային տարվա ժամանակին:

գ) Արդյո՞ք մայ թարգմանիչը մակեդոնական օրացույցի ժամանակը նշությամբ վերածել է հայկականի, թե պարզապես կարգի համասարտաստանությամբ՝ **ամեկան** նշելով նույնությամբ վերցրել է հունարեն բնագրում նշանակված ամսաթիվը: Կարծում ենք, որ մայ թարգմանիչները առանց օրացույցային հաշվումների են դնում բնագրում նշված ամսաթիվը, մասնավորապես որ նրանք Մակարայեցվոց գրքի թարգմանության մեջ հետևողական չեն ամիսների թարգմանության հարցում և հաճախ դրանք ուղղակի թերում են իրենց օտար անվանումներով՝ **թշդի, ադար, բադիկ** և այլն:

Մակարայեցվոց գրքերի թարգմանության ն. Ա. դոնցի նշած ժամանակը կասկածելի է. դժվար է համոզվել, որ այդ գրքերը մինչև 460 թ. դեռևս թարգմանված չէին, այն դեպքում, երբ ունենք մասնագրական կոնկրետ վկայություն՝ Եղիշեի վերելում թերված ցուցումը, որի համապատասխանությունը կասկածելու ոչ մի հիմք չկա: Ուրեմն, Մակարայեցվոց գրքերը, որոնց թարգմանության հավանականությունը նախնականության շրջանում չի բացառվում, համեմայն դեպք, մինչև 451 թ. արդեն թարգ-

մանված էր և Աստվածաշնչի **թարգմանից** բնագիրն ամբողջությամբ դոյություն ունեւ հայերեն լեզվով:

Տեսնենք, թե ինչպիսի կովաններ կան ապացույցներ կամ ամբողջով հիմնավոր ու ծանրակշիռ ենթադրություններ անելու, որ Մակարայեցվոց գրքերը թարգմանվել են առաջին շրջանում՝ 432 թ. առաջ:

Աստվածաշնչի թարգմանությունը կատարվել է հայերեն գրքի գրույթից անմիջապես հետո, մի քանի տարվա ընթացքում՝ 5-րդ դ. առաջին տասնամյակում: Դրանից հետո մայ թարգմանիչները, որոնք անկասկած շատ անկիթներ ունեին, արդյո՞ք թույլացրին իրենց աշխատանքը կամ դադարեցին Աստվածաշնչի բնագրով զբաղվելը, արդյո՞ք նրանք չէին զբաղվում երկրորդականոն գրքերի թարգմանության հարցով, և որն է առհասարակ նրանց գործունեության հիմնական ուղղությունը հետագա անկիթի թան երկու յոսմամյակի ընթացքում, ապա՞ կատանդոնարից վերադառնալուց հետո: Այս հարցերի լուսարանումը մեծապես կօգնեւ ժակարայեցվոց և մյուս երկրորդականոն գրքերի թարգմանության ժամանակը և այլ հանդամանքներ որոշելուն:

Անարդյ Մաշտոցի և Սամակ Դարբեի կողմից կատանդոնարից ուղարկված թարգմանիչները պիտի հմտանային հունարենին տիրապետելու մեջ, կատարելագործեին իրենց արվեստը՝ մեր թարգմանություններ կատարելու համար: Նրանք, պարզ է, որ մշտապես զբաղված պիտի լինեին թարգմանություններ կատարելով: Բնական է ենթադրել, որ այդ ժամանակ էլ նրանց աշխատանքի հիմնական առարկան եղել է Աստվածաշնչը: Այդ են ժամանակում Աստվածաշնչի հայերեն բնագրում առկա տարբեր օտար բնորոշանքների ու դրանց խմբագրությունների հետքերը, ինչպես հաճ՝ այդ աղբյուրների վրա հիմնված բաղմապիսի ուղղումներն ու սրբագրումները: Եվ եթե Աստվածաշնչը թարգմանիչների գրադմոնքի հիմնական առարկան էր, ապա նրանք չէին կարող անտեսել երկրորդականոն գրքերը, երբ արդեն վաղուց թարգմանված էին հախականոն գրքերը, երբ նրանք արդեն ձեռնարկում էին դավանաբանական, փիլիսոփայական և այլ բնույթի երկերի թարգմանությունը: Աստվածաշնչի թարգմանությամբ աշխատանքը շարունակվում էր, և պատահական չէր, որ մայ թարգմանիչները, ծանոթ լինելով Աստվածաշնչի հունական գրագրերին, իրենց հետ հայրենիք ընդցին նրա Յոթանասնից խմբագրության լավագույն գրագրերից մեկը: Եվ եթե արտասահմանում, գործողման ընթացքում, թարգմանիչները դեռ չէին թարգմանել երկրորդականոն գրքերը, ապա հայրենիք վերադառնալուց հետո նրանք պետք է, ամենայն հավանականությամբ, թարգմանեին չթարգմանված գրքերը, ունենային Յոթանասնից խմբագրության լավ ճաղերեն բնագիրը, ապա այն տուղեին, ճշգրտեին հունական օրինակի օգնությամբ: Եթե յոթանասնիցի թերված օրինակը ոչ թե համեմատվել է նախկին թարգմանության հետ, այլ մերից է թարգմանվել, ապա այն թարգմանված պիտի լինեւ ամբողջու-

²² Ն. Աղոնց, Գարնեայ Կորիեի շուրջը. «Համդես ամսօրեայ», 1928, էջ 94:

²³ Բ. Ե. Թումանյան, Տոմարի պատմություն, Երևան, 1972, էջ 47:

թյամբ և ոչ շատ երկար ժամանակվա ընթացքում:

Հիմք չունենք մտածելու, թե 432 թ. Հայաստան բերված հունարեն Աստվածաշունչը գրեմ է մի քանի տարվա ընթացքում, ամենաուշը մինչև 440 թվականը, դեռևս լրիվ թարգմանված չէր և նրա երկրորդական գրքերի, մասնավորապես Մակաբայեցվոց գրքերի թարգմանությունն իրականացվել է 5-րդ դ. երկրորդ կեսից սկսած, ձգձգվելով մինչև 468 թվականը: Մեր կարծիքով՝ Աստվածաշունչը էթե առաջին շրջանում լրիվ թարգմանված չէր, ապա երկրորդ շրջանի սկզբում և ամենաուշը մինչև 440 թ. արդեն գոյություն ունեւ լրիվ՝ մեզ հասած բնագրի ձևով: Առաջին շրջանի վերջում և երկրորդի սկզբին, երբ հայ մատենագրությունը բուռն վերելք էր ապրում՝ գտնվելով նպաստավոր պայմաններում, երբ գոյություն ունեւ հմուտ թարգմանիչների ավելի բազմամարդ խումբ, իսկ մյուս կողմից՝ երբ զարգացող ֆեոդալիզմի գաղափարական պահանջները մեծ լարվածությամբ հայ եկեղեցին ամրապնդում էր իր դիրքերը, Աստվածաշունչի թարգմանության գործում հազիվ թե հանդուրժելի լինեւ որևէ անուշադրություն կամ հապաղում: Հայ թարգմանիչները մինչև Եփեսոսի ժողովը ծանոթ էին ոչ միայն Աստվածաշունչի բոլոր գրքերին՝ կանոնական ու պարականոն, ոչ միայն ասորական կանոնին, այլև արեքսանդրյան կանոնին, որը հետագայում, բացառությամբ բողոքական եկեղեցիների, ընդունվեց հին եվրոպական և արևելյան բոլոր եկեղեցիների կողմից²⁴:

Հայ թարգմանիչները հենց սկզբից էլ ձեռքի տակ ունեցել են Աստվածաշունչի բոլոր գրքերը՝ մախականոն, երկրորդականոն և արտականոն, որոնք և մեր դպրության դեռևս սկզբնական շրջանում նշանակվել են «յայտնի» «ծածուկ», և այլ անվանումներով: Մակաբայեցվոց և մյուս երկրորդականոն, գուցե և արտականոն գրքերը թերևս Եփեսոսի ժողովից առաջ թարգմանված լինելով՝ չեն մտել այն ժամանակ Հայաստանում ընդունված կանոնի մեջ և, հետևաբար, չեն արժանացել մեր պատմիչների ուշադրությանը: Այդ են վկայում, օրինակ, այսօր Սիրաքի գրքի երկու հնագույն թարգմանությունները²⁵, որոնք, ըստ Ա. Բագրատունու, վերաբերում են թարգմանությունների առաջին շրջանին²⁶: Գ. Արգարյանը Սիրաքի գրքի թարգմանության ժամանակ է համարում Աստվածաշունչի մյուս գրքերի հիմնա-

կան թարգմանության ժամանակը²⁷, այսինքն՝ առաջին շրջանը: Միանգամայն տեղին ենթադրություն է անում Հ. Անասյանը, «...սակայն բացառված չէ, որ մեր թարգմանիչներն արտականոն որոշ գրքեր ևս թարգմանված լինեին, այդ թվում նաև Սիրաքը: Այդպիսի փաստեր մենք ունենք նաև Նոր Կտակարանի թարգմանություններից, օրինակ՝ Կորնթացվոց Գ. թուղթը և նրա պատասխանը, որոնք Գ. Ֆետտերի կողմից համարվել են ասորերենից կատարված թարգմանություններ նախնականության շրջանում»²⁸:

Մակաբայեցվոց հայերեն թարգմանության բնագրում (նկատի ունենալով Ա. Մակ. Գ, 10, Ե, 68, Զ, 18, Ժ, 80, ԺԶ, 24, Բ Մակ. Գ, 4 և այլ տեղեր) ասորական ազդեցություն է ենթադրում Ե. Դուրյանը, ասելով, թե «ամհավանական չէ, որ ասորերենէն ալ ազդուած ըլլայ» այդ գրքի կարծեցալ թարգմանիչը՝ Կորյունը²⁹:

Ծառ հավանական է, որ երկրորդականոն գրքերը թարգմանված լինեն մախականոն գրքերից մի քիչ ուշ, սակայն Եփեսոսի ժողովից առաջ կամ դրանից, գուցե, ոչ շատ ուշ: Ուշադրություն դարձնենք Աստվածաշունչի հայերեն բնագրում առկա՝ բնօրինակային տարրեր խմբագրությունների հետքերին: Սկզբնական թարգմանությունը, մեր կարծիքով, տարբեր օտար բնագրերից կատարված, որոշ խմատով խառը, համադրական թարգմանության տպավորություն է թողնում, և այն այդպիսին էր Եփեսոսի ժողովից էլ առաջ և ոչ թե այդ կերպարանքն ստանում է հետո, ետեփեսոսյան շրջանում, ինչպես ընդունում են բանասերները, մասնավորապես Ն. Ալիմյանը, որ գրում է, թե «Երկու բնագիրներ ձուլուեցան յառաջ բերելու համար երրորդ՝ խառն բնագիրը»³⁰:

Հայերեն թարգմանության մեջ տարբեր բնօրինակների տարրերի գոյությունը մատնանշել են մի շարք հայագետներ: Ս. Կոզյանը ցույց է տալիս հայերեն բնագրում թե՛ արեքսանդրյան, թե՛ վեցիջյան և թե՛ լուկիանյան խմբագրությունների հետքեր՝ Մակաբայեցվոց Բ գրքի բնագրային ուսումնասիրության միջոցով³¹: Այդ անում է Հ. Ներսես Ալիմյանը; վկայակոչելով նաև Երևանի մատենադարանի № 198 (C.) ձեռագիրը³²: Մակելը, Սորիստը,

²⁴ Տե՛ս Ս. Մանուկյան, նշվ. աշխ., «Սիոն» 1966, № 2—3, էջ 58:

²⁵ Այդ գրքերը, որպես հավելված, բերված են գոհրապալան Աստվածաշունչի (միհատորյակի) վերջում, էջ 2—12: Տե՛ս նաև՝ Հ. Արսեն Բագրատունի, Խմատություն Եսուայ որդու Սիրաքայ և թուղթ Երեմիայ մարգարեի առ գերեալսն ի Բաբելոն, Վեներտիկ, 1883, էջ 11—153: Նաև՝ Գիրք Աստուածաշունչը Հին և Նոր Կտակարանաց, Վեներտիկ, 1860, էջ 681—704:

²⁶ Տե՛ս Հ. Ա. Բագրատունի, Խմատություն Եսուայ, էջ 6—8: Տե՛ս նաև՝ Հ. Անասյան, նշվ. աշխ., էջ 819—822:

²⁷ Տե՛ս Գ. Արգարյան, Սիրաքի գրքի հնագույն թարգմանության նորահայտ հատվածներ. «Էջմիածին», 1966, ԺԱ—ԺԲ, էջ 59:

²⁸ Հ. Ա. Անասյան, նշվ. աշխ., էջ 819—820:

²⁹ Տե՛ս Եղիշե պատրիարք Կորյուն, Ամբողջ երկեր, 2, Երուսաղեմ, 1935, էջ 829—830:

³⁰ Ն. Ալիմյան, Ավետարանի հայերեն թարգմանության սկզբնագրի հարցը. «Հանդես ամսօրեայ», 1930, էջ 157:

³¹ Տե՛ս Ս. Կոզյան, նշվ. աշխ., էջ 61:

³² Տե՛ս Հ. Ն. Ալիմյան, Սուրբ գրքի հայերեն թարգմանությունը. «Հանդես ամսօրեայ», 1935, էջ 55: Տե՛ս նաև՝ Հ. Ա. Անասյան, նշվ. աշխ., էջ 131—132:

Լիոնեն, Կոլոնը և ուրիշներ մալաթում են, որ մալերեն երկրորդ՝ եռալեզույան թարգմանությունը կատարված է Յոթանասնիցի կառույցի խմբագրությունից:

Մի՞թե մալերեն թարգմանության բնագրում Պեշտուպի, լուկիանյան (կամ՝ անտիոքյան), որի գիմնան, կեսարյան (կամ՝ պամփուլյան) և ալեքսանդրյան բնագրային տարրերի առկայությունը ցույց չի տալիս, որ Աստվածաշունչը կարող է մալերեն թարգմանված լինել տարրեր **բնօրինակների**, դրանց **խմբագրական ու գրչագրական տարրերակների** միասնամանկյա, զուգամեծ օգտագործումով: Հախաարապես մալանական է տարրեր աղբյուրների տարրերի մուտքը սկզբնական թարգմանությունից մետո՝ ստուգումների կամ կրկին թարգմանելու ժամանակ: Հ. Անուպանը նույնպես նշում է այդ մանկամանրը. «...մեր թարգմանիչներն իրենց ձեռքի տակ միասնամանակ ունեցել են մեծ տարրեր բնագրեր, կամ էլ՝ թարգմանությունների վրա մեծապայում աղբյուրներ են կատարել տարրեր բնագրերի նկատողությամբ»²²: Այստեղ այդ իրողությունը մատնանշվում է ցույց տալու համար, որ մենք բարգմանության առաջին շրջանում, ձեռքի տակ ունենալով տարրեր բնօրինակներ՝ հայ թարգմանիչները չէին կարող անտարրեր լինել մակարակցելու և մյուս երկրորդականում ու նույնիսկ արտականում գրքերի նկատմամբ, չկարողալ ու չթարգմանել դրանք:

Աստվածաշնչի թարգմանության առաջին շրջանը ոչ միայն ստորական կամ հունական եզակի բնօրինակներից թարգմանվելու, այլև կատարված թարգմանությունները տարրեր խմբագրության պատկանող օտար բնագրերով ստուգելու շրջան էր: Դա հայերեն Աստվածաշնչի լիեկություն շրջանն էր, սինդոն երկրորդը՝ հիմնականում սրբադրամներ կատարելու, ճշգրտելու և յոթանասնիցի կանոնի մատուցման շրջան էր:

Վերանմանված համագումարները, այնուամենայնիվ, զորեղ կոլեաններ չեն Մակարապետից գրքերի թարգմանության ստույգ ժամանակը որոշելու համար, սակայն բախականին համոզիչ կերպով խոսում են հագուտ աղ գրքերի առաջին շրջանում թարգմանված լինելու և Յոթանասնիցի խմբագրության հայերեն լրիվ ու ամբողջական բնագրի գոյության:

Հիմնվելով դարի առաջին կեսի թարգմանական երկերի հանդամանքները լուսարանելու տեսակետից կարևոր է հան հետևել թարգմանական արվեստին որն, անշուշտ, աստիճանաբար ձևավորվելով և կատարելագործվելով՝ բնականաբար արտացոլում էր թարգմանման բնագրերում, այն էլ գլխավորապես ճշտության հասնելու և թարգմանությանը բնօրինակին համապատասխան դարձնելու ձգտումով: Հասկանալի է, որ գրքի գլուխից անմիջապես մետո, բարգմանության բարդ արվեստը միանգամայն աստղատի, հարուստ փորձ ու ավանդույթներ ունեցող գրքի չէր: Հայ թարգմանիչները ստիպված

էին մտաբանարկել մի կողմից առաջին անգամ գրի առնվող հայերեն լեզվի անհրաժեշտ լեզվաբանական հարցերի լուծման, մյուս կողմից՝ դեռևս գրական մշակման չեմպարիվան և կալուն գրական նորմա չունեցող լեզվով թարգմանություններ կատարելու ասպարեկում ծագող զանազան դժվարություններ:

Աստվածաշնչի առաջին թարգմանությունն ալանական բերդումով՝ «փութանակի» էր: Տառերի գլուխից հետո հայ եկեղեցին, քրիստոնեական կրոնի պրոպագանդան և նրա հիմքերի ամրապնդման նպատակով, պահանջում էր կարելույն կարճ ժամանակամիջոցում, անհապաղորեն հայացնելու և առանձնա Ս. Գիրքը: Մակայն «փութանակի» ասելով, մեր կարծիքով, պետք է հասկանալ ոչ միայն թարգմանության արտա ընթացքը, այլև այն, որ թարգմանությունը հոգ, «փութ» էր պատճառում և առաջին անգամ գրավոր ձևով հանդես եկող հայերենով բնագրերում չէր կատարվում, ստորերեն և հունարեն բնագրերը առանց դժվարությանների չէին փոխադրվում հայերեն: Ուստի բնական է, որ բնագրերն արագ և միասնամանակ ճշտությամբ թարգմանվելու նպատակով՝ թարգմանիչները պետի դիմեն տարրեր բնօրինակների համեմատությանը՝ ստորերեն և հունարեն դժվար ընկալելի, խորին, մանվածապատ հատվածների, հախաարապետների ու բառերի իմաստները պարզաբանելու և դրանք հայերեն ճիշտ թարգմանելու նպատակով:

Եվ եթե ոչ միշտ ու մեծապայան կերպով, ապա առանձին դեպքերում թարգմանիչները, այնուամենայնիվ, չէին կարող բավարարվել առանց բնագրային համեմատությունների: Դրա համար անհրաժեշտ էին, և թարգմանիչների ձեռքի տակ կային Աստվածաշնչի տարրեր գրչագրեր:

Օտար բնագրերի թարգմանությունն աստիճանաբար գնում է դասի ճշգրտություն ու խիստ համապատասխանություն, որը բանասերների գնահատմամբ՝ «ստրկական» բառ առ բառ հետևում է թարգմանվող ելուրին: Այդ առումով Աստվածաշնչի հայերեն օրինակի բոլոր գրքերը միատեսակ չեն. ճշգրիտ համապատասխանությամբ թարգմանված գրքերի կողքին կան նաև գրքեր, ինչպես **Տուրք, Մոր, Նարե, Գիրք Մակարապետից, առանձին հատվածներով հան՝** Իմաստություն Սողոմոնի, մեծ և փոքր մարգարեների գրքերը, որոնք ապաստ, այլև աստատարան, պնդակալ թարգմանություններ են: Այդ գրքերի լեզվաբանական տարրերությունները արդյունք են տարրեր թարգմանիչների աշխատանքի: Մակայն որքան էլ միմյանց ժամանակակից հեղինակներն անհատական գրելաճով, իմացությամբ ու թարգմանական արվեստով տարրեր լինեին, այնուամենայնիվ, նրանք, ենթարկվելով ժամանակի բարգմանական գործի դրվածքին, մասնավորապես ճիշտ թարգմանելու պահանջին, թվում է, պետի որ առաջին լեզվաբանական հարապատություն ունեցող թարգմանություններ, մանավանդ, որ նրանք աշխատում էին Մաշտոցի և Պարթևի ցուցումներով: Եթե լեզվաբանական այդ տարրերությունները կապենք

²² Հ. Ս. Ահաջան, նշվ. աշխ., էջ 329—330:

գրքերի նշանակության, դրանց կանոնական պատկանելության հետ, ապա դրանով էլ ոչինչ չի պարզվի, որովհետև խիստ համապատասխան ու ազատ թարգմանություններ կան թե՛ մաթեմատիկայում և թե՛ երկրորդականում ու պարականոն գրքերում: Ցանկալի արդյունք չի տա նաև երևույթը թարգմանությունների տարբեր շրջանների հետ կապելը:

Այնուամենայնիվ թարգմանությունների ո՛ր շրջանի վերագրել մակաբայեցվոց և ազատ կերպով թարգմանված մյուս գրքերը, որ շրջանում է առավել հավանական դրանց թարգմանությունը: Կարծում ենք, որ ետեփետսյան շրջանում ազատ թարգմանությունների հավանականությունը համեմատաբար փոքր է, որովհետև թարգմանական արվեստն այդ ժամանակ արդեն ձևավորված էր, ուներ իր կանոններն ու բավականին հետևողական կերպով արմատավորվող ավանդույթը: Ուստի ազատ թարգմանությունների կատարումը, եթե ոչ երկրորդականում գրքերի, ապա գոնե մաթեմատիկայում գրքերի համար պիտի բացառվեն: Մինչդեռ մաթեմատիկայում շրջանում, թարգմանական արվեստի սկզբնավորումն ու լինելության ընթացքում, փորձի ու սովորույթի բացակայության պայմաններում, թարգմանական տարբեր եղանակների գոյակցությունը հնարավոր էր: Իրոք, առաջին շրջանում սովորականից տարբերվող թարգմանությունները պայմանավորված էին թարգմանիչների անվարժությամբ, անփորձությամբ, թարգմանվող լեզվին հմտությամբ չտիրապետելու և այլ համագամանքներով: Մինչդեռ հաջորդ շրջանում թարգմանիչները կատարյալ էին լեզուների իմացության և թարգմանական արվեստի մեջ, դրա հետ միաժամանակ աչքի առաջ ունեին հայ թարգմանական արվեստի ավելի քան երկու տասնամյակների փորձն ու ավանդույթը:

Մի բան ակնառու է, որ Մեսրոպ Մաշտոցին և Սահակ Պարթևին վերագրվող մաթեմատիկական գրքերը թարգմանված են մեծ վարպետությամբ, իսկ եկեղեցում քիչ գործածվող՝ **Յուդիթի, Յոթի, Եսթերի, Մակաբայեցվոց** և մյուս երկրորդականում գրքերը թարգմանված են ազատ կերպով: Այս համագամանքը բերում է հետևյալ եզրակացության, որ մաթի՝ հիշյալ գրքերի թարգմանությունը համեմատարարված է եղել սկսնակ թարգմանիչների, ապա՝ դրանց թարգմանությունները եղել են մաթեմատիկական մոլորակներ, ունենալով փորձնական նշանակություն ու նպատակներ: Ազատ թարգմանությունները որոշ իմաստով պայմանավորված են նաև թարգմանվող գրքերի բովանդակությամբ, որտեղ աչքի են ընկնում պատմողական ոճը, պատկերավոր ու արտահայտիչ խոսքը, առատաբանությունը, հուզիչ պատմը և այլն: Էզրավաճական այդ երևույթներն առիթաբար կհանուկ են 5-րդ դ. հայ մատենագրության երկերին և ցայտուն դրսևորում ունեն հասկապես պատմողական, նկարագրական բնույթի գործերում³⁴: Հետևաբար որոշակի պլոմեով պատմություն հանդիսացող **Յուդիթի, Յոթի, Մակաբայեցվոց** և մյուս գրքերի, ինչպես նաև **Իմաստություն**

Մողոմոնի, մարգարեների և այլ գրքերի առանձին հատվածների ազատ թարգմանությունը բնավ չի հակասում ժամանակի գեղարվեստական սկզբունքներին ու սովորույթին և միանգամայն օրինաչափ է: Այնպես, որ թարգմանության ձևն ու եղանակը չեն կարող փաստարկներ լինել Մակաբայեցվոց թարգմանությունը ուշ ժամանակների վերագրելու համար: Ավելի ճիշտ կլինի ենթադրել, որ երկրորդ շրջանում հայ թարգմանիչներն ավելի հետևողական ու պահանջկոտ պիտի լինեին թարգմանությունների ճշտության ու համապատասխանության ուղղությամբ, քան թե տարվեին ազատ թարգմանություններով:

Մակաբայեցվոց գրքերի թարգմանությունը մաթեմատիկայում շրջանին վերագրելու տեսակետի օգտին է խոսում նաև այն փաստը, որ այդ գրքի թարգմանիչը թերություններ է դրսևորում հունարենի տիրապետելու մեջ: Ս. Կոզյանը հայերեն և հունարեն քննադրերի համեմատությամբ ցույց է տալիս, որ թարգմանության մեջ կան սխալներ³⁵, որոնց մի մասն արդյունք է թարգմանչի թույլ հունարենագետ լինելու: «...Մակաբայեցվոց իրական թարգմանիչը՝ որչափ լա կը տիրե իր մայրենի լեզուին, այնչափ տկար է—գուցե իբրև մոլորակ—հունարենի մեջ...»³⁶: Այդպիսի մոլորակ, սկսնակ թարգմանիչներ կային առաջին շրջանում և Մաշտոցն ու Պարթևը, տեսնելով նրանց մասնագիտական թերությունները՝ նրանց գործուղում են Կոստանդնուպոլիս՝ հունարենի մեջ կատարելագործվելու և հմուտ թարգմանիչներ դառնալու նպատակով: Մինչդեռ ետեփետսյան շրջանում որակյալ թարգմանիչների գործունեության շնորհիվ ավելի քաճոր մակարդակի է հասնում հայ թարգմանական արվեստը, թարգմանությունները դառնում են ավելի ճիշտ, բնագրերին խիստ համապատասխան և միօրինակ: Իրոք, թարգմանչի անփորձության արդյունքն են Մակաբայեցվոց հայերեն բնագրում տեղ գտած սխալները, անկանոնությունները, շփոթումներն ու այլ թերությունները:

Ս. Կոզյանը, որն ընդհանրապես ճիշտ մոտեցում ունի Մակաբայեցվոց գրքերի թարգմանության ժամանակը որոշելուն, հավաստում է, որ այդ գիրքը առաջին շրջանում թարգմանված չէր կարող լինել, որովհետև այն թարգմանությունից հետո չի սրբագրվել և մեզ է հասել սկզբնական թարգմանությամբ³⁷: Այս միտքն անմիջական հետևությունն է նրա այն դրույթի, թե առաջին շրջանի թարգմանությունները որ լեզվից էլ որ կատարված լինեն՝ երկրորդ շրջանում դրանք սրբագրվել կամ թարգմանվել են հունական աղբյուրների հիման վրա³⁸: Միշտ է, որ Աստվածաշունչը ստուգումների ու սրբագրությունների ենթարկվել է, սակայն միանգամայն անընդունելի է նրա այն պնդումը, թե «Մակաբայեց-

³⁵ Տե՛ս Ս. Կոզյան, Աշխ., էջ 75—188:

³⁶ Նույն տեղում, էջ 28:

³⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 7:

³⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 24:

³⁴ Հմտ. Լ. Տեր-Պետրոսյան, Աշխ., էջ 76:

ուց գրքերը սրբագիր ձևը մը չեն տեսած երբեք»³⁹։ Այդ գրքի հայերեն թարգմանությունը, մյուս գրքերի նման, նույնպես սրբագրությունների է ենթարկվել ոչ միայն 5-րդ դ., այլ նաև հետագայում։ Ձևագրերի համեմատությամբ արդեն պարզված է, որ այսօր գոյություն ունեն Մակարայեցվոց գրքերի երեք բնագրային տարբերակներ։

Եթե ընդունենք նույնիսկ, որ Մակարայեցվոց գրքերը մեզ հասել են առանց սրբագրումների, ապա այդ էլ չի կարող հուսալի կոված լինել թարգմանությունն առաջին շրջանում ժառելու և հետագային վերագրելու համար։ Նշելով, որ Ս. Գրքերը թարգմանվելուց հետո խնամքով սրբագրվել են գլխավոր թարգմանիչների կողմից, Ս. Կոզյանը գրում է. «Մակարայեցվոց գրքերն այս բախտին չարժանացան, որովհետև գուցե դեռ նոր սկսած թարգմանությունը չափաքան կամ սրբագրության կարգն ահմեց չհասած» սրբագրիչ լանձնավորների գլուխը՝ Ս. Սամակ եւ քիչ լիտոյ նաև Մաշտոց աշխարհիկ կը թաժամուռնէ»⁴⁰։ Այս հանգամանքն էլ ապացույց չէ Մակարայեցվոց գրքերի առաջին շրջանում կամ մինչև 5-րդ դ. չորրորդ տասնամյակի վերջը թարգմանված չլինելուն։ Աստվածաշունչը, նրա կանոնում նաև Մակարայեցվոց գրքերը, ենթարկվել է թագմակի սրբագրումների և դժվար է ասել, թե որ սրբագրումները ում կողմից և երբ են կատարվել։ Մակարայեցվոց գրքերի թարգմանությունն անվերապահորեն երկրորդ շրջանին վերագրելու տեսակետը՝ բնագրում առկա սխալներով, անկանոնություններով և սրբագրումների բացակայությամբ փաստարկելն բառ առաջինի հիմնավոր ու ընդունելի համարվել չի կարող թեկուզ այն պատճառով, որ նման կարգի թերություններ կան նաև մյուս գրքերում։ Հիշյալ տեսակետի հեղինակն ինքը բնագրի թերությունների մի մասը իրավացի կերպով բացատրում է օրյկելով հանգամանքներով, ասելով, թե «Մեր թարգմանության սխալներուն մէկ ստուար մասը յունարէն իրարու նման և ձեռագիրներու մէջ դիրաշփոք քառերու մէջ կը գտնէ իւր յունուր»⁴¹։ Բացառված չէ, որ այդպիսի սխալներ առաջանային հետագա դարերում՝ ստուգումների ու սրբագրումների ժամանակ։

Ուշադրություն դարձնենք Ս. Կոզյանի հետևյալ խոսքին, թե շատ անգամ Կորինի և Մակարայեցվոց ոճերը բառ առ բառ համընկնում են «յոյն սկզբնագրին և ամէն հայ նույնօրինակ պիտի թարգմանէր»⁴²։ Որպես օրինակներ նա բերում է մտանքին ի խնդրածս... համաշխարհի (Բ Մակ. Գ, 18) բազում շնորհս կաշիր (Բ Մակ. Գ, 33), այցելու և օգնական (Բ Մակ. Գ, 39), կրանա արինաուրս (Բ Մակ. Դ, 11), աստուածագործ (Բ Մակ. Զ, 23), աստուածեղէն (Բ Մակ. Դ, 17) որ զիրեան էին (Բ Մակ. ԺԲ, 5)⁴³ և այլն։

³⁹ Նույն տեղում, էջ 7։

⁴⁰ Նույն տեղում, էջ 8։

⁴¹ Նույն տեղում, էջ 25։

⁴² Նույն տեղում, էջ 20։

⁴³ Տե՛ս նույն տեղում, էջ 21։

Եթե Կորյունի և Մակարայեցվոց գրքերի այդ ընդհանուր ոճերը բառ առ բառ համընկնում են, ապա սբար է, որ դրանք թարգմանությունից են անցել Կորյունի բնագրին, որովհետև Մակարայեցվոց բնագիրը թարգմանված է հունարենից, իսկ Կորյունի հեղինակային երկը կապ չունի հունարենի հետ և Կորյունն էլ, բառ Ս. Կոզյանի և այլ բանասերների, հեղինակը չէ Մակարայեցվոց թարգմանության։ Ոճական այդ նույնությունները ընդօրինակումների ու փոխառումների արդյունք են։ Նշանակում է հիմնականը Մակարայեցվոց գրքերն են, որ նախորդում են Կորյունին և ոճերի արդյունք ծառայում նրա համար։

Մակարայեցվոց գրքերի հայերեն թարգմանությունը, ինչպես արդեն նկատված է ուսումնասիրողների կողմից, աչքի է ընկնում քերականական անկանոնություններով։ Ընդամենը նշենք, որ այդ անկանոնությունների մեծ մասը դարձյալ նման, իմաստով իրար մոտ ու իրար փոխարինող քերականական նեների շփոթման, յուրիմացությունների, զերչագրական վրիպումների արդյունք է։ Այդ երևույթներն էլ բացատրվում են նրանով, որ Մակարայեցվոց գրքերը թարգմանվել են հայերեն թարգմանությունների սկզբնական էտապում, երբ նոր գրի ստեղծող հայերենի քերականական նորման դեռևս չլինելուց էր ապրում, ավարտված ու կայունացված չէր։ Հակառակ դատողությունն առնվազն կասկածելի կլիներ. ինչպես կարող էր ետեփեսոսյան շրջանում գործող թարգմանիչը, այն էլ լավ հայերենագետն ու հայկարանը, տեղիք տալ քերականական զգալի թվով անկանոնությունների, երբ արդեն հաստատված էր դասական հայերենի նորման։

Վերոհիշյալ փաստերի ու հանգամանքների տրամաբանությամբ Մակարայեցվոց գրքերի ժամանակի հարցում որոշակի կերպով ուղղված է դեպի թարգմանությունների ամենավաղ շրջանը։

Մակարայեցվոց գիրքը, ամենադե հավանականությամբ, թարգմանվել է Աստվածաշնչի հիմնական գրքերի հետ միաժամանակ՝ ճախանփեսոսյան ժամանակաշրջանում։ Տրամաբանական ու փաստական հիմքից գուրկ չէր Հ. Գարեգին Զարբհանյանը, երբ, անդրադառնալով Ս. Գրոց ոճային ու թարգմական տարբերություններին, գրում էր. «Է՛ն մի խիղճ թունեցի ոճանց, օրինակ իմն զՄակարայեցվոց գրոց ի հայ փոխարերութիւն վաստակ ասել թարգմանչացն սրբոց, իբրու զի օտար է յոյժ յունոյ թարգմանութեան այլոց մատենից. զի թէպէտ և խոյր մեծ իցէ ի միջի, բայց ոչ եթ ստգոտանաց սրծանաւոր, զի շարագրան ընտիր է և անդէն որպէս ի Լինելութեան գիրսն՝ և հայերէն դպրութեանց վեհագոյն վարժապետի»⁴⁴։

Վաղ միջնադարյան հայ մատենագրության փաստերի անբավարարության պատճառով, թարգմանա-

⁴⁴ Հ. Գարեգին Զարբհանյան, Յաղագս թարգմանութեան Աստուածաշունչ տառից ի հայ լեզու, «Բազմավէպ», 1851, էջ 234։

կամ, ինչպես նաև բնօրինակ երկերի հեղինակային, ժամանակագրական և այլ հարաբերությունների պարզաբանումը համար՝ հայագիտության հիմնական միջոցը եղել է գրավոր հուշարձանների լեզվաոճական երևույթների համեմատական ուսումնասիրությունը։ Մեկուսացան հայերենով գրված երկերի չորս դասերի կամ դպրոցների (եզնիկյան, եփրեմյան, կյուրեղյան, ազաթամզկոյան) տեսությանը, տարբեր հեղինակների (Ա. Այտնյանի, Թ. Թոռնյանի, Ն. Բյուզանդացու, Մ. Արեղյանի, Հ. Աճառյանի, Ն. Ալիմյանի և այլոց) քննադատմանը որոշակի տարբերություններով հանդերձ, հիմնականում մույնն է և ճանաչված է հայագիտության մեջ։ Այդ տեսությունը, ինչպես Ս. Կոզյանն էլ է նշում՝ առարկելով Ն. Բյուզանդացուն, հաստատում է դասական հայերենի մեջ ռեալական դասերի գոյությունը, բայց չի կարող հիմք լինել գրական երկերի հեղինակային պատկանելությունը պարզելու, «չակաճե՛լ յանուսն է որոշել մեն մի գրոյ հեղինակը կամ թարգմանիչը»⁴⁵, առավել ևս ժամանակի մեջ բնագրերի ինչ-որ հաջորդականություն տեսնելու համար։ Նույն միտքն է արտահայտում Հ. Աճառյանը. «Չորս դպրոցների այս բաժանումը, որ նշանակեցինք, ոչ ժամանակի արդյունք է և ոչ էլ տեղի. ըստ որում մեարդացան շրջանի այն էլ կես դարը այնքան մեծ տևողություն չէ, որ կարելի լինի շրջանների բաժանել և յուրաքանչյուրը վերագրել մի դպրոցի։ Միևնույն ժամանակ գիտենք, թե թուրք էլ գրական արտադրություններ են Սահակի և Մեսրոպի թեև տակ կազմված դպրոցի, ուստի տեղն էլ առանձին կարևորություն չունի։ Մնում է միայն դպրոցների տարբերությունը վերագրել անհատական հայացքների և հեղինակների ոգուն կամ կրթությանը»⁴⁶։ Հետևաբար չենք կարող ասել, թե դասային վերաբերությամբ այս կամ այն երկը առաջ կամ ետ է գրված։ Վնասից։ Այս հարցում վճռական չի կարող լինել նաև հունարեն դպրոցին պատկանելու կամ չպատկանելու հանգամանքը, որովհետև այդ դպրոցի սկզբնաղբյուրն էր ժամանակը լինելի է։ Իսկ եթե հիմնվենք Ֆր. Կոնիքիի, Ա. Վարդանյանի, Վ. Հացուհու, Գ. Զահուկյանի և այլ հայագետների այն կարծիքի վրա, թե հունարեն դպրոցի կազմավորումն սկսվել է ավելի վաղ, 5-րդ դ. առաջին կեսում, դասական հայերենին գուղընթաց, ապա հունարենության տարբերը, որոնք առկա են նաև Մակարայեցվոց և մյուս գրքերի ազատ թարգմանություններում, ինչ-որ չափով ակնարկում են այդ թարգմանությունների հնությունը։

Մակարայեցվոց գրքերի հայերեն թարգմանության առատության մյուս գլխավոր հարցը՝ թարգմանչի հարցն է, որը բավականին ընդարձակ վեճերի առարկա է եղել և իր զանազան մեկնաբանություններով հանդերձ առ այսօր անհրաժեշտ չափով լուսարանված չէ։ Եթե պարզվի, թե ով է թարգմանու-

թյան հեղինակը, ապա ինքնըստինքյան հայտնի կդառնա նաև թարգմանության ժամանակը։

Այսպիսով, ո՞վ է Մակարայեցվոց գրքի 5-րդ դ. հայ թարգմանիչը։ Բնագրի լեզվաոճական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հիշյալ գիրքն ամբողջությամբ (այսինքն՝ երեք գրքերն էլ) միևնույն անձնավորության կողմից է թարգմանված։ Ե. Դուրյանը, որ հաստիվ քննության առարկա է դարձրել նաև Մակարայեցվոց գրքի բնագիրը, մասնավորապես երրորդ գրքի մասին ասում է. «... լեզուի տեսակետով՝ իր մախորդներուն (Ա և Բ գրքերի— Հ. Ա.) չափ գեղեցիկ է, արդիւնքն ըլլալով միևնույն հայ թարգմանչին»⁴⁷։ Այդ կարծիքին է նաև Ս. Կոզյանը, որը Մակարայեցվոց Գ. գրքի հայերեն թարգմանությանը նվիրված իր ուսումնասիրության մեջ, հակադրվելով Բաբգեն վարդապետ Կյուլենբերյանի՝ «Մակարայեցվոց թարգմանիչը միակ հոգի մը չէ, որ ի զուր պատմագրին վրայ քննողներն անոնց թարգմանությունը»⁴⁸ կարծիքին, բնագրերի համեմատությամբ ցույց է տալիս, որ այդ գրքի թարգմանիչը միևնույն անձնավորությունն է։ Նա գրում է. «Ըստ այսմ Մակարայեցվոց գրքերուն թարգմանչին միությունն ու նոյնությունը տարակույսի տեղի չի տար...»⁴⁹։

Հայագիտության մեջ Մակարայեցվոց գրքի թարգմանչի հարցն աչապես է.

ա) Մակարայեցվոց գրքերի թարգմանիչը Կորյունն է.

բ) Մակարայեցվոց գրքերի թարգմանիչը Եղիշեն է.

գ) Մակարայեցվոց գրքերի թարգմանիչն անհայտ հեղինակ է.

Առաջին երկու կարծիքների հեղինակները (Ն. Բյուզանդացի, Գ. Զարբհանյան) և նրանց հետևորդները (Ե. Դուրյան, Ծովական, Նորայր Եպիսկոպոս Պողոթյան, Գ. Ֆեոդոսյան, Ս. Հարությունյան և ուրիշներ), հիմնվելով բնագրերի լրիվ կամ մասնակի համեմատությունների վրա լեզվաոճական ընդհանրություններ են տեսնում մի կողմից Մակարայեցվոց, մյուս կողմից՝ Կորյունի և Եղիշեի բնագրերում։

Իհարկե, բանասիրական ուսումնասիրություններում ավելի խոսում փաստերի առկայության դեպքում էլ լեզվաոճական համապատասխանությունների հաստատումը շատ կարևոր է, իսկ այս դեպքում, երբ մյուս փաստերը հարցի լուծման տեսակետից երկրորդական նշանակություն ունեն, լեզվաոճական երևույթների հետազոտությունը միակ միջոցն է բնագրերի հեղինակային (թարգմանչա-

⁴⁷ Եղիշե պատրիարք Դուրյան, Նկատողություն մը Մակարայեցվոց Գ. գրքին սխալ մէկ թարգմանություն մասին. «Ամբողջ երկեր», 2, Երուսաղեմ, 1985, էջ 859։

⁴⁸ Բաբգեն վարդապետ Կյուլենբերյան, Եղիշե, քննական ուսումնասիրություն, Վիեննա, 1908, էջ 184։

⁴⁹ Ս. Կոզյան, Ազգ. աշխ., էջ 17։

⁴⁵ Ս. Կոզյան, նույն տեղում, էջ 22։

⁴⁶ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 78։

կան) վերաբերությունը, ինչպես նաև դրանց զանազան հարաբերությունները բացահայտելու համար:

Մակարայեցիի գրքերից առաջ այլ աշխատանքներ են վերագրվել Կորյունին: Հ. Միրալի Չամչյանը գտնում է, որ «Եւ մարք խկ է ամկ, թէ սա ինքնին Կորին իցէ թարգմանալ զգիրս Ագաթանգեղոսի ի մալէ ի յոյն, և կամ ի յունէ ի մալ»⁵⁰: Կորյունին Ագաթանգեղոսի թարգմանիչ է համարում Հ. Հովսեփ Գաթրըճյանը⁵¹: Հ. Մկրտիչ Ավգերյանը Կորյունին համարում է Փալատոս Բուզանդի պատմության թարգմանիչ⁵²: Հ. Ա. Այտրեյանը նշում է Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի, Ագաթանգեղոսի ու Բուզանդի պատմությունների և Մակարայեցիի գրքերի հարադասությունը՝ «կարծես թէ մէկ գրչէ կլան»⁵³ են: Գալուստ Տեր-Մկրտչյանն ուղղակի նույնացնում է Կորյունին և Ագաթանգեղոսին, ասելով, թէ «Կորյունն և Ագաթանգեղոս, իմ կարծիքով, միևնույն անձնավորությունն են»⁵⁴ և այլն:

Ուշադրություն քննելով վերոհիշյալ կարծիքների վրա, Ն. Բյուզանդացին առաջ է գնում Կորյունին վերագրվող գրական գործերի հարցում: Նա գրում է. «Զկնի վերոյիշեալ բանասիրաց (Մ. Չամչյան, Հ. Գաթրըճյան, Մ. Ավգերյան, Ա. Այտրեյան,—Հ. Ա.) եւ աւասիկ կու գամ հոշակել զԿորին թարգմանիչ Ագաթանգեղոսի, Բիւզանդայ, եւս եւ Մակարայեցոց, հանդերձ Երսաղիմ...»⁵⁵:

Այս հիմնական դրույթն հաստատելուն է նվիրված հեղինակի գիրքը, որտեղ ամփոփված են նրա բնագրերի համեմատական ուսումնասիրության արդյունքները: Բնագրերի նմանություններ հաստատելու համար՝ նա հիմնվում է լեզվաճանաչական հետևյալ երևույթների վրա.

ա) Բառերի և ոճերի գործածություն (կիրարկությունը բառից և ասացումից), որոնք, եթե սակավ են հանդիպում ոսկեդարյան մյուս գրվածքներում, ապա Կորյունի երկերում գործածվում են ավելի հաճախ և զանազան առումներով, ինչպես՝ **այրաբառեր**, **դեսպան**, **նիզակակից**, **առանց յապաղելոյ**, **գործ պատերազմի**, **տուն Թորգոմայ** և այլն⁵⁶:

բ) Ոճեր (ասացույթներ) և դարձվածքներ, որոնց մի մասը կամ առանձին բառերն են գործածվում մյուս մատենագիրների երկերում, ինչպես՝ **զարհու-**

րեալ դողացեալ, **լերկի կործանիմ**, **աստուանդէն կանք**, **հաննմ զոր յայց կենաց**, որում **անուն կոչէին**, **ասպատակ դնեմ**, **հրովարտակա տամ**, **անդ ցուցեալ**, **լինէր կերակրեալ**, **հրամանացն բարձրութիւն** և այլն⁵⁷:

գ) Բառեր, բառաբարդություններ և ոճեր: որոնք հատուկ են միայն Կորյունին և բոլորովին անհանր են ոսկեդարի մյուս հեղինակներին, օրինակ՝ **խորհրդանոց**, **անարգամենար**, **գեղարան**, **տէրունատուր**, **պառական**, **հանդակատար**, **միջնաբերդ**, **եպիսկոպոսարան**, **սիննողոսական**, **աւագանի**, **ամբախի** **առնեմ**, **բարակիք լինիմ**, **բրանեմ առնեմ**, **առիւմարար**, **կաշառարեկ**, **աստուանագործ**, **ձեռնատուն** և այլն⁵⁸:

Ապա, օրինակներից հետո, Ն. Բյուզանդացին հավակնում է իր վարկածի միանգամայն հավաստի ու անստարկելի ճանաչում, մոտենելով, թէ «անհնար է չընդունիլ»⁵⁹, որ «**Վարք Մաշտոցի** եւ չորեքնան թարգմանութիւնքն միանոյ զանգեալք՝ կը տարբերին ի հայկարանութենէ այլ Առաջին Աշակերտաց, եւ թէ ինչպէս Ագաթանգեղ, Բիւզանդ, Մակարայեցիք, Երսաղ ձեռն ի ձեռն կերթան կը խառնուին ի վարս **Մաշտոցի** իբրև հարազատ եղբարք ի գիրկս միոյ եւ նորին հոր»⁶⁰: Ընդամենն նա բացառում է լեզվաճանաչական աղեկությունների հնարավորությունը, գտնելով, թէ՝ «Անհնար է դարձնալ ենթադրել, թէ **Մաշտոցի վարդ** և յիշեալ գրոց լեզուական նմանութիւնք՝ արագուղիոյ յառաջ եկած է ստեղծութեանցն Կորյունի թանգաղութեամբ վարած է...»⁶¹:

Որպես քննադրերի հարազատության ապացույց Ն. Բյուզանդացին նշում է, թէ՝ «Ոսկեդարու հատորատուր մատենից մէջ չկան այլ քննադիրք, որ այնքան լուսատուրեն զմիմեանս, այնչափ ապահովութեամբ եւ յանախութեամբ ուղղեն զիրեւաց սխալմունս՝ գործեալս ի տգէտ կամ յանհաստատիմ գաղափարողաց, որքան **վարքն Մաշտոցի**, Ագաթանգեղ, Բիւզանդ, Մակարայեցիք, Երսաղ»⁶²: Այս միտքն էլ հաստատելու համար, քննադրերի առաջնական միջոցով, 15 կետերի մեջ (տե՛ս էջ ԺԵ—ԺԹ) բերվում են օրինակներ:

Ազվաճանաչական հիմնական հարցերի արծարծումից հետո, աշխատության Ա զիխում, Ն. Բյուզանդացին վստահորեն առաջադրում է իր հիմնական դրույթը, որը և նույնությամբ կրկնում է այդ զիխի վերջում. «**Թարգմանութիւնք զորս եւս Կորեան կը համարիմ. Գիրք Մակարայեցոց, Երսաղ Աղեքսանդրացի, Ագաթանգեղոս, եւ Փալատոս Բիւզանդ»**⁶³:

⁵⁰ Հ. Մ. Չամչյան, Պատմութիւն հայոց, հատ. Ա, Վեներիկ, 1784, էջ 689:

⁵¹ Տե՛ս Հ. Հ. Գաթրըճյան, Տիեզերական պատմութիւն, հատ. Ա, Վեներիկ, 1849, էջ 94:

⁵² Տե՛ս Հ. Գ. Ավգերյան, Խ. Սյուրմեյան, Մ. Ավգերյան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Ա, Վեներիկ, 1836, էջ 14:

⁵³ Ա. Այտրեյան, Հիմնական քերականութիւն աշխարհարար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 54:

⁵⁴ Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Ա, Երևան, 1979, էջ 305:

⁵⁵ Ն. Բյուզանդացի, Կորին Վարդապետ եւ նորին թարգմանութիւնք, Տիֆլիս, 1900, էջ 1:

⁵⁶ Տե՛ս Ն. Բյուզանդացի, նշվ. աշխ., էջ Ը:

⁵⁷ Տե՛ս նույն տեղում, էջ Ը—Ժ:

⁵⁸ Տե՛ս նույն տեղում, էջ Ժ—ԺԴ:

⁵⁹ Տե՛ս նույն տեղում, էջ ԺԴ:

⁶⁰ Նույն տեղում, էջ ԺԴ:

⁶¹ Նույն տեղում, էջ ԺԴ—ԺԵ: Բերված քաղվածքի վերաբերյալ տողատակում նշում է Գ. Զարբնապյանի վերոհիշյալ կարծիքը:

⁶² Նույն տեղում, էջ ԺԵ:

⁶³ Նույն տեղում, էջ 1, 14:

Այնուհետև, Գ զլիցի սկսած, հետևում են բնագրերի համեմատությունները: Հաջորդաբար զուգադրելով բնագրային հատվածները, հեղինակը համեմատվող հինգ աշխատություններից բերում է ոճական մասնությունների կամ նույնությունների ընդամենը 624 օրինակ, չհաշված այն համընկնումները, որոնք համեմատվող աշխատությունների տվյալ զույգի բնագրերից բացի առկա են մասնա մասնա երեք բնագրերում: Ահա համեմատությունների արդյունքները.

1. Կորյուն և Ագաթանգեղոս—15 (էջ 86—189).
Կորյուն և Բուզանդ—45 (էջ 139—160).
Կորյուն և Մակարայեցիք—8 (էջ 161—164).
Կորյուն և Երթալ—16 (էջ 164—178):
2. Ագաթանգեղոս և Բուզանդ—202 (174—289).
Ագաթանգեղոս և Մակարայեցիք—65 (էջ 289—316).
- Ագաթանգեղոս և Երթալ—7 (էջ 316—319):
3. Բուզանդ և Մակարայեցիք—126 (էջ 319—378).
- Բուզանդ և Երթալ—2 (էջ 377—378):
4. Մակարայեցիք և Երթալ—8 (էջ 278—380)⁶⁴:

Թվերը ցույց են տալիս, որ Կորյունին («Վարք Մաշտոցի») ավելի մոտ են Ագաթանգեղոսը և Բուզանդը, իսկ Երթալը և հատկապես Մակարայեցիք շատ հեռու են մնում: Առաջին երեք բնագրերի հարաբերության մասին պետք է ասել, որ կան համագամանքներ, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ այդ երկերի բառային ու ոճական աղերսներն առաջացել են ընդօրինակման, լեզվաոճական ազդեցությունների ճանապարհով: Այս ենթադրությունն ավելի հիմնավոր է դառնում, եթե այդ երեք բնագրերի հեղինակման հարցերն արծարծենք պատմական մոտեցումով: Ագաթանգեղոսի անձը, հատկապես նրա ազգային պատկանելությունն անհայտ է և հայագիտության մեջ տարակարծությունների տեղիք է տվել: Սակայն այն բանից հետո, երբ հատկապես

Գուտշմիդի, ապա այլ հայագետների կողմից հաստատվեց, որ Ագաթանգեղոսի «Պատմություն հայոց»-ը գրվել է հայերեն՝ այդ կարծիքը ճանաչում ստանալով՝ ընդունվեց և այժմ իշխող է հայագիտության մեջ⁶⁵: Հետևաբար Ագաթանգեղոսի երկը հունարենից թարգմանված լինելու և Կորյունին վերագրելու տեսակետը հնացած է ու մերժելի: Նույնը պետք է ասել նաև Փավստոս Բուզանդի վերաբերյալ: Այժմ գիտական լայն ճանաչում ունի նրա հայագիտական լինելու և նրա «Պատմություն հայոց»-ի նախապես հայերեն գրված լինելու տեսակետը (Ղ. Իմեթյանի, Հ. Տաշյանի, Հ. Գնչյանի, Մ. Արեղյանի, Ստ. Մալխասյանի և ուրիշների)⁶⁶: Նշանակում է հիշյալ հեղինակների երկերի, Մակարայեցվոց ու Երթալի բնագրերի լեզվաոճական աղերսները ազդեցություններով ու բանաբարությամբ բացատրելու տեսակետն առավել ևս հավաստի և ընդունելի է դառնում: Մնում է միայն պարզել, թե այդ աղերսակից բնագրերից, որն է նախնականը և որը ներառից ազդեցություն կրողը:

Ն. Բյուզանդացու համեմատությունների արդյունքներն ակնառու ցույց են տալիս, թե որքան իրավացի են վերևում հիշատակված այն բանասերները, որոնք Կորյունի երկի հետ լեզվաոճական առնչություններ են նկատել նախ Ագաթանգեղոսի (Հ. Մ. Չամչյան, Հ. Հ. Գաթրոնյան), ապա Բուզանդի (Հ. Մ. Ավգերյան) բնագրերում: Մինչդեռ Մակարայեցվոց գրքերն անհամեմատ մեծ աղերս ունեն նախ Բուզանդի, ապա նոր՝ Ագաթանգեղոսի բնագրերի հետ, իսկ Երթալը, ըստ բերված թվերի, քիչ է աղերսվում Կորյունի, Ագաթանգեղոսի և հատկապես Բուզանդի ու Մակարայեցվոց հետ: Սա էլ միաժամանակ հաստատում է Ա. Այտընյանին, որը նշելով Կորյունի, Ագաթանգեղոսի, Բուզանդի, Մակարայեցվոց, Հարանց վարքի և այլ երկերի նմանությունները, չի հիշատակում Երթալին, որի թարգմանություններն, ըստ Գ. Զարրիանյանի վերաբերում են ավելի ուշ շրջանի՝ Դիոնիսիոս Թրակացու քերականության և Պորփյուրի ներածության ժամանակներին⁶⁷:


(Ծառուհակելի)

⁶⁵ Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հատ. Ա, Երևան, 1971, էջ 47—49:

⁶⁶ Տե՛ս Ս. Տ. Մելիք-Բախշյան, Հայոց պատմության աղբյուրագիտություն, Երևան, 1979, էջ 57—58:

⁶⁷ Տե՛ս Հ. Գ. Զարրիանյան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1878, էջ ԻԵ: Հմտ. Թ. Թոռնեան, Հատընտիր ընթերցումաձք ի մատենագրութեանց նախնեաց, Վիեննա, 1891, էջ 21, 407—416:

⁶⁴ Բերված թվերը վերջնական չեն և միայն մոտավորապես են ցույց տալիս համեմատվող բնագրերի նմանության աստիճանը: Պետք է նկատի ունենալ, որ ա) համեմատվող բնագրերի լեզվաոճական համընկնումների հաճախականությունը կախված է նաև բնագրերի ծավալից, բ) նմանությունները և հատկապես բառային նույնությունները պայմանավորված են բնագրերի բովանդակությամբ, գ) համեմատությունների ընթացքում հնարավոր են վրիպումներ ու սխալներ, դ) լեզվաոճական շատ երևույթներ հասուկ են նաև այլ բնագրերի և ունեն ընդհանուր նշանակություն: Ուստի լեզվաոճական համընկնումները հետազոտելիս պետք է հաշվի առնել նաև դրանց բուն իմաստն ու նշանակությունը, կիրառական առանձնահատկությունները և դրանից հետո՝ փաստերի քանակական հարաբերությունները:



ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ ՄԻ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արդարացի վարաբաղան սևարմին հասած «հատուցման արդար դատաստանի» և «բազում ժամանակն չարալույս կոտանք զարկուցեալ» մանկան մասին խոսելիս Ղազար Փարպեցին իր Պատմության երկրորդ գրվագի սկզբնամասում ասելիքն ամփոփում է ժՁ սաղմոսից քաղված աղայիսի վկայությունը։ «Մի և զմնացորդս ժամանոտ չարահամ խորտկին խրոյ երող զառակին խրում, ըստ գրեցելումն ի վիշտասաներորդումն սաղմոսին. «Յազեցան կերակրօք, ասէ,—որ միս ևս թարգման՝ խողենեաւ ասէ, և թողին զմնացումսն տղայոց խրանց»¹։

Փարպեցու քաղումը կատարված է սաղմոսի հայերեն ընկալյալ թարգմանությունից և ըստ ամենայնի նույնական է այսօր գիտությանը հայտնի բնագրին՝ «Յազեցան կերակրօք» և թողին զմնացումսն տղայոց խրանց» (ԺՁ, 14)։ Բայց պատմիչի դիմումը սաղմոսին ընկալելի չէր լինի, եթե չունենալիք նրա իսկ նախապես տված մեկնությունը և սարս՝ բնագրադիտական միջարկումը։ Հիմալի, **յազեցան կերակրօք** արտահայտության մեջ «ժամանոտ չարահամ խորտկի» իմաստ չկա, ուստի Փարպեցու բնորոշման աղբյուրը **միս ևս թարգմանի** «խողենեաւ» բառն է²։

¹ Ղազարայ Փարպեցու Պատմություն Հայոց... աշխատության Գ. Տեր-Սիմոնյան և Ստ. Մալխասյան, Տիֆլիս, 1904, էջ 41։

² Սուրբգրական աղբյուրից քաղում կատարելու Փարպեցու այս օրինակը բարեխղճության ակնբեր վկայություն է. նա ձեռքի տակ ունի սաղմոսի **միս ևս թարգմանի** տարբերակը, որի հիմամբ էլ մեկնաբանում է թուն վկայությունը, բայց համեմատյալ դիմում բնագրին հարադատ մնալու համար թելում է և այդ հատվածը։ Այստեղից հետևում է, թե սուրբգրական հուշարձանների քննության-հրատարակության ժամանակ արանձնակի վստամությանը պիտի դիմել Փարպեցու քաղումներին։

Հետագա քննության համար կարևոր է նշել, թե **թարգման** տերմինի տակ հնդկական ինչ է հասկանում **թարգմանիչ**, թե **մեկնիչ**։ Աստվածաշնչում այդ բառը միշտ ձևով մեկ անգամ է գործածված (ՄՃՃ, ԽԲ, 23), և համապատասխանում է հուն. *ερμηνεύτης*, լատ. *interpretes*, վրաց. *თარგმანი*, *თარგმან* և, այնուամենայնիվ, դժվար է զատորշել նրանց **թարգմանիչ** և **մեկնիչ** իմաստները։ Վերստին դիմելով Փարպեցուն, պիտի նկատենք, որ **միս ևս թարգման** ասելով պատմիչը նույնականորակում է տալիս իր թերած երկու տարբերակներին, իսկ դրանք քաղված են սաղմոսի թարգմանությունից և ոչ մեկնությունից։ Հետևաբար՝ ընդգրկված արտահայտությունը պիտի նշանակի «իսկ միսս թարգմանիչը», «իսկ մեկ այլ թարգմանիչ»³։ Կորյունը **թարգման** է կոչում Ջաղային. «Կտեալ զայր մի **թարգման** վրացերեն լեզուին»⁴։

Այս ամենից հետևում է, թե Ղազար Փարպեցին ճանաչել ու բաղադրել է սաղմոսի տարբերակները երկու թարգմանություն։ Սույն պարագան հայադիտության մեջ աննկատ չի մնացել։ Ի թիվս մինչև գրքի գլուխը սաղմոսները գեթ թերանցի

³ **Թարգման** բառը պատմիչը երկրորդ անգամ գործածում է իր թղթում՝ վաղամեկի Ժուրայիկի հանդեպ եղած ընդդիմությունը մատնացողովիս. «Ահա՛, ո՛ր գալ միս ևս թարգմանն» (նույն տեղում, էջ 202)։ Այստեղ էլ բառը միևնույն կապակցության մեջ է հանդես գալիս («միս ևս թարգման») և անշուշտ **թարգմանիչ** է նշանակում։ Ժուրայիկին Սամակն ու Մաշտոցն էին ուղարկել թարգմանության արվեստի մեջ հմտանալու, և աղբյուրները նրան են հատկացնում Բարսեղ Կեսարացու երկու կանոնախմբերի թարգմանությունը։ Մանրամասն տես **Կ. Մ. Մուրադյան**, Բարսեղ Կեսարացին և նրա «Աղբյուրան» հայ մատենագրության մեջ, Երևան, 1976, էջ 171—174։

⁴ Կորին, Վարդ Մաշտոցի, Երևան, 1941, էջ 62։

թարգմանած լինելու կովանների՝ բանասերները հիշատակում են և այս փաստը: Սակայն նրանք ի մասնավորի բնագրագիտական քննության չեն ենթարկել ժԶ սաղմոսի համապատասխան տունը, մինչդեռ այլապես խմբագրությունների համեմատությունից այլ իրողություն է բացահայտվում: Նախ կատարենք այդ հանդիպարումը.

Biblia Hebraica (Ps. XVII, 14)

...wəšəpōnəka təmalle, biṣnam jīšbə'ō bānīm
wəhinnihā jitrām lə'ōialehem

[Միք. Չամչյանի թարգմանությամբ՝ «չազեպ (են) որդիք (նոցա) և թողին զմնացուածս իրեանց՝ սղայոց իրեանց»:]

Pešitta (Ps. XVII, 14)

...nesb'ōn bnāye wa-nēsbqum šarka la-bnayhōn
[յազենան որդիք և թողուն զմնացուածս որդոց իրեանց]

Septuaginta (Ps. XVI, 14)

...ἐξορτάσθησαν οἱ αὐτοὶ (var. οὐτοὶ—BS) καὶ ἀφ᾽ ἑαυτῶν κατέλοιπα τοῖς νεφείοις αὐτῶν

Vulgata (Ps. XVI, 14)

..saturati sunt filiis et dimiserunt reliquias suas parvulis suis

Վրացական խմբագրություն (Մ. Ծանիձեի հրատ.)

..განძლეს ჰამადოთა მათითა, დაუტოვეს ნეშტო მათი ყრმათა მათ

Բ խմբ. գանձլես] գանձլեմ

Գ խմբ. մատითա] და

მათი]

Հայկական խմբագրություն (1805 թ.)

...յազեցան կերակրովք և թողին զմնացուածս տղայոց իրեանց:

Առկույված խմբագրությունների մեջ հայկականն ու վրացականն ունեն մույնական ընթերցում և հավասարապես տարբերվում են միմյանցից:

Այդ հետաքննումը անկարելի է բացատրել հայերենում և վարդերենում գրչական, բառապատճենման, մասնակության կամ մեկ այլ ճանապարհով տեղի ունեցած խաթարում-աղմատումով և եթե այդպիսին լինե՞ր չէր վրիպի այդ խմբագրությունները անկախաբար ու զատ-զատ հունական մաթսորինակի հետ համեմատող-սրբագրողների ուշադրությունից: Հիշողի, կերակրող նշանակությամբ հունարենում ու-

նենք քրթառ. (ՀԸ, 2), (հմտ. ման քրթառ, որ հայ թարգմանիչը շփոթել է քրթառ բառի հետ և թարգմանել գէշ: Որդիք և կերակրող տարբերությունները ամփոփական որևէ աղերս չունեն, ուստի մորից պիտի վերադառնալ Փարսեցու վկայությամբ: Նրա հիշատակած «միս ևս թարգմանի» խոզենեալ (ուղղ. խոզենի, իմա՝ խոզի միս, խոզակերպ) ընթերցումը կա և հունական ձեռագրերում: 862 թ. սաղմոսի մեզ հետաքրքրող արտահայտությունը Պ. Ուսպենսկին այսպես է ծանոթագրել. «ἐξορτάσθησαν αὐτοὶ. Այսպես է կարդացվում Աթոսում իմ տեսած լավագույն ձեռագրերում»: Պարզ է այլևս, թե խոզենեալ ընթերցումը գալիս է հունարեն մաթսորինակից, ուր αὐτοὶ է եղել:

Այս պարագան ինքնին նշանակում է, թե հայկական ու վրացական կանոնական խմբագրությունների կերակրող-ձեռագրող հունարեն մաթսորինակից անկախ է գոյացել, ինչպես որ անկախ է և այլ լեզուներով եղած խմբագրություններից¹⁰: Ժամանակագրական առումով մաթսորականը, ամբողջ, միս ևս թարգմանի ընձեռած խոզենեալ-ն է, քանի որ հետագա սրբագրություն-խմբագրությունների ժամանակ «ախորժալու» դարձնելու համար ա՛յն կարող էր կերակրող դառնալ, և ոչ կերակրող խոզենի: Ի դեպ, խոզենի տերմինը մեկ անգամ էլ գործածված է «Մարգարեության Նախապ» գրքում (ԿԵ, 4) — «որք ուտեին զխոզենին և զարգանակ զոհիցն». ընդգծված հատվածի դիմաց հունարենում ունենք՝ οἱ ἐσθόντες κρέα ψεία (var. κρέα ψ(ε)α—

⁷ Տես Լ. Հ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., «Էջմիածին», 1975, № 1, էջ 45—46: Միայն նկատել է Մովսես Խորենացին և իր քաղած հատվածում ավելացրել է կերակրող, բայց՝ «հավատարիմ մնալով Աստվածաշնչի հայերեն թարգմանության հեղինակությանը, պահպանել է նաև գէշ բառը» (անդ):

⁸ Միք. Չամչյանը բնագրի ստուգությանը չի անդրադարձել, ուստի մեկնության ժամանակ ելել է կերակրող ընթերցումից (նշվ. աշխ., հատ. Բ. Վենետիկ, 1815, էջ 497):

⁹ «Труды Киевской духовной академии», 1869, апрель, стр. 55; հմտ. Յեղեղա Յանոյե, Գեղեղե-տա Գեղեղե ժեղել յորտալու տարգմանք, տե., 1979, թ. 212.

Սաղմոսների հայերեն թարգմանությունը ասորական և հունական խմբագրությունների համադրությամբ ունի մասնավորապես՝ պրոֆ. Ա. Բաումշտարկի հետևյալից՝ աշխատության մեջ՝ մեզ հետաքրքրող արտահայտությանը վերաբերող որևէ դիտարկում չգտանք (տես Ա. Baumstark, Der armenische Psaltertext, sein Verhältnis zum syrischen der Pešitta und seine Bedeutung für die LXX-Forschung, «Oriens Christianus», Neue serie, Bd. 12—14, Leipzig, 1925, S. 180—213; Dritte Serie, Bd. 1, 1927, S. 146—169, Bd. 2, S. 319—333.

¹⁰ Զեքիա քառի ստուգաբանական քննությունը տես օգ. օնեոնցի, Զեքիա և Զեքիա ընթերցումների օնեոնցի, «Թրոն», տե., 1967, թ. 165—170.

⁵ Հարցին վերաբերող գրականության մասինն ազդեցությունը, փաստարկներն ու նրանց դեմ եղած առարկությունները տես Լ. Հ. Տեր-Պետրոսյան, Սաղմոսների հայերեն թարգմանությունը և նրա մաթսորինակը, «Էջմիածին», 1975, № 9, էջ 55—56:

⁶ Մեկնություն Սաղմոսաց, յօրինակ ի Ռ. Միքայել վարդ. Չամչյան, Վենետիկ, 1828; հատ. Ա, էջ 185:

SAC) չբաշխեցին—BL, չբաշխեցին—Q), որ նշանակում է խողի միս (=խողեմի): Հայերեն նախօրինակի կնիքը պահանջ է օգտագործելու մասնագիտացված մարմիններից առկա է բաղադրանքային ձևերը, իսկ Սինգի օրինակում ըստ մոմարների է՝ բաղադրանքային ձևերը ձևերը ձևերը¹¹:

Տրամաբանորեն, ինքսրեն, արդարացի է ենթադրել, թե շուրջ հարյուր տարի հաջոց պաշտոնական եկեղեցին կոծվարանար ժամերգություն կարգավորել՝ առանց ապօգնակների այսպես կոչված բանավոր թարգմանության¹²։ Թվում է, թե Փոքր Հայքի հովվապետներից պատմաբան Ռաֆայել Ռաֆայելի իմացությունը ևս թելադրված պիտի լիներ արարողության ժամանակ այդ լեզվին դիմելու անհրաժեշտությունից¹³։ Բայց եթե գեթ ապօգնակությունը հայերեն լիներ, ապա Խորենացին ու Փարպեցին չէին խոսի հունարեն կամ ասորերեն կատարվող արարողության մասին¹⁴։ Համենայն դեպս՝ Փարպեցու միջառական սուրբեր թարգմանությունը, ինչպես համոզվեցինք, բանավոր աղբյուրից չի գալիս։ Հենց այս պատճառ, որ V դարի վերջերին, երբ Փարպեցու «Դատմություն» էր շարադրվում, ընդհանուր ճանաչում գտած խմբագրության կողքին կար ու գոյատևում էր և այլ թարգմանություն, ինքնին վկայում է, թե գործ ունենք գրավոր ավանդույթի հետ։ Այս դրույթը առավել հաստատում է դատումս վրաց մատենագրության մեջ պահպանված փաստերի ու հաղորդումների օգնությամբ։ Ինչպես արդեն տեսանք, վրաց հմնագույն (մախատուրբաբեցյան) խմբագրություններն ու նույնիսկ սուրբաբեցյանը (XI դ.) պահպանել են հայերենի **կերակուր** ըմբեղցումը (Հմբեղց) որը, անշուշտ, սկզբնապես հայերենի միջնորդավորմամբ թարգմանված լինելու վկայություն է¹⁵։ Գևորգի Սուրբաբեցին, վրացական պրոտոմոլոգատան (B խմբ.) հունարենին բաղդատախիս, ի նորո խմբագրել կամ թարգմանել է բնագիրը՝ նույնա-

վազանցելով Յոթանամիցին, բայց և, վրիպմամբ թե վրաց գրավոր ալֆանդուլին տուրք տալով, ստանց նշգրտման-սրբագրման թուղև կերակուր-Յամեղ-ն: Սակայն անկա ABC խմբադպրոցյունները անկախ վրացերեն լեզվով գոյություն է ունեցել և մի այնպիսի թարգմանություն խմբագրություն, որ Յամեղ-ի (կերակուր) փոխարեն եղել է լուհեթև (խոզենի): Սաղմունքի հնագույն վրացական թարգմանության տեքստներին բնագրական առանձնամատկությունների պատճառավորային նշանակության ուսումնասիրության կապակցությամբ ակադ. Կ. Կեկելիձեն անդրադարձել է և Օ-Չ սաղմունի մեջ գրադիցնող տանք և միջնադարյան ուշադրով մեկնություն հրապարակել¹⁶: Պարզվում է, որ միշտը ընթերցումը գրավել է վրաց մեկնիչների ուշադրությունը, որոնք և առաջադրել են բնագրագիտական խիստ պատճառաբանված լուծում: 1035 թ. Շառերեղում ընդօրինակված վրացական A—135 ձեռագրում¹⁷, հարսել Կեսարացու «Սաղմոսաց մեկնությունից» հետո ընդօրինակված է վրաց Անանուն մեկնիչի գործը, որ մեկնաբանված է և արծարծվող տունը (էջ 217v): Այստեղ սաղմունի բնագիրը տրված է նախատորքաբեցյան խմբագրությամբ և ապա հետևում է բացատրությունը. «Ոչ ինչպես ոմանք են կարծում, թե սաղմունեղուն այստեղ խոզենի ուտելիքն է միշտապես..., այլ որդու մասին է խոսում. պարզորոշ այդպես գրված գտանք և երբայերևում, քանի որ երբայական սաղմոսում բանին բառն է գրված, որ որդի է թարգմանվում»: Այնուհետև մեկնիչը տալիս է բնագրագիտական իր բացատրությունը. «Քննարեն լեզվում խոզ անունը [հնչում է այնպես], ինչպես ճարդս որդի ասի. չփոքում է ակնկալելի, քանի որ իռզին լիոն են ասում, և երբ մեկը [ուզենա] որդիք ասել՝ դարձյալ լիոն [պիտի] ասի: Այդ պատճառով էլ թե հայոց, թե վրաց բազում թարգմաններից ոմանք խոզենի են ասել, ոմանց էլ այդ բառն իբրև անգոսնելի է թվացել և, փոխարինող բառ (տառացի՝ վերաբառ—Պ. Մ.) նկատելով (բառացի՝ ձայնել), կերակուր են թարգմանել և՛ հայոց մեջ, և՛ վրաց: Իսկ մենք Աստծու ողորմածությամբ տուրք Նրուստոկին եկեղեցում արեղա եղած, չորս տարողական գրքով Սաղմունքը մեկնած Խոսիքու Նրանելու մեկնություն գրքի մեջ այնպիսի տեսքով գտանք, ինչպես որ գրեցինք երկրորդածությամբ»¹⁸: Թե ո՞վ է եղել և ե՞րբ է ապրել այս մեկնության վրացի հեղինակը՝ հայտնի չէ, բայց արժանելույնը պիտի հատուցել նրա արարելու կարողությամբ և բանասիրական հմտությամբ: Փարպեցու տեղեկությունից այլևս գիտենք, որ մեզանում նման թարգմանություն իրոք եղել է: Անանուն մեկնիչի խոսքերից պարզ երևում է, որ խոզենի բառը

¹¹ Տե՛ս նաև: Զեքելյան, Գրիգորյան ցանկ ընկերություն, տ՛ի 1973, ցց. 463, Սպասեյի էր, իս Սաղմոսի «խղճե-
մին» «կերակուր» սրբագրուղ ճույն ճկատատումնե-
յով ալստեղ էլ ախտի փոփոխեր, բայց խղճի միս
և զոհի արգանակ ուտելը կարգված է «ամենայն
անժոյք մոցա պղծելու էին» կերպարացութեան միտ,
ուստի «մղժամանելու» անճրաձեւութիւնը չի եղել:

¹² Գրութի պատմատարանությունն ու շարադրանք տես Լ. Գ. Զարրինարյան, Մատենադարան հայկական թարգմանություննց նախնաց, Վենետիկ, 1859, էջ 216—217, հմմտ. Месроп Тер-Мовсесян, История перевода Библии на армянский язык, СПб., 1902, стр. 22—24; հմմտ. Н. К. Тагмизян, Теория музыки в древней Армении, Ереван, 1977, стр. 46—47.

¹³ Կ. Մ. Մուրադյան, *Գշվ. աշխ.*, էջ 110:

¹⁴ Հմմտ. Լ. Տեր-Պետրոսյան, *Աշխ.* աշխ., էջ 54:

¹⁵ Մ. Հանինեն վերջերս հիմնավորապես ապացուցեց, որ վրացական A և B տարրերակների նախօրինակը (արխետիպը) հայերենից է թարգմանված Ջ. Չանոյի նշվ. աշխ., էջ 153—155):

¹⁸ Գ. Կարամանյ, *Մեր ժողովրդի մշակութային կյանքը*, Լ. Երևան, Գ. III, տ. II, 1955, թ. 125—126.

¹⁷ Նկարագրությունը տես «Ժողովրդական հեղինակություն», Ա—2, տ. 1976, թ. 154—158.

¹⁸ Գ. ՅԱՐՈՍԼԱՎՍԿԻ, Գշվ. աշխ., էջ 126:

գործածող թարգմանությունն գոյություն է ունեցել և վրաց մատենագրության մեջ: Համեմատելով «...թե հայոց, թե վրաց բազում թարգմաններից ուսմանը խոզենի են անել» տեղեկությունը ուղղակիորեն աղղ է ապացուցում¹⁹: Այդ թարգմանության կամ խմբագրության արձագանքը դիտելի է նույնիսկ XI դարի երկրորդ կեսի «Քաղվածո մեկնություն» կոչվող երկում: Նրա հեղինակը մեկնելիք հատվածը քաղում է դարձյալ G խմբագրությունից, բայց անհրաժեշտ է նկատում մեկնել ճանճել լորժոջան («յագեցան խոզենեա») արտահայտությունը: Նա, ինչպես երևում է, ծանոթ չէ վրացական նախորդ մեկնությունը, ուստի փորձում է պատճառաբանել միայն, թե խոզենին հրեաների համար անսուրբ է և լորժոջան-ի տակ (խոզենի) անսրբությանը հագեցնալ պիտի հասկանալ («լորժոջան օձ օրձձեղծեա ճանճեա հոն: ճանճել օրձձեղծեա...») ²⁰:

Այս վկայությունները կարևոր մի հարց են առաջադրում՝ ե՞րբ պիտի թարգմանված լինեք սաղմոսների վրացական այն խմբագրությունը, ուր, Փարսեցու քաղումին համապատասխան, կերակրի փոխարեն խոզենի է եղել, որը և հետագա մեկնություն-բացատրությունների առիթ է դարձել: Խնդրի ժամանակագրությունը ստուգագրելու համար դարձյալ պիտի դիմենք Աստվածաշնչի, մասնավորապես՝ սաղմոսների, հայերեն թարգմանության պատմությանը: Կորյունի և Խորենացու տեղեկությունների, ինչպես նաև աստվածաշնչական տարբեր գրքերի մասնագիտական քննության շնորհիվ այժմ ճշգրտված է, որ հայոց այսօրվա ընկալյալ բնագիրը Սահակի ձեռքով ու գլխավորությամբ վերջնական թարգմանության-խմբագրման է ենթարկվել Եփեսոսի տիեզերական ժողովից հետո (431 թ.), բայց մինչև Սահակի մահը (439) ²¹: Այդ թվականներից հետո հայերենի միջնորդավորմամբ կատարված վրացական թարգմանությունը այլևս «խոզենի»-ի փոխարեն կերակրի պիտի ունենար, ինչպես որ իրոք էլ ունեն գիտությանը հայտնի հնագույն վրացական խմբագրությունները: Փարսեցու հիշատակած «միս ևս թարգմանի» խոզենեալը

¹⁹ Գեորգի Սուրբաբեցու խմբագրությունը մեկնության բնագիր ծառայեցնող Եփեսոս Կրտսերը անհրաժեշտ է նկատել ճանճեա-ն փոխարինել Ձեզոջ ձեզո-ով («որդոցով») (տես Ց: Ձեզոջ ձեզ. աշխ., էջ 210): Այս դեպքում ճշգրտումը կատարված է ըստ Յոթանասնիցի ընթերցման, ելնելով Աթանասի ու Կյուրելի մեկնություններից:

²⁰ Բնագիրը տես Ե. Գեզե, ձեզ. աշխ., էջ 125: Ա—14 ձեռագրից կատարված այս քաղումը (էջ 21r) Կ. Կենելիձեն վերագրել է Եփեսոս Կրտսերին, մինչդեռ, ըստ Մ. Ծանիձեի, «Քաղվածո մեկնությունից» է (ձեզ. աշխ., էջ 209, 212):

²¹ Աղբյուրներն ու գրականությունը տես Հ. Մ. Անասյան, Հայկական մատենագրություն, Բ, էջ 311—358:

վերաբերում է նախնիներուսյան, «յանկարծազիտ փութանակի» (Կորյուն) թարգմանությանը, որ կատարվել էր գրեթե գլուխից հետո (405/6 թ.), բայց մինչև Եփեսոսի ժողովը, մինչև «զմի անգամ թարգմանեալն փութանակի» (Խորենացի) դարձյալ թարգմանելը: Այստեղից հետևում է, թե սաղմոսների առաջին վրացերեն թարգմանությունը, ուր «խոզենի» ընթերցում է եղել, կատարված պիտի լինեք նախնիներուսյան հայերեն խմբագրության վրայից՝ մինչև սահակյան կրկին թարգմանությունը: Դրանից հետո վրացերեն թարգմանության խմբագրման երկրորդ շրջանն էր սկսվելու՝ դարձյալ հայերենի միջնորդավորմամբ, բայց արդեն Յոթանասնիցին համապատասխանեցված խմբագրությանը: Ինչ խոսք, հայկական և վրացական այս նախնական թարգմանությունները, նույնիսկ ընկալյալ բնագրի առկայության պայմաններում, դեռ երկուսը պիտի շարունակեին իրենց գոյությունը, մինչև որ եղած գրչագրերը աստիճանաբար հնամասին ու դուրս գալիս գործածությունից: Եվ հիշալի, այդ թարգմանությունը V դարի վերջերին կար Ղազար Փարսեցու ձեռքի տակ, բայց կար և ավելի ուշ՝ թե՛ Ամանուն վրաց մեկնիչի օրոք (VII—VIII դարեր) ²², երբ վերջինս փորձում էր բնագրագիտական բացատրություն տալ «խոզենի» ընթերցմանը, թե՛ XI դարի երկրորդ կեսին, երբ «Քաղվածո մեկնությունն» էր կազմվում: Թովմա Արծրունին ևս գիտե «զսաղմոսն զհին թարգմանեալսն վարդապետացն Հայոց, զոր համապազ ի քերան ունին» ²³:

Ի վերջո, «փութանակի» թարգմանության ասորական նախնական ունենալը և ԺԶ սաղմոսի մեզ հետաքրքրող տան խոզենի—լորժոջան ընթերցման հունաբանությունն ինքնուր իրողությունը հակասում են միմյանց: Մնում է ենթադրել, թե «փութանակին» բացատապես Պեշիտտայից չի բխում և կամ, եթե ասորական և հունական խմբագրությունների համադրական գործածությունը անկարելի նկատենք, այն ևս զերծ չի եղել ըստ հունական նախնականի սրբագրվելու հնարավորությունից: Վճռական եզրակացության համար մեր ունեցած այս օրինակը ամենինքն քավարար չէ, բայց և այլևս չկան աղբյուրներ, որոնցից հուսալիք նախնական թարգմանության մոտ տվյալներ քաղել: Թերևս հայերենով և վրացերենով գոյություն ունեցող մեկնությունների ուսումնասիրությունը պոպուսիք ընձեռի:

²² Դատելով հայկական և վրացական խմբագրությունները բաղդատությամբ գնահատելու և այդ կապակցությամբ երկմտանք ու վեճ չհարուցելու փաստից, կարելի է ենթադրել, թե ի դեմս Ամանուն մեկնիչի գործ ունենք եթե ոչ հայ-վրացական եկեղեցական միասնության շրջանի, ապա մշակութային մերձության շրջանից ոչ շատ ուշ ապրած մատենագրի հետ:

²³ Թովմա Արծրունի, Պատմություն տանն Արծրունեաց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 121:

**«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ
СВЯТОГО ЭЧМИАДЗИНСКОГО
ПЕРВОПРЕСТОЛА
(Январь 1980 г.)**

Январский номер журнала открывается Рождественским Посланием Его Святейшества, Верховного Патриарха и Католикоса Всех Армян Вазгена I (Прочитано 6-го января 1980 года в Эчмиадзинском Кафедральном соборе).

Поздравления по случаю Нового Года и Рождества (Обмен поздравлениями между Его Святейшеством Католикосом Вазгеном I и главами Сестер-Церквей, главами армянских исторических Престолов).

Новогодние поздравительные телеграммы.

Энциклики Верховного Патриарха—Католикоса Всех Армян Вазгена I.

а) в Своей энциклике за № 944, от 2 января Его Святейшество провозглашает создание Патриаршего Экзархата в Центральной Европе с местопребыванием в городе Вене. Этим же посланием духовный предводитель Вены, верховный архимандрит Доктор Месроп Григорян, назначается Патриаршим Экзархом Центральной Европы.

б) в Своей энциклике за № 1001, от 4 января Его Святейшество назначает бывшего заместителя Экзарха За-

падной Европы (в г. Лионе) епископа Давида Саакяна Патриаршим Экзархом Южной Америки.

в) энциклика № 1002, от 21 января гласит о присвоении архиепископского сана предводителю Австралийской армянской епархии епископу Гарегину Газанчяну.

Под заглавием «В Первопрестоле» сообщается:

а) о празднике Св. Стефания и рукоположении диаконов (С 24 по 25 декабря 1979 года в Армянской Апостольской Церкви с большим торжеством проходил праздник Св. Стефания Перво-мученика. По этому случаю, по ходатайству ректора Эчмиадзинской духовной академии архимандрита Григориса Бунятяна и по благословению Его Святейшества, шестеро студентов духовной академии были рукоположены главным Ключарем Первопрестола архиепископом Иосифом Сантурияном во диаконы);

б) о Новогодних празднествах в Св. Эчмиадзине;

в) о служении Божественной Литургии и чтении проповеди по случаю Рождества и Богоявления Господа нашего Иисуса Христа, Его Святейшеством, Святейшим Патриархом Вазгеном I (6 января 1980 г.);

г) новости из жизни Первопрестола.

В номере опубликована информация о визите Его Святейшества Иоанна-Павла II, Папы Римского Константинопольскому Вселенскому Патриарху Димитрию, а также армянскому патри-

арху Константинополя Шнорку Галустяну.

Под рубрикой «Экуменическая жизнь» публикуется:

а) о посещении делегаций Всемирного Совета Протестанских церквей Вселенскому Патриарху в Константинополь (26 июля 1979 г.);

б) о четвертой встрече богословской комиссии диалога между представителями православной и Старо-Католической церкви (Бонн, с 19 по 24 августа 1979 г.);

в) о богословском диалоге в Ленинградской дух. академии между богословами финских университетов и ЛДА (Ленинград, 28 сентября 1979 г.);

г) о восьмой сессии «Конференции Европейских церквей» (Крит (Греция) 18—25 сентября 1979 г.);

д) о второй встрече представителей церквей Социалистических стран с руководителями ВСЦ (Будапешт, 28—31 января 1980 г.).

В номере опубликованы материалы о работе международной комиссии ХМК на тему: «Наш мир, его проблемы и надежды» (Тбилиси, с 29 ноября по 4 декабря 1979 г.).

В рубрике религиозных чтений помещены:

а) новогодняя проповедь архимандрита Григориса Буннятына (произнесена в Кафедральном соборе 1 января 1980 г.);

б) агиография святых, чтимых Армянской церковью в январе месяце.

Гайк Амалян—Об авторе и времени перевода на армянский язык «Маккавейской книги» (продолжение следует).

Историко-культурное значение одного сообщения Лазаря Парбеци—под таким заглавием печатается статья П. Мурадяна о ранних переводах Псалтыря на армянский и грузинский языки.

“ETCHMIADZIN” OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN (January 1980)

The January 1980 issue of the “Etchmiadzin” journal opens up with the message of His Holiness the Catholicos of All Armenians Vasken I, on the occasion of Holy Christmas, the Miraculous Birth of our Lord Jesus Christ, spoken in the Cathedral of Holy Etchmiadzin, on 6th January 1980.

Congratulations on the occasion of Holy Christmas and New Year are exchanged between His Holiness the Catholicos and the leaders of sister churches and the hierarchic Sees of the Armenian Church.

New Year's Congradulatory cables.

His Holiness Vasken I's Encyclicals:

a) His Holiness the Catholicos with His 994th Encyclical, dated 2nd January 1980, establishes in Central Europe (namely Austria, Federal Republic of Germany and Sweden) an Apostolic Delegation, having as its centre Vienna.

With the same Encyclical His Holiness appoints as the Apostolic Delegate of Central Europe the pastor of Vienna—Right Reverend Dr. Mesrob Krikorian.

b) His Holiness the Catholicos with His 1001st Encyclical, dated 4th January 1980, appoints as the Apostolic Delegate of South America, the former Bishop of the Armenian Community in Lyon, his Grace David Sahagian.

c) His Holiness with His 1002nd Encyclical, dated 21st January 1980, grants the title of “Archbishop” to the Armenian Primate of Australia, his Grace Bishop Karekin Kazandjian.

Under the heading "In the Mother See," are included:

a) The commemoration of St. Steven's Day and the granting of deaconship.

On December 24-25 1979, the Armenian Apostolic Church commemorated the Day of St. Steven the Archdeacon and Protomartyr. On this occasion deaconship was granted to six students of the Theological Academy.

b) The celebration of the New Year in the Mother See.

c) Solemn Mass and Sermon by His Holiness the Catholicos of All Armenians Vasken the First, in the Cathedral of Holy Etchmiadzin, on the occasion of Holy Christmas and Our Lord's Baptism (6th January 1980).

d) News about life in the Mother See.

On 29-30 November 1979, His Holiness the Pope John-Paul II, visited the Greek Ecumenical Patriarch in Constantinople His Beatitude Dimitrios; and paid visit to the Armenian Patriarch His Beatitude Shnogh Kalousdian. Both articles describe these visits.

Under the heading "Ecumenical Life," is published:

a) The visit of the delegacy of the World Council of Reformed Churches to the Greek Ecumenical Patriarch in Constantinople (on 26th July 1979).

b) The 4th meeting of the Theological Commission of Dialogue between the Orthodox and the Old Catholic Church (in Bonn, on 19-24 August 1979).

c) Theological dialogue between the Theological Academy of Leningrad and the Finnish Universities' representatives (in Leningrad, on 28th September 1979).

d) The 8th Assembly of the "Conference of European Churches," (in Crete, on 18-25 October 1979).

e) The 2nd meeting of Eastern European socialist countries' Church Representatives with the leadership of the World Council of Churches (in Budapest, on 29-31 January 1980).

In this issue of the Journal is published the works of the International Commission of Christian Peace Conference on the theme: "Our World, its Problems and Hopes," (held in Tbilisi, on 29 October-4 December 1979).

In the Journal we have included the following Edifying Discourses:

a) The New Year's sermon of Reverend Gregory Bouniatian, delivered on 1st January 1980, in the Cathedral of Holy Etchmiadzin.

b) The brief biographies of Saints commemorated by the Armenian Apostolic Church (In the current issue only the biographies occurring in January are included).

"The problem of the authorship and date of the Armenian translation of the Books of Maccabees," by Dr. Haig Amalian (to be continued).

Under the title "The historical and cultural significance of a citation by Ghazar Parbetzi," Dr. Paruir M. Mouradian is speaking about the initial translations of the Book of Psalms in Armenian and Georgian.

„ETCHMIADZINE“
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE
D'ETCHMIADZINE
 (Janvier 1980)

Le numéro de janvier 1980 de la revue mensuelle „Etchmiadzine“ s'ouvre par le message de Sa Sainteté Vasken Ier prononcé le 6 janvier 1980 dans la cathédrale de sainte Etchmiadzine le jour de Noël, fête de la Nativité de notre Seigneur Jésus-Christ.

*
*
*

Echange de lettres de félicitation entre Sa Sainteté Vasken Ier et les Chefs des Eglises chrétiennes, la Hiérarchie de l'Eglise arménienne, à l'occasion des saintes fêtes de Noël et du Nouvel An.

*
*
*

Echange de lettres de félicitation à l'occasion de la fête du Nouvel An.

*
*
*

Encycliques de Sa Sainteté Vasken Ier:

a) Dans son Encyclique № 994 du 2 janvier 1980 Sa Sainteté établit une Délégation Apostolique pour les Arméniens de l'Europe Centrale (Autriche, République Fédérale d'Allemagne et Suède) ayant comme siège la ville de Vienne.

Dans la même Encyclique, le Révérend Père Dr. Mesrob Krikorian, pasteur des Arméniens de Vienne, est nommé délégué apostolique pour l'Europe Centrale.

b) Dans l'Encyclique № 1001 du 4 janvier 1980 de Sa Sainteté, Mgr. David Sahakian, évêque des Arméniens de Lyon, est nommé délégué apostolique des Arméniens de l'Amérique Latine.

c) Par son Encyclique № 1002 du 21 janvier 1980, Sa Sainteté a conféré le titre d'Archevêque à Mgr. Karékine Kazandjian, prélat des Arméniens d'Australie.

*
*
*

Sous la rubrique „Nouvelles du Saint-Siège“ sont publiées des informations concernant:

a) La célébration de la fête de saint Etienne et l'ordination de six nouveaux diacres, de l'Académie Théologique du Saint-Siège d'Etchmiadzine.

b) La célébration du Nouvel An au Saint-Siège.

c) La célébration de la sainte Messe dans la Cathédrale et l'homélie de Sa Sainteté à l'occasion de la fête de la Nativité et de l'Epiphanie de notre Seigneur Jésus-Christ (6 janvier 1980).

d) Brèves nouvelles de la vie du Saint-Siège.

*
*
*

Visite de Sa Sainteté le Pape Jean—Paul II à Constantinople (29—30 novembre).

Deux articles sont consacrés à la visite du Souverain Pontife à Sa Béatitude Dimitrios, Patriarche Oecuménique de Constantinople, et à Sa Béatitude Chenork Kaloustian, Patriarche des Arméniens de Constantinople.

*
*
*

Sous la rubrique „Vie oecuménique“, sont publiées des informations concernant:

a) La visite de la délégation du Conseil Mondial des Eglises Réformées au Patriarche Oecuménique de Constantinople (26 juillet 1979).

b) La quatrième rencontre à Bonn de la Commission Théologique du „Dialogue entre les Eglises orthodoxe et vieille catholique“ (19—24 août 1979).

c) Le dialogue théologique tenu à l'Académie Théologique de Leningrad entre les représentants des universités théologiques de Finlande et de Leningrad (28 septembre 1979).

d) La VIIIe Assemblée de la Conférence des Eglises Européennes à l'île de Crète (18—25 octobre 1979).

e) La deuxième rencontre à Budapest des représentants des Eglises des pays socialistes de l'Europe Orientale avec les dirigeants du Conseil Oecuménique des Eglises (28—31 janvier 1980).

Information sur les travaux de la Commission Internationale de la Conférence Chrétienne pour la Paix, rassemblée à Tbilissi sous le thème «Notre monde—ses problèmes et ses espoirs» (29 oct.—4 déc. 1979).

Sous la rubrique «Lectures religieuses» sont publiés:


a) Le sermon du Révérend Père Grigori Bouniatian prononcé le 1er janvier 1980 à l'occasion de la fête du Nouvel An.

b) Brèves biographies des Saints commémorés dans l'Eglise arménienne (dans le présent numéro sont publiées seulement les vies des saints que l'Eglise arménienne fête au mois de Janvier).

L'article du Dr. Halk Amalian sur le problème de l'auteur et de la période de la traduction des livres des Macchabées (à suivre).

Sous le titre «L'importance historique et culturelle d'un témoignage de Lazare de Parpi» est publié l'article du Dr. P. M. Mouradian sur les traductions primitives arménienne et géorgienne du Psautier.





ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայրապետական քարոզ Փրկչի Հրաշափառ Սուրբ Ծննդյան տոնի առթիվ Մայր տաճարում	3
Ամանորի և Փրկչի Հրաշափառ Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Կորին Սուրբ Օծույթուն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր Եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները	5
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ՝ ուղղված Հայաստանյայց Եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմակալ բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին	9
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական քարձրաստիճան անձնավորությունների միջև փոխանակված հեռագրեր Նոր տարվա առթիվ	11
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական Պատվիրակություն հաստատելու և հոգեշնորհ տ. Մեսրոպ ծայրագույն վարդապետ Գրիգորյանին Կենտրոնական Եվրոպայի հայոց Հայրապետական Պատվիրակ նշանակելու մասին	14
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը գերաշնորհ տ. Դավիթ եպիսկոպոս Սահակյանին Հարավային Ամերիկայի հայոց Հայրապետական Պատվիրակ նշանակելու մասին	17
ՎԵՀԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը տ. Գարեգին եպիսկոպոս Գազանձյանին արքայական արտոնի շնորհելու մասին	18
Հայրապետական գնահատանքի և օրհնության կոնդակներ	19


ՄԱՅՐ ԱԹՈՒՈՒՄ

Սուրբ Ստեփանոսի տոնը և սարկավազական ձեռնադրություն Մայր Աթոռում	21
Ամանորը Մայր Աթոռում	24
Սուրբ Ծննդյան հանդիսությունները Մայր Աթոռում	25
Հայ նշանավոր բանաստեղծ Գևորգ Էմինի ծննդյան 80-ամյակին նվիրված երեկո Մայր Աթոռում	26
Մամր լուրեր	26
Ի գիտություն	27

Կ. ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐԿԱՆ ԱԹՈՒՈՒՄ

Հորմի քահանայապետ Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապի այցելությունը Կ. Պոլսի Հայոց Պատրիարքական Աթոռին	28
ԼՈՒՐԵՐ ԲՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ	
Բարեփոխական Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի պատվիրակության այցը Կ. Պոլսի Հունաց Տիեզերական Պատրիարքին	29

Օրրոտորս և հին կարգիկ Եկեղեցիների միջև դիպրոցի ստատիստիկական համեմատության չորրորդ հանդիպումը	29
Աստվածաբանների համընդհանուր Լեհիցրատի հոգևոր ճանապարհում	30
Հոռմի Հովհաննես-Պողոս Բ Պապի անցկացումը Կ. Պոլիս	31
ԷԿՈՆՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ	
«Եկրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի» 8-րդ համաժողովը	32
Արևելյան Եկրոպայի սոցիալիստական երկրների Եկեղեցիների ներկայացուցիչների երկրորդ համընդհանուր Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ղեկավարության նիստ	33
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ	
Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի «Մեր աշխարհը, նրա խնդիրներն ու հույսերը» թեմայով միջազգային համընդհանուր աշխատանքները թրիլիսիում	35
ԳՐԻԳՈՐԻԱ ՎԱՐԳԱՊԵՏ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ—Ամանորյա քարոզ Մայր տաճարում	38
Հայ Եկեղեցու տոնելի սրբերի համառոտ կենսագրությունները	38
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ—ԲՆԱԳՐՆԵՐ	
Հ. ԱՍԱԾՅԱՆ—Մակարայեցվոց գրքի հայերեն թարգմանության ծանանակի և հեղինակի մասին	43
ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ—Կազար Փարպեցու մի տեղեկության պատմա-մշակութային նշանակությունը	54
«Эчмиадзин» официальный журнал Святого Эчмиадзинского Первопрестоло	58
«Etchmiadzin, official journal of Holy Etchmiadzin	59
«Etchmiadzine, organe officiel du Saint Siege d'Etchmiadzine	61



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋԵՄԻԱԾԻՆ

«ԷՋԵՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 16.01.1980 թ.: Ատորագրված է տպագրության 12.03.1980 թ.:

Տպագրական 4 մամուլ+1 ցերդիր, թուղթ 60×84¹/₂, պատվեր 48

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1980 թ.